~~1116.~~
117

532

ԳՐՈՑ ՈՒ ԲՐՈՑ

ԵՒ

ՍԱՍՈՒՆՑԻ ԳԱՒԻԹ

ԿԱՄ

ՄՀԷՐԻ ԴՈՒՌ

ԾՐԱԳՐԵԱՑ

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՕՏՈՒՆ ԳԱԲՈՒ ՃԱՏՏԷՍԻ 465

1874

91.99
Ս-98
Ա-1
17047

ՄՏՈՒԳՎԱԾԷ
1952 թ.

24038

ՆՈՒԷՐ

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ

ԱՌ

ՄԵԾ. ՄԱՐԿՈՍ ԷՖԷՆՏԻ

ԱՂԱԲԻԿԵԱՆ

5724

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՒՆԴԱՄԵՐՈՒՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Բարեկամ.

Մարդկային ընկերավարութեանց սովորութիւնն է, երբ հեռաւոր տեղէ մը գան, իրենց գտնուած երկրի բարիքներէն կամ հաղուագիւտ իրերէն ընծայ մի կը բերեն բարեկամին։ Հետեւելով այսմ, երբ Պօլիս եկայ այս անգամ ուզեցի ընծայ բերել Ձեզ իմ երկրէն։ Ի՞նչ։

Ի՞նչ կը գտնուէր հոն, ուր ես էի. հող և ջուր միայն, և հողով ու ջրով և եթ կեանք վարող Հայ ժողովուրդ։

Գրոց և ըրոց ծրար մ՝ընծայ բերի Ձեզ այն հողէն ու ջրէն, որ Հայաստանի անունը կը կրեն տակաւին, ժողովրդէ մը՝ որ սերունդ և անուն Հայութեան ունին։ Այս հողն և ժողովուրդ, կամ այսպէս ըսեմք, Հայաստանն ու Հայ, որ հազար անգամ խորամանկութեան ու բռնաւորութեան փորձեր անցուցեր են, փորձեր՝ խլելու այս ազգի արմատը այդ արտէն, կամ փոխելու այն հողի յատկութիւնը, որ այլ եւս չբուսցընէ զՀայ, և չերեւի Հայութեան նշոյլ մը։ Բայց Հայերը մանգաղով հնձուած ժամանակ՝

սերմերը թափեր են փոշիներուն մէջ, արմատէն խլուած ժամանակ՝ զեղ մը թողուցեր են քարի մը տակ, ձորի մը մէջ, և նորէն բուսեր, ծլեր, արմատ ձգեր, ոստ արձակեր, ծաղկեր ու պտղաբերեր են անդրէն։ Անկարելի է գտնել աշխարհ մը և ազգ մը, որ համեմատուի Հայուն և իւր երկրին. որ այնքան աւեր, մահ, սուր, ուրացութիւն, արիւն, գերութիւն կրած լինի, ու նորէն ցայսօր ապրի։

Իւր քաղաքականն ու կրօնականը, իւր նիւթականն ու հոգեկանը առհասարակ կողոպտուած. գանձն ու զէնքը առնելէն զկնի, մարդն ու իւր բնակարանը, տաճարներու քարերը, և լեզուն ու մագաղաթներն անգամ գերի գնացած են, սարկուեան ենթարկուած են։ Բայց մեր երկրի հողն ու ջուրը, օդն ու եթերքը օծուած են հրեղէն լեզուով, հրեղէն հոգւով, որք ո՛չ միայն վերաստեղծեր են զՀայեր, այլ և վերապատմեր են հետագայից՝ Հայաստանի նահապետաց, դիւցազանց, թագաւորաց և առաքինեաց անուններ ու գործերը։ Այս լեռները, հովիտները, ձորերը, գետերը, ջէնները, աւերները, հողմերը, աստղերը, ամենքն

ալ խորհրդաւոր անուն մը ունեցած են. և այդ ամեն մէկ անունը կը պարունակէ իւր մէջ անձի մը կամ անցքի մը պատմութիւն, թէ առասպել հանարուի այն առ այժմ և թէ իրական, և այսպիսեաց շարունակութիւնը՝ մագաղաթներէն աւելի տոկուն և անջինջ մատեան մը շարունակած է, այն է բնակչաց բերանացի աւանդութիւնք, կամ վէպք և զրոյցք։

—Ասոնց մէկ նշմարն է իմ ընծայս։

Միտքս այն չէ որ ընդարձակեմ տեսութիւնս այս ընդարձակ և ցանկալի խնդրոյն վրայ, և ոչ քրքրել կ'ուզեմ հնախօսութեանց թերթերն ու միտքերը։ Ոչ Վ. Հ. Ղ. Ալիշանեանի Ց-ՇԷՆ ունիմ, ոչ Տ. Ս. Երեմիա Եպիսկոպոսի Հայրենա-էր-ՐԻ-ՆԸ, և ոչ ասոնց նմանները։ Ասոնք արդարեւ ՈՒՇ և ԷՈՒՆԴ ունեցող անձանց գործքեր են։

Ես իբրեւ մեղու ապրած ու աշխատած եմ. դիս փեթակի մէջ կը պահէին և դրսէն դուռը կը ծեփէին. իմ օրերու մեծ մասը անլուսատես և փականքի տակ անցուցեր եմ. բայց երբ բաց գտեր եմ դուռը, փութացեր եմ ծաղիկներուն վազել. մասիկ մասիկ անոնցմէ առնուլ, թուփէ թուփ թռչտելով,

և հաւաքածներէս շատը՝ քամիին և պի-
ծակներուն դէմ պատահելով, կորսընդ-
ցուցեր եմ. ահա ինչ որ մնացած էր
բերանս, կը ձօնեմ ազգիս բանասի-
րաց, ձեր ձեռքով մատուցանելով զայն,
ո՛վ իմ բարեկամ։

Ընծայիս վերջին մասը, որ է ԴԱՒԻԹ ՍԱ-
ՍՈՒՆՑԻՆ կամ ՄՀԷՐԻ ԴՈՒՌԸ առանձին
հրատարակելու մտադիր էի։ Գրիչ ձեռքս
առի անոր իրրեւ յառաջաբանութիւն
մը գրելու. միտքս զանազան յիշատա-
կութիւններ եկան։ Թող տուի գրիչս
մտքիս հոսանքին առջեւը, բայց միշտ
ձգելով և կարճել ուզելով, շարունա-
կեցի, թէպէտ առանց յօժարութեան
կը գրէի։ Ընկերս, Պ. Ս. Տ. Ս. որ բա-
նասէր և ուսեալ հայրենակից ալնիւ ե-
րիտասարդներէն մինն է, և քաղցր ճա-
շակ ունի հայրենեաց պատկերներ և հը-
նութիւնները օրինակելու, դիպեցաւ գը-
րելուս. և իմ թագուցանելուս հակա-
ռակ՝ կորզեց ձեռքէս. ընթերցաւ, և
զմայլումը ցոյց տուաւ, հարկադրելով որ
չյապաւեմ այդ գրածներս, այլ ընդ հա-
կառակն աւելի ընդարձակեմ։ Ես նոյնը
թողուցի. ոչ թէ իրօք արժէք մը տալու
համար, այլ նոյն ընկերիս պատուոյն համար

միայն հաւանած եմ տալ հրատարակութեան այս գրածներս, որք բոլորովին անարուեստ, անդաստակարգ լեզուով, մասն մասին չյարակցող նիւթեր են։ Թողի այնպէս, առանց 'ի գործ դնելու անոնց մէջ ձեւք և պերճութիւնք բառից և բանից. առանց Հոմերական և Վիրգիլիական ճարտար հիւսուածոց և պաճուճանքներու. և առանց նոյն իսկ Հայոց պատմութեանց և բանաստեղծութեանց զարդն ու նմանութիւնը անոնց տալու. այլ մերկ, պարզ, և ինչպէս գըտած ու ըմբռնած էի, նոյն վիճակով ներկայացուցի։ Մտածելով թէ փայտերը, քարերը և ամենայն ակունք ու այլ նիւթերը նախ քան զարուեստաւորել՝ իրենց բնական բոյսին և կազմին մէջ թէպէտ անվայելուչ և անշնորհք երեւոյթ մը ունին, բայց արուեստաւորք զանոնք թանդ կը դնեն. և ինչո՞ւ ամեն արհեստական նիւթը իրեն նախնական նը պատրաստողն ու վաճառողն ունի, ինչո՞ւ գրարուեստն ալ չունենայ։ Թէպէտ ժամանակէ մը հետէ կը նշմարենք առաւել Ռուսաստանի Հայ բանասիրաց մէջ ծաղկեալ այս ճաշակը, ուր ժողովրդական կեանքէն նկարագիր

կ՝ընեն. Հայաստանի տեղագրութիւնք, ռամկական երգերը և զանազան ծէսերը, վէպերը, առածները, կը տպագրեն։ Ահա այս խորհրդով իմ երկրէս իբրեւ ընծայ այս գրուածքս կը նուիրեմ, զոր ընտրեցի. ոչ որպէս զի այսու ես պատիւ մը կամ անուն մը ձեռք բերեմ, այլ գիտելով թէ դուք ունիք ճաշակ այսպիսի պտուղներու, զորս քաղած եմ հայրենի մրգաստանէն այն ձեռներով, որոյ մատերը ձեղնէ քաջալերուած եղեր են գրիչը շարժելու. և ահա բարի լուսոյ առաւօտ մը կը հանդիպիմ Ձեզ՝ փոխարինել ողջունիւս հանդերձ։

1874 Սեպ. 3 ԾՐԱԳՐՈՂ

Կ. Պոլիս Սրուանձտեանց

Գ. Վ.

ԻԲՐԵՒ ՆԱԽԵՐԳԱՆՔ

ՄԻ ՄԱՍՆ

Մշեցւոց Վրայ ընդհանուր պետութեան

ԳՐԱԾԻՍ

(Մանզումէի միջոցաւ 1869ին հրատարակուած։)

• • • Մամիկոնեանք դեռ Մշոյ աշխարհին տէր չեղած, այս աշխարհի զաւակը սրտի քաջութեան և ազատասիրութեան մէջ նշանաւոր էր։ Ես կ'ըսեմ՝ Մամիկոնեանք եկան այս աշխարհին մէջ և այս աշխարհի բնակիչներով քաջութեան անունը միշտ ժառանգեցին, քան թէ զայն իրենց հետ բերին ու ասոնց տուին։ Կրօնասիրութիւնն ալ սեպհական ճիրք մ'էր այս տեղի Հայոց, թէ կռապաշտութեան մէջ և թէ ճշմարիտ Աստուածպաշտութեան մէջ, և զայս կ'ապացուցանէ թէ՝ քուրմերու պատերազմը Տըրդատայ և Լուսաւորչի դէմ, և թէ՝ Վարդանայ, Վահանայ, Մուշեղի, դայլ Վահանին և անոր կորեանց նահատակութիւնները՝ Պարսից մոգակրօնութեան դէմ։

Մշոյ հայերը պէտք էր քաջ լինէին նայելով իրենց հայրենեաց դիրքին։ Այն ամէհի բարձրաբերձ լեռները՝ մեծութիւն մը կ՚ազդէին անոնց սրտին. անտառներով մացառներով զարդարուած սարերու դաշտաթներ և ծոցերը, նոյնպէս և շամբերը, որոց մէջ լեցուն գազաններ են, զիրենք կ՚ստիպէին զէնքի վարժուիլ թէ՛ որսալու համար և թէ՛ պաշտպանուելու համար։ Այս ընդարձակ դաշտը, և այն մեծատարած երկինքը վեհութիւն և վսեմութիւն կ՚ազդէին անոնց հոգւոյն, և այն պատուական կլիմայն արդէն զօրաւոր և յաղթանդամ կը կազմէր անոնց իրանները։

Ջուրերը բոլորն ալ գետեր են, որ չորս կողմի լեռներէն սուր ընթացքով և գոռուն գոչուն ձայնով կը վազեն կը թափին Եփրատին ծոցը. և թէպէտ Մեղրագետն ու Եփրատ անձայն կ՚ընթանան, բայց այնպէ՛ս արագ, և այնպէ՛ս ահարկու և լայնածաւալ պտոյտներով ու հոսանքներով կ՚անցնին, որ կարծես ահեղ թագաւոր մի է Եփրատ և անոր սպարապետն է Մեղրագետը. որք ջրային զօրաց մեծ բանակ մը առած՝ գաւառները տիրելով կը վարեն կը դի-

մեն 'ի կռիւ ուրիշ տիրապետաց հետ։ Այսպիսի երկիր մը՝ որքան իւր բնակչաց նպաստաւորիչ է, այնքան ալ իւր մերձաւորաց և ծանօթից նախանձը կը գըրգռէ, և այս պատճառաւ գրեթէ շարունակ կռիւի մէջ ծնած ու մեծցած ըլլալով, մահուանէ չվախցող մարդիկ էին Մշեցիք։

Այս կարգի մարդիկ եղած են նաեւ այն ինքնագլուխ Պէյերը, որ կը տիրէին երբեմն Մշոյ երկրին. և միեւնոյն կերպ քաջութիւն կը գործեն եղեր թէ՛ իրենք և թէ՛ իրենց ձեռքի տակ եղած Հայերն ու Քուրդերը։

Մշոյ աշխարհ մի է եղեր բանաստեղծներով, երգասացներով, բաղմաթիւ աշուղներու տեղ է եղեր այս երկիրը. և այս բնական հետեւութիւն է այն քաջաց և քաջագործութեանց, որոց դիւցազնագործութիւնները կը դիւցաբանէին, և անոնց թանկագին մահը պէսպէս երգերով կ'եղերերգէին։

Մշոյ այն գեղեցիկ հորիզոնը աչք ձըգողին սիրտը ինքնին կը թրթռայ, արիւնը կ'եռայ և հոգին կը բարձրանայ։

Բայց այսօր այս նշանները աղդային չեն. Մշոյ քաջերը Քուրդերն են, և բո-

լոր երգեր ու խաղերն ալ Քրդերէն լեզուաւ են։ Մեր ըրած դիտողութիւնն ընդհանրապէս է. 'Ի հարկէ մասնաւորները պակաս չեն, ու կը տեսնուին Մշոյ ազգայնոց մէջ։

. . . . . .

Կարող էին արդի Հայերն ալ առաքինի և նշանաւոր մարդիկ հանդիսանալ, քանի որ երկիրը նոյն դիրքն ունի և նոյն ազդումը կ'ազդէ բնակչաց։ Հայո՛ց մանաւանդ կ'ըսեմ, որոց չորս կողմը նախնեաց գերեզմաններ են։ Տեսնաս ձորի մը մէջ բոյլ մի ծառ և աղբիւր մը. աւերակ մը հոն։ Գերեզման մը այս բլուրի վրայ։ Խաչքար մը այն ինչ տեղ։ Ամեն տեղերն ալ ուստի կ'երթայ Մշոյ ժողովուրդ, առանց գիտնալու թէ ի՞նչ կայ այն տեղ։ Բայց մտածողին խորհիլ կու տան, թէ այն տեղերը՝ կամ մեծ յիշատակ մ'է կատարուած, կամ մեծ նահատակ մ'է ինկած, կամ հրաշք մ'է տեսնուած։ Գեղեր և վայրերը, որոց կոչումն ու անունը մէկ մէկ պատմութիւն են նախնեաց գործոց։ Տաճարներու և բերդերու աւերակները, հին եկեղեցիները, որոց մէջ նախնեաց անուն կամ յիշատակ կամ նշան մը կը տեսնուի, մանաւանդ

այն մեծաշէն և հռչակաւոր վանորայք, որ նախնի Մշեցի Հայոց Աստուածպաշտութեան վկայներ ու վկայարաններն են։ Այս տեղ հայրենեաց պաշտպան մ'է պառկեր։ Հոն՝ կրօնից մեծ պաշտօնեայ մը և մարտիրոս մը։ Թարգմանչաց շիրիմները Առաքելոց վանքն են։ Մուշեղին և Վահանեանց դամբարանը Ս. Կարապետի մէջ։ Սահակ Պարթեւ հայրապետը և Շուշանիկ՝ Աշտիշատու նեղ մատուռին մէջ։ Հոս է Ցրօնք, Տաղօնք, Օձ քաղաք, Վիշապ քաղաք, Խորօնք, Հացիկ, Մեղտի, Կվարս, Տոմ, Բարեխ որ և Բաղբու, Մուշեղէն և այլն, որոց մէջէն փրկիչներ և լուսաւորիչներ ելած են ազգիս, Ա՜հ, ո՜ր ազգի հայրենիքը այսչափ անմահ և պանծալի յիշատակներ դեռ կենդանի ունի։ Մշոյ դաշտի մէկ կողմը Սասնոյ քաջաբեր լեռներն են, Տօրոսի շղթան։ Միւս կողմը Բղնունեաց ծովը ծիծաղախիտ կը ծածանի, և Ծովասար ճակատը՝(1) Մշոյ վերեւն է։ Միւս կողմերը՝ Բիւրակնեան լերինք և անոնց գօտիները, անմահացուցիչ ջրերով

(1) Գիտնական Կարապետ Վարդապետ Շահնազարեանց 'ի շարս Հայ պատմագրաց տպագրած Թովմաս Մեծոփեցւոյ պատմութեան վերջ 13 ծանօթութեան մէջ, կ'ըսէ։ (Գաղղիոյ) կայ-

և ծաղիկներով զարդարուած։ Անոնց բնակիչները ինչպէս կայտառ, ինչպէս զուարթադէմ մարդիկ են։

Մէկ կողմը Եփրատէս խշալով խոխոջալով գիրգուռէն վար կը հոսէ. իւր խոր և սառնորակ ծոցին մէջ կը կայտռին անթիւ ձկունք և կը խաղան վտակաց մէջ. բադն ու սագը կը ծփծփան իւր ալեաց վրայ. իւր գետափունքները լի են խոշոր և մանրիկ թռչուններով։ Արագիլ ամեն գեղի տուներուն երդիքը, և բարձր շէնքերու պարիսպներուն և ծառերուն գլուխը իւր բոյնը դրած է, և հազարաւոր ճնճղուկները անոնց բոյներուն բոլորը ապաւինած։ Դաշտի խոտերուն հետ բուսած և ձորերու մէջ ծաղկած վարդենեաց թուփերուն մէջ սոխակներ կը

սերական գրատան օրինակն ԺԸՂՎ--- գրած է։ զեր. Իսկ Ս. Էջմիածնի մատենադարանի օրինակը, որ իրեն տպագրածն է, 23 րդ երես՝ 23 րդ տողին մէջ գրած է ԺԸՂՎ--։ Երկուքն ալ սխալ են։ Անշուշտ կ'ուզէր զայս, եթէ գիտնար թէ Ծ--Վ--- անունով լեռն է այն, ինչպէս որ պատմութեան կարգը կը ցուցընէ, և մինչեւ ցայսօր Մշոյ Հայն, Քիւրան ու Տաճիկն ալ Ծովասար անունը կու տան այդ լեռին, որ Առաքելոց կամ Ղազարու վանքին վերեւն է, և Մարաթու լեռան երթալու ճանապարհն է այն։

ճըլուրլան. գարնան, ամրան և աշնան առաւօտները՝ այնպէ՛ս սքանչելի տեսարան և լսարան կը կազմեն այս թռչնոց երամը, որ կ՚ըսես բնութեան տաճարին մէջ Արարչին փառաբանիչ կարդուած են ասոնք հրեշտակաց տեղ։ Արեւելեան կողմէն Գրգուռ լեռը կոթողաձեւ տընկուած կ՚երեւի, որոյ ստորոտը տարածուած է մէկ կողմը Մշոյ դաշտը, միւս կողմը Վանայ ծովը։ Առաւօտեան արեգակը երբ նոր կը ծագի, իւր ճառագայթները զարնելով ծովուն ալեաց և դաշտի գոլորշեաց վրայ, կանանչ կարմիր պսակ մը մանեկաձեւ կը ձգէ այս Գըրգուռայ գլորակ և լերկ գլխին։ Կը զմայլի՛ անոր նայողը։ Գրգուռայ թիկանց 'ի վեր կը բարձրանայ Ղէմրութ կամ Ղերրովթ լեռը. որոյ գլուխը նման է բոլորակ սեղանի մը. մէջ տեղը հրաբուղխի մարմրուքը, և անոր շուրջ պսակաձեւ շարուած աղբիւրներ բարեհամ, և ծաղկունք անուշահոտ։ Կարծես այս աղբիւրներ իբրեւ զոլացուցիչ բաժակ դրուած են այս բնութեան սքանչելի սեղանին շուրջը, որոց ջրերը ժողվելով մէկտեղ աւազան մը կը կազմեն Ղերրովթայ գլխու սկաւառակին մէջ, և անկից իջնալով, ինչպէս

կ'աւանդեն տեղացիք, Մեղրագետ կը բղխէ իւր ոտքի տակէն։ Այս Ներբոմթ լեռը իւր ճակտէն կախած ունի Բէլայ գիակը, «'Ի տեսիլ կանանց և որդւոց» և 'Ի նշան յաղթանակի մեր Հայկին, առաջին Հայուն, առաջին յաղթողին ազատութեան թշնամւոյն։ Այս տեղն է ըստ ամենայն հաւանականութեան գերեզման Բէլայ, որոյ վերայ երկար խօսելու ժամանակ չէ այժմ։ Մշոյ դաշտի միւս կողմի լեռներու վրայ բարձրացած են գմբէթայարկ վանքերը, Սուրբ Առաքելոց վանք, Սուրբ Յովհաննու վանք և Սուրբ Կարապետին, որոց ամպամած և արեւով ոսկեզօծուած կաթուղիկէից խաչերը ամեն կողմէն հովանի կը սփռեն դաշտի գեղերուն վրայ նայելով, և ամենուն սիրտերը իրենց կը քաշեն։ . . .

Ծրաֆրոն.

ՄԱՄՆ Ա.

ԳՐՈՑ ՈՒ ԲՐՈՑ

Ա.

Այն օրուընէ, երբ մեր դպրոցներու սեմէն ներս մտաւ օտար լեզուաց ուսումը, և բաւական ուսանողներ հասան, այդ լեզուաց մէջ իրենց ունեցած յառաջդիմութեան հետ՝ նոր և կարօտալիր ճաշակ մ'ալ ունեցան այն լեզուներով գրուած մատեաններուն, ծանօթացան և ընտելացան անոնց պարունակած գաղափարին և նկարագրին. սիրեցին զայն, յարմարեցան անոնց, և յետոյ թողին իրենց բնիկն, հայրենին, ազգայինն ու ընտանին։

Կը խօսին այդ պարոններն ու օրիորդները քաջ քաջ Եւրոպական լեզու մը. իսկ Հայերէնն խօսելու ժամանակը՝ կը հանգռին ու կը կանգռին, օժանդակ կը խնդրեն ու կը կոչեն գաղղիերէն մը, ռուսերէն մը, տաճկերէն մը, մի և նոյն բոպէին մեղանդրանք մ'ալ ձգելով Հայկականին վրայ, թէ — է՛հ, սա մեր Հա-

յերէն լեզուն ո՛րքան պակաս և կրճատ է։

Գլխացաւ մը քաշելու չափ ունկնդիր եղած եմ շատ անգամ այնպիսեաց, որոնք երկարօրէն ճառած են Եւրոպացի լեզուաց բառերուն ստուգաբանութեան, արտասանելու փափկութեան, ոճերու քաղցրութեան և բարձրութեան. իսկ նիւթի ընտրութեան ու թանգութեան աստիճանը բացատրելու՝ բառեր չեն կարող գտնել մեր լեզուով. կը կարկամին։ Եւ լսողը կը հիանա՛յ։

Չեմ նախապաշարուիր, չեմ կարող բոլորովին երկրորդ համարել ազգոնց գովածը իմ գովածին, այսինքն Եւրոպականն Հայկականին. յառաջ գնացած է այն տեղ արհեստն ու գիտութիւնը, յառաջ վարած է իւր մտքին հետ անշուշտ իւր գիրն ու լեզուն. բայց միթէ անոնց յառաջադիմութեան համար թաղե՞նք պիտի մեր սեպհականութիւնը։

Ի՛նչ միջոցներ որ անոնք 'ի գործ դրած են, զայն վեր առնենք և մեք, կը հասնինք անոնց։ Ո՞վ, և քանի՞ք մեզմէ յանձն առին գրաբառի մշակութիւնը, անոր պատմականին, փիլիսոփայականին, և աստուածաբանականին, երգին ու մեղեդիին, ընտանեկան վէպին, դեղջկական,

ռամկական ասողին — աշուղ — , արանց և կանանց , գրոց և բրոց , ասութեանց և աւանդութեանց , առածներու և առակներու , բանուասանքի և գովասանքի և այլն , գործածած ոճերը , դարձուածքները , ստոյգ բառերը , և մինչեւ անգամ արտասանելու եղանակը , որ ուժ կամ լքում , սաստ կամ ողոք , հեգն կամ լուրջ , մաղթողական կամ բերկրական , և այլ տարբեր տարբեր նշանակութիւն տալու համար , զորս 'ի կիր կ'արկանեն ։

Բ ·

Եղեր են , բայց քիչ մարդիկ , մեր մէջ , մեր լեզուին համար աշխատութիւն յանձն առնող ։ Դեռ մեր վարժարաններու մէջ չկրցան տառերու հնչումն անգամ ուղղել , կամ ուղիղ արտասանել գիտնալ ու սովրեցընել նոյն տառերը , և նոյն տառերով կազմուած ամբողջ բառերը · զոր օրինակ , Դ տառի ձայնը Պոլսեցին և Պոլսեցւոց վարժութիւն ունեցող անձինք կը հնչեն Ֆ ի ձայնով , Ռուսաստանցիք և Տաճկաստանի դաւառացիք՝ բուն Հայաստանի մէջ ծնած ու բնակածները կը հնչեն զայն Ֆ ի և Փ ի ձայնէն տարբեր , ճիշդ դաղղիերէն d , և տաճկերէն د տառերու ձայնով ։ Ջ տառը Ճ ի ձայնով կը հնչեն

Պօլսեցիք, իսկ միւսները ճիշտ տաճկերէն Շ Ջ՝ի ձայնով։ Բ ը կը հնչուի հոս ֆ՝ի ձայնով, իսկ Նոքա կը հնչեն գաղղիերէն b, և տաճկերէն Ֆ՝ի ձայնով։ Գ ը + ի ձայնով կը հնչեն 'ի Պօլիս, իսկ գաւառները + և ղ ձայներէն տարբեր, տաճկերէն ՀՂ գեաֆ՝ի ձայնով։ Զ տառը ց՝ի ձայնով հնչելու տեղ՝ Հայաստանցիք և ընդհանրապէս դուրսեցիք, գաղղիերէն բաղադրեալ ցշ՝ի ձայնով կ'արտասանեն։

Մենք կը սխալինք, այո, երբ, Բ, Գ, Դ, Յ, Լ, տառերը, ֆ, +, Ղ, ց, Շ, տառերուն տեղ կը գործածենք. և կրկին կը սխալինք երբ ղ, կ, ք, ձ, ճ, տառերն ալ, Բ, Գ, Դ, Յ, Լ, տառերու բուն ձայներով կը հնչենք, որով մէկ կարգն բոլորովին աւելորդ կը մնայ։ Դիտողութիւն կը վերցընեն նաեւ ղ և ֆ, հ և յ, ռ և վ տառերու հնչմունքը և այլն։

Գ.

Ասոնք մանկավարժական առարկայներ են։ Օ՛. բուն այդ սրահէն, բուն այբէն սկսելու է արդէն ուղղութիւնը, որուն մեր ազգը կարեւորութիւն չտար. և չը տալով ալ կարող չմնիր գինքն ուղղել. չուղղելով կարող չմնիր յառաջ ընթանալ։ Այո՛, ամեն բանը սկիզբէն, այբէն,

մանուկէն, առաջին սրահէն ուղղելու ենք։

Դասագիրքեր պէտք են մանուկներուն պատշաճ, հասկանալի և սիրելի բառերով և առարկաներով. զորօրինակ. գեղացւոյն համար, կով հորթիկ, այծ ոչխար, ուլն ու գառն, դաշտ և խոտ, լեռ և ձոր, ծառ ու ծաղիկ, արտ և ցորեան, եզն ու լուծ, և այլն։ Քաղաքացւոյն ալ՝ իւր ծանօթ առարկայներով։ Իսկ Աստուած, երկինք, լուսին, աստղ, ցերեկ, գիշեր, ամառ, ձմեռ, հայր, մայր, քոյր, եղբայր, հաց, ջուր և այլն, առհասարակ քաղաքացւոյն ու գիւղացւոյն։

Երբ մանուկը իւր ծնած տունը, և տան մէջ եղածները կը ճանչնայ, այնուհետեւ տան դռնէն դուրս կ'ընթանայ ափսաթաթիկ, արեւու շողին, ջրի կուժին, կատուին ու շնիկին, ճրագին ու կրակին արդէն ծանօթ է նա՝ դուրսը տեսածներուն ալ հետաքրքիր կը լինի։ Եթէ պարտէզ ունի, հողերը կը փորփրէ, խոտ և ծաղիկ կը տնկէ, ու կը խլէ. քարի մը կամ ապակիի մը կտոր կը գըտնէ՝ ձեռքը կ'առնէ, խորհելու և իմանալու կարող եղողի մը պէս հետաքրքիր կը լինի. տեսածներու անունը կը հարցընէ. ագլօրն ու հաւերը կը ճանչնայ,

ճեռերու հետ ընկեր կը դառնայ։ Դուռը, դրկիցը, փողոցը, կը նկատէ և կ'որոշէ։ Ծնողաց հետ պրօսանքի կ'երթայ, Եկեղեցի կ'երթայ. և ուր որ երթան՝ կ'երթայ. ինչ որ ընեն ու ըսեն՝ կը սովրի. այս սովորոյթից հետ լեզուն ալ կը բացուի, կ'ընդարձակի։ (1)

Այս խնդրոյն յատուկ ուշադրութիւն տալ պէտք է. փափուկ և խորին ուշադրութիւն։

Դ.

Դասագրքեր շինելու է ընտանեկան կեանքի նկարագրութիւն ընելով, ապագային սեփհական սովորութիւնները գըրելով. եկեղեցական տօները և ծէսերը, իւրաքանչիւր դեղին, քաղաքին, գաւառին տեղագրութիւնները, անոնց մօտ եղած լեռան, բլրին, ձորին, պրակին, վտակին, արտերուն, մարգերուն, շէնքերուն, բերդերուն և աւերակներուն անունները, տեղերն ու ձեւերը ծանօթացընել մանկան։ Ասոնք ոչ միայն զուարճալի և պիտանի կը լինին ուսանողին, այլ

(1) 1866 ին երկու կտոր դասագիրք շինեցի այս ոճով տպագրեալ, որ շատ տեղերէ լաւ ընդունելութիւն գտաւ, և շնորհակալութեան գրեր ալ ստացայ ուսուցիչներէն։

և նոր ու մեծ լոյս կու տան մեր հայկա-
կան լեզուին, մեր ազգային հնագիտու-
թեան ու պատմութեան որք լի են թիւր
հասկացողութեամբ։ Ձեռքդ ա՛ռ մէկ
պատմութիւն մը՝ նկարագրող մէկ տեղի
կամ դաւառի, ձեռքդ ա՛ռ Հայաստանի
աշխարհագրութեան տախտակ մը, և
գնա՛ շրջէ ատոնց ցոյց տուած տեղը.
տե՛ս, ատոնց 'ի հիւսիս ցոյց տուածն 'ի
հարաւ կը գտնես, անոնց ցոյց տուած
Հայոց ձորն՝ քո տեսածէն տարբեր կողմ
մը. անոնց Աշտիշատը՝ քո տեսած Աշտի-
շատէն զատ և տարբեր. ո՞ւր Ողկան
բերդը. ո՞ւր Սասունք. ո՞ւր Հարք և Ա-
պահունիք. ո՞ւր Հաշտեանք. եւայլն,
եւայլն։

Այնքան առարկաներ կան գրելու, և
սրբագրելու, այնքան թագուցեալ գան-
ձեր կան հետաքրքրելու և 'ի լոյս հա-
նելու, մեր լեզուին և պատմութեան
ճոխութիւն տալու նիւթեր, և ուղղե-
լու շատ մը սխալներ, որոց մասին մի-
այն առաջարկութիւն մը չինելու ծը-
րագիրը՝ ստուար հատորներ կը կազմէ։
Ցաւալի է որ փոքր 'ի շատէ հասկնալու
և գրելու շնորհք ունեցող ազգայիները,
այսպիսի արդիւնաւոր և պարծանք բե-

ղող աշխատութիւնը սիրած ու գործ ը-
րած չեն իրենց։ Պօլսոյ մեր լրագիրներն
ալ յատուկ նշանակութիւն մը տուած
չեն այսպիսի խնդրոյ մը։ Պատմութեան,
աշխարհագրութեան դասագիրք չինող-
ները, հետեւող եղած են առաջուց գըր-
ուածներուն միայն. և զայն շատ տեղ
կրճատած, տարակուսելի տեղերու և
դէպքերու անուններուն վրայ՝ տարա-
կոյս մ'ալ իրենք թողած են մեզ։ Բա-
ռարան չինողները շատ մը գրաբառ բա-
ռերուն յարմարական նշանակութիւն մը
տուած են քմածին, և շատ մը իրաց ալ
նոր բառ, նոր անուն յօրինած են հե-
տեւելով ուրիշ ազգաց նոյն իրին տուած
բառի նշանակութեան կամ ստուգաբա-
նութեան։ Հարկ չկայ կարծեմ ապացոյց-
ներ մէջ բերել։

Ե.

Մենք կը շուարինք տեսնելով նաւի մը
կազմածքը այնքան մասունքներէ և տե-
սակներէ, որոց բառարանը՝ նաւապետն
ու նաւաստիքն են. բայց Նարեկացին ը-
թերցողաց յայտնի է՝ անոնց յատուկ
Հայերէն բառերով անունները։ Գնա,
նաեւ Վանայ Աւանց գիւղը, այն տեղի
գեղացի նաւավարներուն մտիկ արա՝ և

տե՛ս ու ուսի՛ր բառեր։

Հետաքրքիր եղողին զարմանալի է տեսնել հօդաղ մը ու մաճկալ մը՝ երբ գարունը գետին հերկելու, ամառը հնձելու, և սայլով կրելու, աշունը դիզելու, կասելու, ամբարելու աշխատութեանց միջոցին քանի՞ մասերէ ու տեսակներէ գործիքներու անուններ կու տան. ամենն ալ Հայերէն։ Գիւղացիի տունն իւր միջի կահ կարասեաց և շէնքի ձեւին, ամեն մէկ կտորին ու տեսակին զատ անուն կու տայ, թէպէտ ամենն ալ պարզ հողէ ու փայտէ շինուած են։ Անոր ստաքանը՝ որով ջուր ու գինի կը խմէ, հողէ կոնիկ է, անոր թոնիրը ոչ ունի և ոչ կոյ, ուստի օդը կը մտնէ և կրակը կ՚արծարծէ, ու այդ օդը բոբոփ կը կոչեն։ Անոր պոռոնն ու ճլքրն թոնիրին վրայ դնելու համար խաչերկաթ ունի երկաթէ, և փայտէ անիրոց կամ պողվատէ շէշ, որով կրակը կը խառնէ. և միանգամայն այս խաչերկաթն ու շիշն պատրաստական զէնք է իրեն համար, երբ մթան թոյլ գողմը բռնէ տան մէջ, ատոնցմով կը զինի ու կը զարնէ, ինչպէս նաեւ իրեն հոլ վարող խոփն, խոտ ու հատ քաղող գերանդին և մանգաղն ալ իրեն իբրեւ զէնք կը գործա-

ծէ, երբ դաշտի մէջ կամ անէն դուրս յափշտակիչներու հանդիպի։ Մեծ կաթսաներ կամ ամբոցներ (1) ունի հողաշէն, որոց մէջ ալիւր, ձաւար, կորկոտ, սիսեռ, գլուխ, թաթլայ, և այլ ուտելու չոր արմտիք կը լեցընէ. կարաս և տոհմէկ, որոց մէջ գինի կը լեցընէ, և նռկանոցն որ գինւոյ չափաման է. կոնալիթ, սեռիկ, կնոց, թղէկ, գլուխ, որոնք գործ կ'ածէ կոնի, եղէ, մաճնի, ունի, պանրի, ձաժկի, մասրանի, պինդ ունի կամ ունհատի պահելու համար, և զանազան բանջարեղինաց և պտղոց ունու բռնելու համար։ Սոխ, թասոյ, մանրան, եղեհալ որք կերակուրի ամաններ են։ Կոճ, փարչ, յամալիթ, պողկէկ, թղթղէկ, ջուր խմելու համար։ Տաշտ հողէ կամ փայտէ, հալաւը և անձը լուալու ման։ Կոտ, որ կլոր փայտէ փորուած կը լինի, մեծ և փոքր, կիսագանդի ձեւով, զոր ջուր խմելու և այլ զանազան իրաց 'ի

(1) Ամբրոց, ամբարանոցն է։ Կայ և մի բառ Ամրոց, զոր գեղացիք անասնոց չորցուցած աղբերով կը շինեն բրգաձեւ, մէջը պարապ, հոն կը լեցընեն վառելու փթիլը, քակուը, պտտուրը և տու հասարակ վառելիք չոր կոյերը։ Այս ամրոցները գեղերուն շուք տուող շէնք մը կ'երեւին հեռուանց։

պէտս կը գործածեն։ Գրդեռակ, որով խը-
մորի գունտերը սեղանոտոպակի վրայ կը
բանայ, և պատուական բարակ ջղ հաց
կը շինէ, և մաղբակոյի վրայ դնելով թո-
նիրի կողը կը թխէ կ'ելնէ։ Ջնջոցը այն
լաթն է, որով ամանները կը լուայ կը
մաքրէ։ Թռնոց, որով ճաշ կամ հարիսայ
կը խառնէ։ Փարոտիկը այն շորն է, որով
իւր թոնիրը կը փարատէ կը սրբէ։ Դը-
ֆէկը, որ իւր թոնիրի շուրթը կը ձգէ մին-
տարի տեղ և վրան կը նստի։ Փայտէ
պաշտն այն է, որոյ մէջ խմոր կը շաղախէ,
և եփած հացերը անոր մէջ կը դնէ կը
պահէ։ Եփուած հացին զանազան ձեւե-
րուն զանազան անուններ կու տան.
ֆուռնիկ, կլոճ, ռոֆռոֆոյ, պօղիկ, ըլլիկ և այլն։

Զ.

Իմ ձեռնհասութենէս առ այժմ վեր
է այս կարգով գոհացուցիչ գործ մը
պատրաստել, միայն յիշելու համար գը-
րեցի։ Յիշելու թէ՝ հովիւն իրեն ոչխարի
գոմին կազմութեան կերպին և տեղւոյն
անուններն ունի. իւր ոչխարներու տե-
սակին, և անոնց մէջ երեւցած ախտե-
րուն անուններ կու տայ. ցաւ կայ որ՝
խոտերու արմատներէն կաթ կը հանէ,
անով դեղ կ'ընէ իւր գառնուկի վէրքին

կամ ցաւին. զորօրինակ, պոչէ կաթը քսելով ոչխարի վրայ եղած որդերը կը սպաննէ, և որդերու կերած մսին տեղ նոր միս կը շինէ։

Այսպէս հարսն իւր զարդերուն իւրաքանչիւրին անունը զատ զատ գիտէ. որոցմով կը զարդարուի ժամը կամ վանքերը ուխտ գնալուն, կամ հարսանիք և պար հրաւիրուելուն. և պառաւն իւր բժժանքները մի առ մի կ'անուանէ, զոր մեծ խնամով կը պաշտպանէ (1)։ Հիւսն և դարբինն՝ իրենց գործիքներու անունները, ջաղացպանն՝ ջաղացքին, դերձակն՝ իւր ձեւածներու կտորներուն և կարած տեսակներուն, ոսկերիչն՝ իւր շինած զարդերուն, տուն շինողն՝ տան զանազան մասերուն և ձեւերուն զատ զատ անուններ կու տայ. զորօրինակ, տան մը այն մասին՝ Վանեցիք Էրէ-Բաց կը կոչեն, որ պատշգամն է։ Աբոպահ, որ տանիքներուն շրջապատը իբրեւ պարիսպ կը բարձ-

(1) Տարակոյս չկայ որ արդի մօտաներուն անունները հայկական կեանքի մէջ չմնիր, ինչպէս նաեւ արուեստներու շատ մը գործիքներ, և շէնքի ու զգեստուց ձեւեր ու անունները, որոնք նախնական կեանքէն դուրս են, և նոր դարու կամ Եւրոպային կը պատկանին։

բացընեն, որով աւելի կը բարձրանայ
չէնքն, և ոչ միայն կը պատսպարուի դո-
ղերէն, այլ և ծակեր ունենալով իրրեւ
ամրոց կը ծառայէ. և կամ, որպէս զի
փողոցէն չտեսնուին տան ընտանիքը՝ երբ
տանիքը կ'ելնեն դարնան, ու հոն տեղ
կը նստին իրենց ճաշը կը մանեն,
«անդերձով բուրդ կը գզեն, ռոմ, ռոմ-
պոն կը հիւսեն, ջիլն կը քրքրեն, ասե-
ղով շապիկ ու գտակ կը նկնշեն, խոնջն
կը շինեն, «ընկ կը շարեն, և այլն։

Ջորոնն, տանիքներու վրայ դրուած
փայտէ խողովակ է, կէս տապակած,
յորում ժողվելով անձրեւի ջրերը և հա-
լած ձիւները, յորդ և շառաչ ձայնիւ կը
թափին փողոցը։

Կան այնպիսի իրեր, որք Վասպուրա-
կանի մէջ ուրիշ բառով կը կոչուին, Տա-
ռոնոյ մէջ ուրիշ, Կարնոյ մէջ ուրիշ,
Թերեւս ուրիշ տեղեր ալ բոլորովին ու-
րիշ. զորօրինակ. Կարնեցւոց և Բասենց-
ւոց անուանած գոլոն, Մշեցին կ'ան-
ուանէ բոլ, Վանեցին ռոն. ձեռնոցը՝
Մշեցին կը կոչէ ռոնոց, Վանեցին ռոն-
պոն։ Ա.ոլկոն, Վասպուրականցւոց բա-
ռով այն գործիքն է, որով բուրդ, բամ-
պակ, ապրշում կը մանեն ոտքի վրայ,

բուրդի կամ բամբակի գղակը բազկին վերայ ունենալով, և թել եղած կոթը առջկանի կոթին վրայ փաթթելով. և որովհետեւ այս գործիքին բարակ պոչը առջեւէն ծունկին վրայ գլորելով թող կու տայ օդին մէջ, ասով թելը կը մանուի, և կանել ու մանել մի և նոյն նշանակութեամբ գործ կ'ածեն. այս կ'ստուգաբանուի առաջով կանել. այս բառը Մշեցիք կը կոչեն թարման։ Կտաւագործի առնպեռթ, մասրան, վիլակն, ղոռղ հինաձն, ոպեձն, բամպակ գղելու լոբն ու ոպեղն, և այլ մանր մունր գործիքներն զանազան պէտքերու և արհեստներու՝ իրենց անունով։

Է.

Այս ակնարկը տնական և արհեստական իրեղինաց վրայ միայն ճգելով, դուրս կը մնան տակաւին կերակուրներու, մշակած գետնի և ծառի պտուղներու, շորեղէն, մետաղեայ, քարեղէն և ապգի ադգի հագուստի ու զարդի նիւթերու, տնտեսական այլ և այլ պէտքերու վրայ խօսիլ, որոնք անհուն ու զբօսալի նիւթ կը մատակարարեն գրագիտի մը։ Իսկ թէ քանի՞ տեսակ կայ թռչնոց, և ի՞նչ անոնց անունները. ա-

նոնցմէ իւրաքանչիւրը ո՞ր դաւառին մէջ շատ կայ, ի՞նչ գիտենք անոնց վրայ. նոյնպէս և ընտանի կենդանեաց և վայրի գազանաց տեսակները, անոնց անունները։ Քանի՞ տեսակ կայ ծառոց, ի՞նչ անուն անոնց, ի՞նչ յատկութիւն, և ի՞նչ պտուղ, քանի՞ տեսակ և անուն կայ խնձորին, տանձին, քանի՞ խաղողին։ Այսպէս նաեւ ծաղկանց, բանջարեղինաց, բաւականին ձեռք բերած եմ այսպիսեաց հաւաքում մը։

Պառաւները որ մէկ մէկ Հիպոկրատէս են նախնական բժշկականութեամբ, կըրակով խարածին, գնդակով զարնուածին, սրով վիրաւորածին, քարով ջախջախածին, զանազան խոտեր և արմատներ իւրաքանչիւր ցաւին ու վէրքին զատ զատ 'ի գործ կ'ածեն, և զանազան չոր ծաղիկներէ, տերեւներէ, և արմատներէ փոշիներ ունին թէ վէրքի և թէ ցաւի. պէս պէս մալհամներ կը շինեն թարախ և արիւն մաքրելու ցամքեցընելու, խոցերը բուժելու. այդ խոտերուն և արմատներուն ոչ միայն անունները կու տան, այլ և հրաշալիքներ ալ կը վիպասանեն. աւանդութեամբ ուսած և կ'ուսուցանեն. կոտրած ոսկորը կը կապեն, կը դեղեն և

կ՝ողջացընեն. այն ինչ մեր Եւրոպական Տօքթօռներն ալ հազիւ թէ պիտի կրնային այսչափ դարմանել։

Խօսքի կարգն եկաւ գրելու. տարի մը չկայ որ Պոլիս կը գտնուիմ, և բաւական շատ նոր հարսներ և մատղաշ տիկիններ լսեցի մեռնիլ ծննդաբերութեամբ, այս տեղ, ուր այսքան վկայականով դայեակ տօքթօռներ կան. բայց մեր աշխարհները պառաւ դայեկներու խնամքով, հազարէն մէկը չպատահիր զոհ լինել այդ առթիւ։

Լաւ տակ անունով բոյս մը կայ, որ Մշոյ աշխարհին մէջ յաճախ կը գտնուի, առաւելապէս Ս. Կարապետի վանքի բոլորը. մացառներու մէջ կ՝արձակէ իր ոստղերը, որոնք կը բարձրանան և կը պատատուին փայտերուն, և անոնց թանձրախիտ տերեւներուն կը խառնեն իրենց լայն տերեւները. որոնք ձեւով նման են խաղողի որթի տերեւի, իրենց ցօղունը նման որթի բարունակի, և խաղողոյ ողկոյզի ալ շատ նման ողկոյզներ ճութ ճութ կը կախէ. միայն թէ ասոր պտուղները մանրիկ են քան զխաղողին։

Այս այն բոյսն է, որոյ արմատը մարդանման ըլլալ կը հաւատան. և թէ մին-

չեւ անգամ անոնց մէջ արուն ու էգն ալ յայտնի են։ Թէ՝ այս արմատը հանելու համար յատուկ աղօթք մը ունին. և թէ՝ երբ կը կտրեն իւր միւս կտորներէն, ահագին ձայնով կը ճչայ. ուլ մը կամ հաւ մը կը կապեն այդ մարդարմատին, որպէս զի երբ ճչայ՝ այն ուլը կամ հաւը անոր ձայնին զոհ լինի. եթէ այդ հնարը չլինի, արմատ հանող մարդը պիտի մեռնի։ — Այս հնարքով ուլ մը կամ հաւ մը կ'ուտեն հանող թշուառականները —։ Ամենավերջին աստիճան դառնութիւն ունի այդ արմատը. և ԻԴ կերպ ցաւոց ու ախտից դարման է։ Բաւական փափաքանօք և թանգ գնով կը գնեն զայն Նոր Նախջեւանէն, հին Խրիմէն, և այն կողմերէն Մշու Ս. Կարապետ եկող ուխտաւորներ. որք կը գնեն նաեւ Տ-ՊՐՈՆ հէլՔոթ, գազպին, որ յունիս և յուլիս ամսոց շոգ օրերուն պղտորագոյն ու անքամի օդերուն կ'ելնէ մացառներու տերեւներուն, փշոտ գազերուն, և մատուտակ ըսուած խոտերուն վրայ, թանձրացած մեղրի նման, ամենաղուտ և քաղցր։ Նոյնպէս ամեն ուխտաւորներ կը գնեն սպիտակ ծիւթ, կամ Ս. Կարապետի ծառոն ըսուածը, որ կանգառ

փուշի ընձիւղները կտրելով մայիս ամսուն՝ անկէց ելած կաթն է, զոր կը ժողվեն կը չորցընեն, և տաս փարանոցի մեծութեամբ՝ բայց անկէց բարակ, կըոր նշխար կը շինեն Մշոյ դաշտի աղջիկներ ու հարսները։

Կայ և մի տեսակ խոտ, ճարճրտուկի նման, որ աւելի Վանայ գեղացիներուն ծանօթ է, Կէրդ կ'ըսեն. ասկէց կաթ կը հանեն, թանձրացընեն, Խաչ կը շինեն, մարմնոյ ո՛ր տեղ որ քամին բռնած լինի, կը փակցընեն վրան. այնքան կը պրկի մնայ, մինչև քամին ծծէ հանէ, ապա կը փրթի։

Ը.

Աղջիկներ և նոր հարսները, որ գարնան կ'ելլեն դաշտն ու հովիտը, ձոր և լեռը բանջար ժողվելու, և նստած զըզզըզուն աղբերակաց եզերքը, այդ ծաղիկներու փունջ, խուրմ և հիւսկէնը կը պատրաստեն. իրենց գոգնոցը լցած, մանեակը շինած և պարանոցն ու բազուկը անցուցած, գեղը կը դառնան. մրմնջելով այդ զանազան ծաղկանց անուանց, գոյնին, հոտին և տեսքին վրայ յօրինուած հովուերգական խաղերը։ Ամեն մէկ ծաղկին զատ զատ վէպեր ու-

նին։ Անոնցմէ մէկը քոյր է, միւսն եղբայր. կամ երկու քոյր՝ մէկ մայր. մէկը քաւոր՝ միւսը սանամայր. մէկը տէրտէր՝ միւսը տիրուհի. մէկը սիրող՝ միւսը սիրուած. Աղբրանց արիւն. երկու որբ եղբայր. մէկը արնոտ սիրտ՝ միւսը օձու թուր կամ մխած խանջալ. մէկը կթոց մի կաթ է սպիտակ ու անարատ, միւսը թոյն թափող հրեղէն վիշապ. և այլն, և այլն։ Իմ միտքս է հասկցընել թէ այդ բազմատեսակ ծաղիկները, որ կը գըտնուին Հայոց լեռները, անոնց անունները մի առ մի գիտեն թուել բնակիչները հայերէն, ինչպէս նաեւ բանջարեղինաց, խոտեղինաց, և պրակ պրակ գտնուած մացառներու տեսակաց մանր ու ոլոր ոստերուն, մորենեաց, ուռենեաց, փուշերուն. որոց ամենուն անունները շատ պէտք են գիտնալ. պէտք են տեսուինլ մեր գրքերու և բառարաններու մէջ, անոնք որ դեռ չկան գրուած, հանդերձ իրենց նշանակութեամբ և ստուգաբանութեամբ, որոնք ոչ միայն կ'ընդարձակեն մեր ազգային մատենագրութեան ասպարէզը, այլ և նոր գիտութիւնք և արուեստք ուսանելու փափագ և միջոց կ'ընծայեն տնկարանութեան և երկրա-

բանութեան իրենց ճիւղերով։ Մանաւանդ զբանաստեղծները կը փարթամացընեն։

Վէպերը, որ յօրինուած են իբրեւ խաղ, աշուղի ոճով և եղանակաւ, կամ իբրեւ հէքեաթ, արձակ ասացուածքով, թէպէտ այնքան փոփոխուած աւելցած ու պակսած եղեր են, որ շատերէն մարդ չէ կարող բան մը հասկընալ. բայց և շատերն ալ կը պահեն իրենց մէջ ընտիր և բարձր գիւտ ու նիւթ, բանաստեղծութիւնը, դիցաբանութիւնը, կրօնական օրհներգութիւնը, սիրահարական տարփանաց բոցն և անոր հետեւանքն եղած աղետն ու կսկիծը որոց ենթակայ է մինչեւ այսօր մի և նոյն սերունդ մարդկութեան, անմոռանալի և բաւական բացայայտ իմաստներով պահած ու շարունակած են իրենց մէջ։

Թ.

Հայաստանի լճակներ և գետերը հրեղէն աղջիկներ ունին իրենց ալեաց մէջ. Վանայ մասին այդ հրեգինաց սրսկապանը Արջակու ծովն է թէպէտ, բայց գըրեթէ ամեն լճեր ու գետերը մերթ ընդ մերթ կ'երեւցընեն խանդով և սիրով յա-

փրշտակուածներուն երեւակայութեանը իրենց ըղձացած էակը. հրեղէն գոմէշ կը տեսնայ այն ջրերուն մէջը՝ գոմէշի սիրահար երկրագործը, և հրեղէն ձի՝ ձիասէր երիտասարդը։ Փերիները (1) կը հիւսեն ամեհի և աշխոյժ ձիերու բաշը, և չար ոգիները կը ելկեն հեթանոսաց և անզեղջ մեղաւորաց թաղեալ մարմիններ-ը, մտնելով անոնց մէջը, հանելով զանոնք գերեզմանէն՝ շրջեցընելով գիշերները չարագործ մարդու մը, կամ շան կամ գայլի կամ արջու կերպարանքով. զոր գոռնոդոբ կ'անուանեն Վանեցիք, և գոռնոփշրէ՝ Մշեցիք։

Յատուկ աղբիւրներ կան տեղ տեղ. որոց ականջուրջը բաղմակերպ ծաղկունք, զանազան խոտ ու բանջար կան. ծերացած օձերը կու գան հոն, իրենց շապիկը կը փոխեն. և ծաղիկներէն մէկը, զոր միայն օձեր կը ճանչնան, կը փրցընեն կ'ուտեն. և անմիջապէս աղբիւրի ջուրը մտնելով կը լուացուին, և երեք անգամ կը խմեն, կ'ելլեն, նորոգուելով իրենց կեանքը. եթէ ուշադիր լինին հովիւները կամ ցան-

(1) Փերի՝ գուցէ լինի բարի. ինչպէս ռամկաց մէջ այդպիսի աներեւոյթ ոգիները կը կոչուին ֆոն զդէ ոլեինէրը։

կացողները, ու պատահին օձի այս արարուածին, նկատեն ու ճանաչեն այդ ծաղիկը՝ թէ ո՞րն էր, ու իրենք ալ ուտեն, և նոյն աղբիւրի ջրէն երեք անգամ խմեն, կ՚անմահանան այդ մարդիկը։

Մշոյ լեռան կամ Սեմ սարի ստորոտը կը գտնուի Մառնիկ գեղ. այս գեղի բնակիչներէն Հայ մը Մարգար անուն, ասկէց հինգ տարի յառաջ մեռաւ։ Սա իւր կենդանութեան կը պատմէր թէ 250 տարեկան էր ինքն. մենք տեսանք զինքն 1866 ին, իւր ջիղերը պինդ, երկու անգամ նորոգուած էին ակռաները. և դեռ այն տարիքին մէջ կը տեսնար քաջ, կը լսէր, կը խօսէր, կ՚ուտէր, կ՚ընթանար երիտասարդի մը պէս. և ամեն առաւօտ լեռան մացառներէն չոր փայտ կը ջարդէր, կը շալկէր բերէր Մուշ կը վաճառէր ձիւն օրերը։ Իւր անդրանիկ որդին 80 տարեկան էր և ալեօք ծաղկեալ. այն ինչ Մարգարը իւր մօրուքի մէջ շատ քիչ ճերմակ ունէր։

Սա կը պատմէր թէ՝ «150 տարու եղածս ժամանակ աշխարհի մեղաց մէջ ինկայ. այսինքն կին առի։ Թէ՝ Ծովասարու մէկ աղբիւրի մէջ տեսայ մէկ օր, որ ցաւագար ու վիրաւոր օձ մի եկաւ լողցաւ,

և երեք թուփ ունեցող ծաղկէ մը կտրեց կերաւ. նորոգուեցաւ դնաց. դիտեցի ես ալ նոյն ծաղկէն կտրեցի կերայ. նոյն ջուրը խմեցի, և լողցայ, աչքերս լուսաւորան. ուրիշ կերպ դարձայ։ Հովիւ էի, ու ոչխարներս թողի, կթելու ժամանակն եկեր, ես ոչխարները չեմ տարեր քէջ. ոչխարները ցրուեր են. գեղի աղջիկները ելեր են եկեր են լեռը, ոչխարները ժողվեր են, կթեր են, ու գիս չեն դտեր. դարձեր գացեր են, ուրիշ հովիւ մը դրեր են ոչխարի առջեւ, ու քանի մը մարդ առեր են հաց ու ջուր՝ ինկեր սար գիս կը փնտրեն։ Ես ո՞ւր եմ։ Իմ վրէն անցեր է քանի մը օր, քանի մը գիշեր. ոչ մութ եմ տեսեր, ոչ անօթութիւն եմ իմացեր։ Ես, որ էն ջուրը խմեցի ու էն ծաղիկը բերանս դրի, տեսայ որ բացվաւ իմ առջեւ մարմար կամարաշէն լուսաւոր պալատ մը, աշխարհից ու մարդոց խելքից դուրս էր անոր շէնքն ու միջի փառքն ու բարիքն. անմահութեան տուն ու տեղ էր. բերնով չպատմուիր ինչ որ ես տեսայ։ — Ասոնք պատմած ժամանակ 'ի խորոց կը հառաչէր։ — Մէկ էլ ի՞նչ տեսնեմ. իմ գեղի դուր դրկից կը բռան կը կանչեն գիս. ձայն ինկաւ

ականջս, դուրս ելայ, բայց շատ զզջացի։ Նեղացայ թէ ինչո՞ւ կանչեցին զիս։ Հարցուցին, պատմեցի իրենց՝ արածներս ու տեսածներս։ Շատ աղաչեցին որ էդ ծաղիկը, էդ աղբիւրը ու էդ պալատի դուռը ցոյց տամ իրենց. հնար չեղաւ նորէն տեսնայի։ Այսպէս զրկուեցայ Աստուծոյ տուած շնորհքից։ Շատ լացի ու մէկ էլ գեղը չիջայ սարէն։ Իմ հաց ու ~~ջուր~~ կը բերէին. ու ես իմ ոչխարներով կը մնայի սարը։ Շատ աղջիկներ քսուան յիս. շատ մարդ զօրեցին թէ աշխարհ մտի. չմտայ։ 150 տարեկան էի. օր մը յաղթուայ մեղքից, խօսք տուի, աղջկան մը հետ պսակուանք, ու ինկանք մեղաց մէջ. մեղաց զաւակ ունեցանք։ Բայց, փա՛ռք Աստուծոյ, մինչեւ այսօր իմ գլուխը բարձի վրայ չդրուեր, ու իմ բերան վա՛յ չկանչեր. — այսինքն հիւանդութիւն չէ տեսեր— . իմ օրերը սարերու վրայ ու իմ գործը հովուութիւն է եղեր». Լայլն, Լայլն։

Առասպել թող լինին այս տեսիլքները, և 'ի շարս պեղէլ դնացողներուն դընենք տեսած ու լսածները։ Բայց ինքն Մարգար եթէ 250 տարեկան չկար, անշուշտ 150 տարեկանէն աւելի էր. ա-

սոր ապացոյցը՝ ոչ միայն իւր տեսած փաշաները ու առաջնորդները կը թուէր, ու գեղերու և Մշոյ շէնքերուն վրայ ծանօթութիւններ կու տար. այլ ինչքան որ հին ղրոյց պատմէին Մշոյ մէջ Հայ և Քիւրտ ծերերը, վերջին խօսքը կ'ըսէին՝ «Մառնիկու Մարգարին հարցուցէք, որ քան զիմ պապու պապն էլ մեծ է»։

Մառնիկու Մարգարի հայրաւը Մուշէն դուրս եղած գաւառներն ալ տարածուած էր. և կարին նստող ռուսական հիւպատոս վսեմ. Իվանով պէյը հետաքրքիր լինելով, 1866 թուականին գրած էր յատկապէս Մշոյ Առաջնորդ Վանցի Տէր Սարգիսեանց Գեր. Երեմիա եպիսկոպոսին և ինձ, որ կանչել տալով Մարգարը, տեսնանք զանի, և թէ՛ այլոց հայրաւածը ու թէ՛ իրեն պատմածը գրենք ղրկենք Նորին վսեմութեան. այնպէս ալ ըրինք։ Վերոյիշեալ Իվանով պէյը այժմ Հալէպու հիւպատոսն է։

Աղբիւրներ կան. որոց ուխտի կերթան քամոտ ու քոսոտ հիւանդները. այդ ջուրերով լուացուիլ, կամ անոնց ջրով շաղախուած կաւը իրենց մարմնոյն վրայ քսելը՝ կը գործէ առողջութիւն.

բայց պէտք է խունկ ու մոմ և յատուկ աղլոր մը մատաղ տանին. և այս թէ-պէտ շատ տեղեր կայ. բայց ես կը յիշատակեմ մէկը՝ որ Վանայ մօտն է, Աէրէի կը կոչեն. ուրիշ մէկը՝ որ Մուշն է, և Քրդերէն լեզուով կը կոչեն Գանէ գարման. որ ըսել է աղբիւր բժշկութեան։

Ծառեր և թուփեր, որոնք սուրբ համարուած են, գրեթէ ամեն կողմը կը գտնուին. անոնց վրայ կը փաթաթեն ախտաւորներն ու տենդոտները իրենց հագուստէն մէկ պատառ դրօշ, և կը համարին բժշկեալ։

Ծակ քարեր կան՝ նեղ և անձուկ. կանայք իրրեւ խորհուրդի և ուխտի կ՝երթան այն տեղերը, որոնք չքեր են, այսինքն ամուլ. կը փորձեն գիրենք՝ եթէ կրցան մտնել այն ծակէն և դուրս ելնել, կը յուսան ուրեմն թէ պիտի ծընանին։ Զոր օրինակ է, Մշոյ դաշտին մէջ Սերկուայ քարը, և Աղձնեաց մէջ՝ Ընձաքար. եւայլն։

Ժ.

Իսկ որ ինչ լեռներուն, քարսյրներուն և զանազան վայրերուն վրայ վէպեր ու աւանդութիւններ կը խօսին, հիանալի և յատուկ ուշադրութեան առնելու բա-

ներ են։ Յայտնի բան է դարձեր Աստղիկն Նոյի աղջիկը լինելը, կամ եթէ Նոյին չէ, մէկ ամենահին Հայու և ամենամեծ Հայու՝ խելքով ու գեղով պերճացեալ աղջիկ մըն է եղեր. որոյ անունով գաւառ չկայ գրեթէ, որ բլուր մը կամ բարձր սար մը նուիրուած չլինի, ինչպէս կան և կը կոչուին Վանայ Վարագայ սարի մէկ մասը. և Մշոյ սուրբ Յովհաննու մօտ Տօրոսի գօտւոյն մէկ կտորը, զորս դիտողն կրնայ նկատել թէ գոնէ այս երկուքն ալ սաստիկ սեպաձեւ, սեւ, լերջ, և շաքարի գլխու պէս բարակ ցից գլուխ մը ունին, իրարու համանման։ Կը կարծեն ոմանք թէ աստղերը դիտելու դիտարան ալ եղած են այս բարձունքները։

Մշոյ դաշտի հիւսիսային արեւմուտքը մէկ լեռ կայ միջակ, որոյ ստորոտով կը քերէ կ'անցնի Եփրատէս գետը ՀՐ պՀՀոյ ջրերու հետ միացած ահաւոր և խրոխտ ընթացքով մը. այդ լեռան տակը Արտերտ գեղն է, և Արտերտ գեղէն բարձր՝ նոյն սարի սրտին վրայ կանաչ ծառեր, ջրի աղբիւրներ, խաղողի որթեր, շէնքի հետքեր կ'երեւին, զոր մին-

չեւ ցայսօր Դաղձ+ կ'անուանեն Հայ բը-
նակիչները։ Այս Դաղօնք անունէն հե-
տեւցընողներ կան նոյն դաւառին ՏԱՐՕՆ
անուանիլը. որմէ քիչ մը անդին կ'իյնայ
նաեւ ՅՐՕՆՔ գեղը, որոյ համար Հնախօ-
սութիւն կը պատմադրէ թէ «Սեմ իրեն
որդիներով և տոհմականով բնակեցաւ,
և անտի ցրուեցան. վասն որոյ և անուն
տեղւոյն մնաց Ցրօնք. մինն յորդւոց Սե-
մայ՝ Դարբանդ անուն բնակեցաւ անդ.
և անուանեաց զտեղին Տարօն» և այլն։
Այս լեռը այժմ Քրդաց լեզուով Քօռ-
կը կոչուի։ Մօտ Դաղօնաց, այդ լերան
ճակատը՝ քար մը կ'երեւայ, որոյ մէջ, կ'ը-
սեն, շատ այրեր կան, և անթիւ օձեր կը
բնակին այդ այրերու մէջ. օձերը ունին
իրենց թագաւոր և թագուհի. թագա-
ւորը արեգակի պէս քարտէն ունի իւր
գլուխը, այսինքն թագ. և թագուհին
բոցագոյն բրչեր, բրչամ, այսինքն վարս.
ունին զօրապետներ, թիկնապահներ.
և ահագին բանակաւ կ'երթան երբեմն
Դիարբաքրու հողը, այն տեղը կան նաեւ
օձերու ուրիշ թագաւորներ, բայց անոնք
ասոր հարկատու են և ռայայ. երբ ա-
նոնք կ'ապստամբին, կ'երթայ սա Ջանգ
ու կռիւ, ու շատ կոտորած կ'անէ, և

աւարով ու գերիներով կը դառնայ։ Այսու Մշոյ բնակիչները և իրենց նախարարները Տիգրանակերտու գաւառնեռուն վրայ առաջները միշտ տիրապետելուն և զանոնք ծառայեցընելուն հետքն է. կը պահեն թերեւս։

Օձեր ալ կան, որ Մշոյ աշխարհի պահապաններն են. և գիւղացւոց ինաս չեն տար։ Տեսակ մը օձերու համար ալ կը պատմեն թէ տները և ջաղացները կը բնակին, և իրենց բնակած տան բաղդը անոնցմով կը յաջողի եղեր։

Հետեւեալը իբրեւ առակ կը պատմեն, թէ՝ «Գեղացի մը, որ արտեր ունէր և ջաղացներ՝ և գեղացւոց մէջ բաղդաւոր ու հարուստ մէկն էր, իւր յաջողութեան բաղդը կը պարտէր այն սեւ օձին, որ ասոր տան մէջ կը բնակէր։ Մէկ հատիկ զաւակ մը կ՚ունենայ այս գեղացին. և որովհետեւ օձը սովոր էր տան մէջ համարձակ շրջելու, երեխան օր մը օձուն հետ խաղալով՝ անոր պոչը իւր ափին մէջ սաստիկ կը ճզմէ. որքան կը ջանայ օձը՝ կարող չլինիր իւր պոչը ազատելու տղուն ձեռքէն. ճարը հատած՝ կը խայթէ տղուն թաթիկը. տղան կը թողու պոչը, ու կը թունաւորի մահանդամայն. օձը իւր խայ-

թածին ու թունաւորածին հետեւանքը գիտնալով՝ կը փախչի տան մէկ անկիւնը կը կծկի. ժամեր կ՚անցնին, և տղան վերջապէս կը մեռնի։

Տղուն հայրը սաստիկ կսկիծէն ուրագը կը վերցընէ օձին կը զարնէ. օձին պոչը կը կտրի և օձը իւր գլուխն ու մնացեալ մարմինը առած կը փախչի տնէն, ու գեղէն դուրս քարերու մէջ կ՚ապրի։ Օրեր կ՚անցնին, բայց հետզհետէ այդ գեղացւոյ բաղդը կ՚աւրուի. օր մը իւր կնոջ հետ կը մտածեն թէ, Երթանք մեր օձը նորէն մեր տունը հրաւիրենք բերենք, որպէս զի մեր բաղդը դառնայ վերստին. և կ՚երթան քարերու մէջ կը կանչեն իրենց օձին. օձը պատասխան կու տայ թէ, «Ինչպէս ձեզ՝ նոյնպէս ինձ փափաղելի է այդ, բայց ա՛լ անկարելի է. քանի որ դուք ձեր զաւկին մահը յիշէք և ես իմ պոչը, իրարու հետ չենք կրնար հաշտ ապրիլ»։

ԺԱ.

Մշոյ դաշտի արեւելեան հիւսիսը՝ կայ մէկ լեռ Նէմրուտ անուն, որոյ մէկ երեսը կը նայի Պուլանըխայ և Մանզկերտու կողմը. մէկ երեսը Խլաթն է առ աւին Վանայ ծովուն, և միւս երեսը Մշոյ դաշ-

տրն է. իւր թեւի տակն ունի նաեւ մէկ փոքրիկ և իրմէն բաժան լեռ մը տանձաձեւ, սեւ և լերկ. այս փոքր լեռն է Գրգուր, որոյ ներքեւն է Զրհոր գեղը. Զրհորի ձախ կողմն է Շամիրամ գեղը, և առջեւը Դատվան գեղը Վանայ ծովուն նաւահանգիստը։ Ռահվայ դաշտն որ ահագին տարածութեամբ և ամայութեամբն կ'երկարի այս լերանց ոտներէն մինչեւ Բաղիշոյ ձորը և մինչեւ Խոյթայ լեռը, և որ իւր մէջ ունի քանի մը քարաշէն խաներ։ Այս Ռահվայի ձմեռը և ձիւները անասելի շատ են ամեն տարի, և բուքը պակաս չէ. ուղեւորները իրենց պատսպարան կ'ընեն այդ խաները, և շատ անգամ քանի մը օր կ'արգիլուին անոնց մէջը փակուած. ասոնք կը լինին որջ աւազակաց, և շատ անգամ միամիտ և անճար ուղեւորները հոն ապաստանած ժամանակ՝ կը լինին բաժին այդ չարագործաց. նաեւ զանազան արհաւրօք լի պատմութիւններ կան այդ խաներուն վրայ։

Դատվան գեղէն Զրհորի սահմաններով դէպ'ի Ղէմրութ 'ի դաշտակողմն դնալով՝ կը տեսնես կարգ մը տնկուածի կամ կանգնուածի պէս սեւ քարեր, որոնք

հեռուէն և մութ ժամանակ կրնան խաբել զմարդ՝ թէ կարաւան են անոնք, կամ մարդ և ուղտ։ Տեղացիք Բէլէ՝ «ուղտեր և «ուղտաններ կ՚անուանեն զանոնք, և որոց համար կը վիպասանեն ու կ՚ըսեն թէ, «Կռապաշտ թագաւոր է եղեր Բէլը, և մեծ զօրքով եկեր Հայոց թագաւորի ու երկրի վրայ կռիւ. Հայոց թագաւորը Աստուծոյ ձեռնով սպաններ է զԲէլ, և հաներ Նէմրութայ գլուխ. այն տեղը փորեր, թոնիր շիներ, մէջը կախեր վառեր է։ Աստուծոյ հրամանքով այն կլորակը ջուր է կտրեր, զմոխիրն հողի տակ իջուցեր, որ չեղնի քամին անոր փոշին տանի։ Բէլի մարդիկ և ուղտերն ալ իրենց վախէն քար են կտրեր։ Մինչեւ այսօր թոնիրն ու ջուրը կայ. և այն ջուրն է, որ սարի տակով կ՚իջնայ Մեղրագետի ակնէն կը բղխէ և այդ գետը կը կազմէ»։ Մեղրագետի ակն կլորակ աւազան մի է Մշոյ դաշտին մէջ, Օձ քաղաքին մօտերը. աւազանի շուրջը սալարսած են քարերով, և անոր մօտ գմբէթ մը կայ։ Ջուրը այդ կլոր աւազանի ընդարձակ գոգէն կը բղխի աւազներ հանելով իւր հետ. և պղպջալով կ՚ելնէ ոչ մէկ տեղէ, այլ բազմաչեայ։ Այս ակի բուն բղխման վը-

բայ ընտիր վէպեր ունին տեղացիք։ Կը ցաւիմ, որ առ ձեռն չունիմ զանոնք գը-բելու։ Մի միայն ապացուցանելու համար թէ այդ ջուրը Նէմրութայ գանգի լիճն է, հետեւեալը կը յիշեմ, որ կը պատմեն։ Իբրեւ թէ՝ «Հովիւ մը խաշինք կ'արածացներ Նէմրութայ լճին եզերքը. ոչխար դարձնելու համար՝ ըստ սովորութեան՝ իւր ձեռքի ցուպը կը ձգէ, ոչխարը կը դառնայ, հովուի փայտը լճին մէջ կ'իյնայ, և ջրի պտոյտքին մէջ կը կորսուի։ Օրեր կ'անցնին, օր մը այդ հովիւն իւր ցուպը ուրիշ հովուի մը ձեռք կը տեսնէ, կը պահանջէ, հարկ կը լինի ապացուցանել. կ'երթան դեղի մեծաւորին քով. և ցուպին բուն տէրը կ'սկսի իւր ապացոյցը յառաջ բերել թէ, Ես յիսուն տարի է հովուութիւն կ'ընեմ, ամեն մէկ տարին մէկ մէկ ղաղ քսաննոց ոսկի վարձք առեր եմ, և իմ ցուպին մէջը փորելով՝ ոսկիներս հոն լցեր եմ։ Ցուպը կու տան իրեն, կը բանայ իւր փայտէ քսակի բերանը, իրօք 50 ոսկին վար կը թափի. կը տիրէ իւր ցուպին։ Եւ երբ գտնող հովիւին կը հարցընեն թէ ո՞ւստի ձեռքդ անցաւ այս փայտը, կը պատասխանէ, — «Մեղրադետի ական բերանը

մղած էի ոչխարներս, ջուրը իւր փորէն դուրս հանեց զայն » — ։

Արդարեւ նայելով Հայոց ձորին, ուր Հայկի և Բէլի ճակատամարտը եղեր է, և զԲէլն սպաննելէն զկնի երբ Հայոց ձորէն Հարք գաւառը սկիսի դառնայ Հայկը իւր բնիկը, ուղին այս տեղով ուղիղ կու գայ, և այս նէմրութ լեռը, ինչպէս անունն ալ նեբրոմթ է, որ Բէլայ անունն է, իւր գիրքով միայն յարմարութիւն ունի խորենացւոյն ասածին, թէ «Հանեալ կոխէ 'ի լեառն մի բարձր զմարմինն Բէլայ 'ի տեսիլ կանանց և որդւոց » ։

ԺԲ·

Կայ այնպիսի քարակարկառ խումբ մը քարերու ալ Վանայ մօտ Ագրփու քարեր ըսուած ժայռին կից, որ հեռուէն և 'ի մթան նայողները կը կարծեն թէ խումբ մը մարդոց են այն տեղ· ասոնց կ'ասեն Հարն ու Փէռայ ։ Բայց որովհետեւ երկու չեն, այլ շատ· մէկալոնքն ալ կը համարին հարսնեւորները· և անոնցմէ երկուքը՝ որ թեւ թեւի՝ դէմ դէմի են, ասոնք են Հարն ու Փեռան· ու որին գըլուխը կլորաձեւ է՝ Փեռայն նա է· իսկ միւսը որ ուղիղ է վերէն վար, քօղաւոր

հարսն է նա. և իրենց առջեւը մեծ կլոր-
բագլուխ մ՝ալ կայ, այն ալ տէրտէրն է,
կ՝ըսեն, գօտիկ 'ի գլուխ։ Աստոնց քարա-
նալու մեղքն ու պատճառը մանրամասն
ու երկար կը պատմեն. բայց ես չեմ
կրցած միտքս պահել, որքան կը յիշեմ
բովանդակութիւնը այս է, թէ՝ «Աստոնք
առանց իրենց հօր մօր կամքին պսակուեր
են. և սովորութեան ու կրօնական ա-
ւանդութեան հակառակ՝ արեւու ծագ-
մանէն առաջ ժամէն ելեր են. ասոր հա-
մար Աստուած և ծնողք զիրենք անիծեր
են. և այսպէս քար կտրեր են»։

Աղէս օրինակ որդւոց՝ իրենց ծնողաց
և օրինաց հնազանդութեան ու յարգա-
նաց։

ԺԳ.

Կայ և մի տեղ Վանայ հիւսիսային
կողմ Դուլաչէն գիւղին մօտերը Շեղ Լայ
դ-ուը ըսուած հողային բլուրը. որոյ հա-
մար կը գրուցեն թէ, «Մէկ հարուստ՝ բայց
ագահ կալուածատէր քաղաքացւոյ ցո-
րենի շեղջ է եղեր. կալի ժամանակ, ինչ-
պէս սովորութիւն է մինչեւ ցայսօր,
գրդերու շեխեր ու ֆախիները, Հայոց
տէրտէրներ ու վանականները գեղէ գեղ
կը շրջին ցորեն կը ժողվեն, նոյնպէս և

ամեն կարգի աղքատները ու չունեցողները, մշակներ ու վարձկանները կալմաս կ'ստանան կալատէրներէն. մրջիւններու կարաւանը և ճնճղուկներու երամը թիւ ու համար չունին, որք կը կրեն ու կը կրեն։ Իսկ այս ագահ տանուտէրը ամենայն խստասրտութեամբ կը հսկէ իւր ցորենի շեղջին, և ամենեւին ողորմութիւն չտար. խեղճ սարեկներ ու արտուտներն ալ կը քարոզէ։ Աստուած կը պատժէ ասոր խստասրտութիւնը և բոլոր այդ ցորեն իւր տեղը կը դառնայ հողի շեղջակոյտ մը. որոյ շուրջը կը ցուցընեն նաեւ այս մարդու սայլը, որ որայները բարձուած կու գար, սայլորդներով ու սայլին լծուած գոմէշներով հանդերձ քար կըտրած, նոյնպէս և կալուածատէրը, որոյ սիրտն արդէն քար էր»։

ԺԴ.

Լէզքը, իւր անունով և հին պատմութեամբ յայտնի է. ուր Շամիրամի աստուածները մեր Արայ գեղեցկին մեռած մարմինը լզեր ու կենդանացուցեր են եղեր. և Աբայէզ անունով կուռք ու աստուած շինեցին պաշտեցին այն ժամանակ Հայեր այս գեղի բարձր գագա-

թին վրայ, ուր այժմ Ամենափրկչի մա-
տուռն է. և Աշխարհամատրան կիրակին
մեծաժողով ուխտ կ'երթան։ Ուր բեւե-
ռաղիրերով քարեր լցուն են. և ձու-
լածոյ հին պղնձէ կենդանեաց փոքրիկ
արձաններ գտնուեցան մեր օրերը դեռ
ևս քանի մը տարի յառաջ։ Ուր և ինչե՞ր
կան, եթէ Լէղքայ բերդիկը, և անոր
ստորոտները փորուին, քննուին։

Այս Լէղք գիւղի մօտերը կայ մի թո-
նիրի ձեւով աղբիւրի փոսակ կամ ջրհոր,
որ Սո-ըբ Ռոնէր կը կոչեն, ուր յաճախ գը-
նացողներ կան. շատերուն իբրեւ ուխ-
տատեղի, ոմանց ալ հետաքրքրելի։ Մի
միայն մէկ ձուկ կ'երեւի այդ ջուրին մէջ.
և որին որ երեւի, անոր բաղդն ու ուխտը
կը կատարուի։ Դա՝ կնկան կերպարանք
ունի եղեր. և արծաթէ օղն ալ իւր քթին
անցուցած՝ կը տեսնուի տակաւին։ «Ե-
րէցկին է եղեր դա. կին կարի գեղեցիկ.
երբ նստած թոնիրի շուրթն հաց կը թխէ,
աղքատ մը կու գայ հաց կ'ուզէ, կու
տայ։ Կերակուր կ'ուզէ, կու տայ։ Գինի
կ'ուզէ, կու տայ։ Թշուառականը կը հա-
մարձակի նաեւ պաղ մի ուզելու. երէց-
կինը կը վարանի. բայց կը մտածէ թէ
աղքատ Ռէհաբոս է. ի՞նչ կայ, մե՛ղք է.

գուցէ վարձք է. պաղն ալ կու տայ։ Եւ յանկարծ նոյն վայրկենին երէցը ներս կը մտնէ. երէցկինը ամօթէն ու ահէն ինքզինքն կը ձգէ 'ի թոնիր կրակին մէջ. տէրտէրն ալ զինքն 'ի վրէն։ Բայց տէրտէրը կը մրկի. իսկ երէցկինը՝ կրակն ջուր դառնալով, ինքն ալ ձուկ, Աստուծոյ հրամանքով յաւիտենական յիշատակ կը մնայ նոյն տեղ»։

ԺԵ.

ՍԻՓԱՆ լեռնադաշտի մը անունն է, որ Նէմրութի գօտին է, բարձրադիրք. և կ'երկարի յարեւելս՝ կապուելու այն մեծ ու շատ բարձր սարին ոտքը, որ Սիփանայ Սար կ'անուանուի. որպէս թէ Նեմրութն լինէր Բէլը, և Սիփանը մեր Հայկ, որ գրէն իր ոտքին տակ կապած է։

Վերին և ներքին Սիփան անունով Հայոց գեղեր ալ կան այս գօտիին վրայ, և ուրիշ զանազան գեղեր ալ։ Խիստ անուանի է խոտաւէտ և օդաւէտ լինելով. ուստի կը տեսնուի ետեւէն Պուլանըխայ մէկ մասն և Մանազկերտ. իսկ առջեւն են Խլաթ ու իւր գեղերը. Արծկէն և իւր գեղերը. Խոռանց մեծ գեղը. Սքանչելագործի վանքը, և այլն։ Այս առջեւի մասն

անուանած Վանայ ծովու երեսն է, և ընդհանրապէս ծառապարդ են բնակութիւնները, և բաւական զառ 'ի վեր դիրքը մը ունենալով, պատուական և առատ պաղպաղ ջրեր կը հոսեն. բնակիչը կը վայելէ Վանայ ծովու անմահական օդը, անոր դեղածիծաղ երեսը, Վանայ բերդին ու իւր այգեստաններայց, Արտամետու ծառաստաններաց, և յայնկոյս եղած ծովեղերեայ բոլոր շինից և աւանաց աքանչելի տեսարանը, ամենացանկալին Վարագայ լեռը, Հայոց ձոր, Ռշտունիք, Շատախու և Մոկաց լեռները, Նարեկացւոյ Առ տէրը, Աղթամարայ, Կտուց և Լիմ անապատաց կղզիները, և սուրբ տաճարաց երկնանման գմբէթները։ Ծովու հարաւային կողմէն ալ Կարճկանից անտառները, և ծովու երեսը լողացող առագաստաբաց նաւերը։ Եւ մէկ վայրկեան այս Փիսանայ հովիտը, թաւալի՛ր, հանդիր, ընչէ անմահական ծաղկանց և դալարեաց մէջը, ուր վտակ կը խոխոջի, ուր սոխակը կը դայլայլէ, ուր կռունկը կը կռայ. ուր ծովը առջեւդ կը ծփծփայ. երջանկացիր քիչ մը։ Է՛. տէ՛ել, Քիւրտ Մողրովի խոտնոցն է այդ. այս տեղը Հասնանցի Քրդերու տեղն է։

Ե՛ւ քիչ մը յառաջ երթանք. ահա Սիսիանայ սարը, այդ ահագին, բարձր, մասիսակերպ, սարը զոր և Թովմաս Արծրունին Մասիք կ՚անուանէ, և Գերմանացի վակները՝ Գոռոզ լեռ։ Բնակիչները մէկ բան կ՚երգեն այս լերան վրայ իբրեւ հին երգ, և կ՚ըսեն.

— Նոյայ տապանն եկաւ 'ի Սիսիան,
Ասաց,
«Սիսիան, ա՛ռ դիս, ա՛ռ դիս»։
Սիսիանն ասաց,
«Գընա՛ 'ի Մասիս, գընա՛ 'ի Մասիս,
«որ մեծ է քան դիս, որ բարձր է քան դիս»։

Տապանն Կորդուաց լեռներէն գալովառ Սիսիան՝ Գրգուռայ գլխով անցեր, և քսուելով կամ գրգռուելով՝ այս լերան «ռ-ռ-ի» գլուխը տաչեր անցեր է եղեր։ Սիսիան լեռը վեհափառաբար իւր ճիւնոտ գլուխը ամեն բարձր լեռներէն վեր կը ցուցընէ Վասպուրականի և Տարօնոյ բոլոր կողմերէն գրեթէ. իւր ծովային երեսը խիստ զուարթ է, բայց մէկալ կողմը՝ զոր տարածուած է երկարօրէն Մանազկերտու դաշտը պստիկ պստիկ ու կլորակ աստիճանաբար բլուրներ ունի ձեւացուցած՝ որ սեւ ու քարուտ են։

Միաքդ բե՛ր Ցովը, որ իւր ցաւոց

օրերու մէջ պառկած լինէր մէկ կշտին, ծունկ ծունկի դրած, ոտները ձիգ պարզած, մէկ ձեռքի արմունկը գետին՝ և թաթը երեսին, գլուխը բարձր պահելով՝ կրթնած, տքար · թափէր արցունք իւր աչքերէն, և այդ էր Սիսիանայ վտակները։

Եռային որդերը իւր անձին վրայ, և այդ էր Հասնանցի Քրդերը։

Թափէին իւր գլխու մազերը, տրորուէր գանգի մորթը, և երեւէր լերկ ոսկորն ուղեղին · և այդ էր Սիսիանայ ձիւնապատ ու սառոյցի որդերով եռացած գագաթը։

Թշնամանէին գինք իւր հայն ուտողները, դրացիներն ուրարեկամները, և ատոնք էին Լաթառայ շեխեր ու աւաղակ Ֆախիները։

Իւր կշտին ու կողին վրայ հանէր խոցերը, ու այդ նման էր Սիսիանայ սեւ սեւ կոյտ կոյտ բլրակներուն։

Արդէն վաղուց մեռեր էին իւր դստերք ու որդիք · թալան տարեր էին իրեն ոչխարի հօտն, անդեայք, ուղտք, էշք և ջորիք։

Այն մեծ տարածութիւն Մանազկերտու դաշտին, որ քար ու քուայով — այսինքն մանր և մեծ ժայռերով — լի է,

անբոյս, անմխիթար, և տխուր, դու
ասես լինէր Յովբայ աղբիւսը. և խեցի-
ները, որոնցմով իւր վիրաց թարախն է
քերեր։

Այս է այդ լեռան համառօտ նկարագիր։

Բայց վէպը կը պատմէ բնակչաց բերնով
թէ՝ «Սիսիանայ սարը Հայոց մեծ թագաւորի
բերդն է եղեր։ Թէ՝ մէկ ծածուկ դուռն
կայ այդ սարին, որ Մանազկերտցի Քիւրտ
մը միայն գիտէ, և առանց պապկենական
սեպհական աւանդութիւն է որ միայն
հայրն իւր տղային ծանուցանէ։ Թէ՝ տասն
տարին միանգամ այդ Քիւրտը Սիսիանայ
դռնէն ներս կը մտնէ կ'երթայ, և քանի
մ'օր դուրս չելլեր։ Թէ՝ այդ Քիւրտը՝
թէպէտ և դուռը ցոյց չտար, բայց կը
պատմէ թէ՝ ահագին քաղաք մը կայ շին-
ուած Սիսիանայ տակ, կամարակապ ու
հաստատ շէնք, սաստիկ քամի կը խաղայ
մէջը, բայց լոյս չկայ։ Թէ՝ տներ պա-
լատներ, շուկայներ ու հրապարակներ
կան մէջը։ Թէ՝ մէկ քանի երկաթէ դռներ
կան, որ միշտ գոց են. և մենք կը կար-
ծենք որ թագաւորի ճակէրը — գէնքեր —
այն տեղ լինին։ Թէ՝ ամբար մը լցուն
եփած շոր հաց կայ, պատոխմոն։ Թէ՝ մեծ
գետ մը քաղաքի մէջէն կ'անցնի։ Եւ

այլ շատ աւելի բաներ, որոնք չկրցայ ամբողջն իմանալ ու գրել։ Ամփո՛ս։ Ամփանը այդ շրջապատող գաւառներու առ հասարակ բնակչաց Ողիմպոսն է և Պառնաս. իրենց սէրն ու դիւցազնութիւնը անոր կը նուիրեն. Մուսայից և քաջաց միանդամայն շնորհատու կը դաւանեն զայն։ Աւազակները անոր մեծ ու ընդարձակ խորշերու և այրերուն մէջ կ՝ապաստանին. զէնքի և ձիու կրթութիւնը Ամփանայ լեռնադաշտին մէջը կ՝ուսանին. գեղերու հօդաղները և դաշտը հաց բերող աղջիկները՝ երբ իրարու սիրահարին, կ՝առեւանգեն զիրար և Ամփանայ կ՝ապաստանին։ Ամփանայ դաւարաւէտ մարդերու մէջ վրանի տակ բնակող ոչխար կթող Քիւրտ աղջիկները՝ երբ երիտասարդ Քիւրտ խոռ հովուի մը սիրահարին, նախիրէն կը բռնեն կրտած ձի մը, և զոյգ հեծած անոր քաւակին ուղղակի կը քշեն Ամփանայ սարի սարաւանդները։ Ձիու գլուխը ետ կը դարձընեն, վարոց մը կը զարնեն. ձին կը դառնայ իւր երամին, ամենայն հաւատարմութեամբ դաղտնապահ լինելով և ոչ ումեք պատմելով իւր բեռին ուր լինելը։ Թէպէտ դիտնան ալ վախուցելոց

պապն ու մամը, բայց չեն երթար եռեւէն, պատկառելով կամ պատիւ պահելով Սիփանին, ինչպէս Լոնտրայէն ետ չեն առնուիր հոն փախչող և ապաստանող քաղաքական յանցաւորները։ Այս է պատճառը, որ այդ Հասնանցի Քրդերը իրենց քաջաց յաղթելուն երգը, կամ քաջարար մեռնելու եղերգը, միշտ Սիփանայ կոչումով կ'ոգեւորեն, անոր անունով կ'օծեն իրենց տաղին առղերը, և բանին բառերն ու տուները, և անոնց սիրահարական շատ մը երգերու զարդն ու խանդն Սիփանայ սարն է. թէպէտ մինին ատանք Քրդերէն լեզուով, բայց շատերու յօրինողք Հայեր են։ Նշանաւոր է այն խաղը, որ կ'սկսի այս բառերով. «Սո՜ւբ Սէֆոնէ՛...» որուն մէջ կը պատմուի սեւ տղայի մը ու աղջկան մը վէպը, որք միմեանց սիրահարելով փախած են Սիփանայ գլուխ. և երեք օր երեք գիշեր առանց հացի զիրար սիրելով միայն ապրած են. բայց երբ քաղցը նեղեր է զիրենք, սեւ տղան հրացան առեր ելեր որս մը զարնելու, գոնէ զայն ուտեն ու քիչ մը կազդուրուին. աղջիկն ալ քարի մը վրայ կայնած կը դիտէ. սեւ տղայն կը պատահի եղնիկի

մը, հրացանը կը պարպէ, կը դիպցընէ եղնիկի կողին, արիւնը կը հոսէ, եղնիկը կ'եղնի վիրաւոր, և կ'ուզէ վազել, բայց կ'ինայ . . . : Սեւ տղէն գինքը կը ձգէ որ եղնիկը բռնէ չփախցընէ . և ահա ինքն ալ գահավէժ կը հոսի քարերէն, և կտոր կտոր կ'ինայ մեռեալ : Աղջիկը ծնկերուն դարնելով, վարսերը փետելով, կը նստի քարին վրայ, աջ ձեռքը երեսին, ձախ ձեռքը վէր ծծերուն դրած, կ'սկսի սրտառուչ սարսուռով մը իւր ողբը ողբալ . յորում կը կշտամբէ սեւ տղայի խստասրտութիւնը, թէ՝

«Ինչո՞ւ մինակ ելաւ որսի :

Թէ՝ Ինչո՞ւ զարկաւ եղնիկին, որ դուցէ այն ալ սիրական մ'ունէր իրեն այս վայրերուն մէջ մեղ պէս :

Թէ՝ Ահա սիրոյ Աստուածը արդար ու վաղահաս ըրաւ իւր դատաստանը :

Կ'անիծէ խստասիրտ մարդիկ՝ որ արդեւք կը լինին բնական սիրոյ . և այսպիսի աղետից առիթ կը լինին :

Թէ՝ Իրեն համար ելաւ լեռը ինքն, իրեն համար և իրեն հետ կը մեռնի» :

— Եւ ահա ինքզինքն ալ կը գահավիժէ քարերէն 'ի վայր սեւ տղայի սիրոյն ու մահուանը վրայ :

ԺԶ.

Վանայ ծովու շրջապատէն ընթանալով կ՚ելնի Ալատաղի գօտին, որ է Ծաղկէ լեռը, որոյ տարածութիւնը կ՚երթայ մէկ կողմէն Ալաշկերտ։ Բայց մենք Աղիովիտն՝ Արմէշն, Առբերանին և Բերկրին հանդերձ շատ մը Հայու անունով ու Հայու բնակիչներով լի գիւղեր ու դմբէթով վանքերը, եկեղեցիները, դալարախիտ հովիտները, և արտ ու անդաստան, Բենդէ մահու գետը, և աւագի չափ շատ ու մանր փոքրիկ ձուկերը տեսնելով՝ 'ի հիւսիսոյ դառնանք դէպ 'ի Վան. և ահա Բաղ բլուրը հոս է. վայր աննման առ ծովուն. ջրով, խոտով և օդով անզուգական. ինչպէս նաեւ անուանի նուինական։ Ոչ այս կողմերու և ոչ Ալատաղի սարին ու քարայրներուն, ոչ Թոնրիկի հրաբուխ լեռան, և ոչ անոր կողմերէն բղխած ծծումբի ջրերուն, ոչ Աբաղու դաշտի 366 աւեր գեղերուն, և անոր մէջ ցցուած ապառաժներուն վրայ եղած վէպերը՝ չեմ կարող յիշել։ Եւ դառնանք նորէն Սիփանայ տակը, և անցնինք Մանազկերտը։

Թաշիքն անունով Քրդու գեղ մը կայ

հոս, և չեխ մը որ անյիշատակ տարի-
ներէ հետէ ատոր ազգ և տունը
այս գեղն է իբրեւ թէ։ Ութն քայլ մե-
ծութեամբ գերեզման մը կայ՝ այս չեխի
տան առջեւ, գեղի բերան, որ քարա-
կոյտով մը բարձրացած է. անց ու դարձ
ընողները և մերձաբնակ Հայերը այդ
գերեզմանին կ'ըսեն Աշուուրի գերեզման.
իսկ չեխը կ'ըսէ՝ իմ նախնիս է, զոր կը
մեծարէ իբրեւ մարգարէի շիրիմ։ Այդ
գերեզմանը և թաշգըն գեղը Մանազ-
կերտու մէջն է, ուր էր Հարք. և այս-
պէս հսկայ գերեզման մը, և աշուուր,
որ է Ազնաւոր, Ազնիւ, Ազն բառը՝ իբ-
րեւ տոհմային գլուխ, տանուտէր ազգի՝
նշանակութիւնը կու տայ։ Ես չեմ կրնար
վարանիլ ըսելու թէ, դա՝ գուցէ Հայ-
կին, կամ Հայկակի մը, կամ վերջապէս
Հայ նահապետի մը գերեզմանն է։ Այս-
պիսի մեծաղիր և Ազնաւուր անունով
գերեզմաններ կը գտնուին ուրեք ուրեք,
և այդ անունէն ու մեծութենէն իկձ կը
թուին թէ Հայոց նշանաւոր Հարանց
հսկայից, կամ նախարարաց շիրիմ լինին։
Իսկ չեխերու տիրելուն երբէք զարմա-
նալու բան չկայ. ատոնք կամ հայու-
թենէ դարձած են կամ անհայ գտնելով

այդ տեղերը եկեր տիրեր են, և իրենց բառովն ըսելով՝ օճախը չիներ են։ Շեխերը առհասարակ օճախ կ՚անուանեն իրենց տները, իբր թէ հաց, թանապուր մը և տաք ջուր մը վառած օճախին վրայ միշտ պատրաստ ունին տալ իրենց տուն եկող դնացողին, ընդունիլ հիւր, լինել պաշտպան և պատսպարան իրենց դիմողներուն. բայց շեխութեան անունով՝ շընորհ ունեցած են տիրութենէն շատ մը գիւղեր, ընդարձակ հողեր ունենալ իրենց, անոնց հողային տուրքերն ստանալ գեղացիներէն, որ իբրեւ տեսակ մը ճորտեր ունենալ է, և իրենք բոլորովին աղատ լինել հարկէ, եւայլն։ Այս տեսակներէն շատ կան Պուանըխները որ է Ապահունիք, Մշոյ դաշտը, Վանայ գեղերը, Խիզան, Մոգս, Ռշտունիք եւայլն։

ԺԷ.

Ապրի գեղը Պուլանըխայ մէջն է. մեծ օճախներ կան շեխերուն այս տեղը, որոց ծերերէն ըսելով պատմողներ կան թէ Սոցա նախնիք եղեր են Հռոմ եպիսկոպոսներ։ Յոյները Հայաստանի մէկ բաժնին տիրած էին արդէն մեր Աբշակունեաց անկման ժամանակները. իսկ

միջին դարու սկիզբներէն՝ մեծն Հայաստան, որ կարելի է ասել այսօրուան Տաճկի Հայաստանի մասը, բոլորովին Յունաց բաժինն է եղեր. Կարինը՝ Յունաց կուսակալութիւն էր և գաւառ։ Այս մեր ցոյց տուած վայրերն՝ Կարնոյ թեւերն են. անբնական չէ որ Յունաց դաղթականներ եկած լինին այս կողմերը իրենց եկեղեցական ուխտիւ, որոնք Քաղկեդոնի բանակները կը կազմէին բարոյապէս. և կ՚առաջնորդուէին անխնայ ջարդել և կորուսել տալու Հայոց տուները և գաւակները, պաշտօնեայ գոլով Քրիստոսի, պաշտօն վարելով մոդերուն Յազկերտի։ Ադոնց թողուցած աւերակները դեռ կը մնան ու կը ծխան Հայաստանի հողին վրայ, Հայոց սրտի և դլխի մէջ։ Ասոնք վանքեր և եկեղեցիներ ալ ունեցած եղեր են, ինչպէս մինչեւ այսօր ցոյց կու տան Շուշարայ գաւառի մէջ։ Վարդուայ Գոնտէմիր գեղը՝ հերու բլուր մը քակեցին եկեղեցին շինելու համար քար հանելով. բլուրի տակէն տաճար մը երեւցաւ, որ բոլորովին յունական ձեւ և շինք էր։ Ուրիշ շատ կան այդ Շուշարայ, Վարդուայ և Խնուսայ կողմերը։ Վերոյիշեալ Ասլրի գեղի շեխերու տան

— օճախի — մոտը քար հանելու համար փորելով՝ գտած էին մէկ մարդաչափ բարձրութեամբ քարէ արձան մը մարդակերպ քանդակուած, որուն վրայ Յունարէն գրեր կան եղեր, զոր Մամիկոնեան Վարդան Աղան վերցուցեր տարեր էր շեխերէն խնդրելով։ Արդ այդ շեխերը, ինչպէս ըսած են, լինելով Յունաց եպիսկոպոսներ, և ինչպէս որ են նոքա ցարդ՝ հողի, դեղի և ազարակի տէր, ու ճոխ մարդիկ, Արաբացւոց արշաւանաց ժամանակները՝ չուզելով իրենց ունեցած կացութիւնը կորսնցընել, փոխեր են կրօնքնին, և իրենց առջի վիճակը պահելով՝ միանգամայն և կին առնելով վառ պահեր են իրենց օճախը և շարունակեր են մինչեւ ցայժմ։ Այսոնք են սաստիկ մոլեռանդ և Տէրութեան օրինաց հակառակ շատ անգամ զՀայերը կեղեքող. և այս ախտը կամ բնաւորութիւնը աւելի Քաղկեդոնականաց թշնամութեան յատկութիւնն է, քան Մահմէտականաց։ Ես կը հաւանիմ ընդունել այսպէս . . . ։

ԺԸ.

Մանաղկերտ Բօսդան խոյա անունով մէկ

գեղ կայ, և այդ գեղին կուշտը դարձեալ մի գերեզման Աղնաւուրի, որոյ երկարութիւնը քսան կանգուն է կ'ըսեն տեղացիք. բայց քիչ մը չափազանց է։ Այդ քարերը, որ ակօս ակօս իբրեւ պարտիզի թումբ և առու են, պարտէզ է եղեր. և Քոբապարդէզն գեղին անունը տաճկերէն ըսեր են Բօսդան խայայ։

Ահա և անոր վէպը։

Այս մեռած Աղնաւուրը հեռու տեղերէ մի չքնաղ և հուրի հրեղէն աղջիկ կը յափշտակէ կը բերէ այս գեղը. պալատ կը շինէ, կը նստեցընէ մէջը, պատուհանները կը բանայ մեծ դաշտին և Մուրատ գետին վրայ, և ինքն պալատի շուրջը կը շրջի հակելու որ իւր նախանձորդները չգան փախցընելու աղջիկը։ Աղջկան անունն է Շիրին, — Միրուն —։ Բայց որքա՜ն ջանքեր ըրած է, չէ կրցեր յինքն յանկուցանել Շիրինի սէրը. նա միշտ զանազան և անհնարին պայմաններ կ'առաջարկէ եղեր Աղնաւուրին, որոնցմէ մէկն է նաև այն, եթէ Աղնաւուր կարող լինէր փորել ու վարել այդ քարեր ու Բօսդան տընկել, և ինչպէս հասցընէր Շիրինին, Շիրինը ուտելով զայն՝ պիտի սիրէր զԱղ-

նաւուրը և լինէր անոր կին։ Քսան լտրանոց երկաթէ բահ մը ձեռք կը ձգէ Ազնաւուրը, աշխատելով այդ քարերը կը փշրէ ու իրրեւ հող պարտէզ կը շինէ, ինչոյ կը տնկէ կը հասցընէ, կը տանի Շիրինին մեծ վստահութեամբ և վերջին յուսով, թէ լրացած են այլ եւս պայմանները. ահա պիտի միանան միմեանց հետ։

Շիրինը կը խորհրդանդէ Ազնաւուրին, թէ՝ քուկդ եմ այսուհետեւ. դէ՛ գնա՛ Սիսիանայ դեռ-ելքն մէկ ման հարիսայ բեր ուտենք՝ ու գինչոյն 'ի վրէն. ու մեր հարսնիքն ընենք։

Ազնաւուրը հարբած ու շըշկռած Շիրինի սիրով, կ'երթայ, ու ապարանքի դռները բաց կը թողու։

Ղոմտ՝ որ Շիրինի բուն սիրահարն է, ու միշտ Ազնաւուրի պոչին եռեւէն ու ստուերի տակէն կը շրջէր, ու աչքով, ընքով պատուհանէն Շիրինի հետ կու տար կ'առնէր, այս առթիւ կը մտնէ ապարանքը. կը գրկէ զՇիրին, և զիրար կ'առնեն ու կը փախչին։

Ազնաւորը ետ դառնալուն կ'իմանայ բանը, ու զարմանալով կնկան անհաւատարիմ և խորամանգ բնաւորութեան վրայ,

թէ՝ Ի՛նչպէս կը խարեն ու կը յաղթեն աչ-
խարհի ամենէն զօրաւորներուն, ալ չու-
ղեր եռեւէն երթալ, ալ չուղեր այնու-
հետեւ ապրիլ անգամ։

Իւր բահովն ինքզինքն կ՚սպաննէ, ու
գեղի կնկտիքը ՀԷՐ կը կապեն Ազնաւու-
րին վրայ, և երիտասարդները կը վեր-
ցընեն կը թաղեն։

Ազնաւուրին դէ՞ ալ կ՚ըսեն վիպա-
սանք։

ԺԹ.

Դեւը, սովորաբար ժողովրդական վէ-
պերու մէջ դիւցազնի նշանակութիւն ու-
նի, կամ հսկայի, տիտանի։ Այսօր եւս
եթէ յաղթող և հսկայ մէկի մը նկարա-
գիրն ընեն, դէ՞ կամ Աֆրոհոբ բառերը
կը գործածեն. և միշտ այսպէս հասկըց-
ուած է, թէ՝ Դեւերը լեռներ ու այրերը
կը բնակին, անլոյս գբերը, անջուր հո-
րերը, և անջրդին անապատները։

Թէ՝ անոնցմէ մէկը հազար մարդու կըր-
նայ յաղթել։

Թէ՝ լեռներու չափ քարեր կրնան
վերցընել դնել։

Թէ՝ մարդու միս կ՚եփեն կ՚ուտեն։

Թէ՝ թագաւորի աղջիկ կը դողնան կը

տանին իրենց կին ընելու համար, և այդ աղջկանց առջեւ շատ անձնանուէր և հպատակ կը մնան։

Թէ՝ աղջիկները միշտ անկարելի պայմաններ կ՚առաջարկեն Դեւերուն. զոր օրինակ, կ՚ուզեն ոսկի մուկ՝ ոսկի կատու. ոսկի ագլոր՝ ոսկի աղուէս. ոսկի նապաստակ և ոսկի որսկան, որոնք այնպէս շինուած լինին, որ կենդանի եղածի պէս իրարու ետեւէ վազեն, բայց չկարենան իրարու հասնիլ ու բռնել։

Խորհրդաւոր գործ աղջկան և Դեւի վիճակին։

Նաեւ, կամ վիշապ մը սպաննելու, կամ անմահական պարտիզէն ոսկի խնձոր բերելու պայման առաջարկելով, և քաջի մը կամ թագաւորի մը գլուխն ուզելով, ու հեռու տեղերը ղրկելով։ Ասոնցմով կ՚զբաղեցընեն զԴեւերը առանց տակաւին անոնց կին ըլլալու, մինչեւ Դեւերը կամ սպաննուին, կամ ճատուկ պառաւներու հնարքով աղջիկները խոյս տան ազատուին։

Դեւ, արմատէ նաեւ Դիւցազն բառին։

Ի.

Թէ+ռն՝ խնուսայ մէկ մասն է, որ քանի մը գեղեր կը պարունակէ իւր մէջը. և

խնուսը՝ Մանավկերտին կցորդ է այն լեռներով, որոնցմէ կարմիր և սպիտակ աղի առատ և մաքուր աղբիւրներ կը հոսեն մշտաբուղխ. և այսու հաւանական է ասել թէ խնուսն է Մանանաղի։ Թէքմէնայ մէջ Օրոպոշ-ջէվիրմայ ըսուած գեղին մօտ քառասուն գերեզման կայ խաչքարերով, զոր Խը-Խլար կ'ըսեն. և ամեն մէկ գերեզմանի երկայնութիւնը քսան կանգուն կը չափեն։ Ասոնք ալ իրենց վէպն ունին. բայց ես ձեռնհաս չեղայ հաւաքելու։

Խըրն գեղին մօտ լեռնապատ հովիտի մը մէջ ջրի մեծ ակ մը կայ, որ ջուր կը բղխէ տարուան երեք ամսուան մէջ միայն, Մայիսին, Յունիսին և Յուլիսին. ջուրը առատ, պուլալ, և պաղ, որ կը բաժնուի տասն և չորս առուի, և կ'երթայ ջրելու խնուսայ դաշտի զանազան գեղերու արտերն ու մարդերը. ուրիշ ամիսներուն որ երթաս, բոլորովին ցամաք կը գտնես ակը. միայն առուները կրնան հաւատացընել քեզի՝ գեղացւոց պատմածը։ Ամեն տարի Համբարձման տօնին խնուսայ գեղերու բնակիչները՝ մասնաւորապէս այս ջրոյն շնորհքը վայելողները մէկմէկ գառն կ'առնեն կու

դան այս ական վրայ և մատաղ կ'ընեն, կը խնդան, կը պարեն, զԱստուած կը փառաբանեն, ու կ'երթան։ Ընդհանրապէս կը խօսին թէ՝ բուն Համբարձման օրը կ'սկսի բղխել այդ ջուրը. և ո՛ր տարին որ պատահի չբղխել, կամ սակաւ բղխել, այն տարին Խնուսայ բերքը նուազ է. միով բանիւ՝ Խնուսայ Ներոսն է այս ջուրը, և Ամանորակի տօնը՝ Համբարձման տօն։ Ջրոյն ակն կոնքաձեւ աւազանի մը պէս է. այս աւազանի մէջտեղ կայ մի գերեզման իբր երկու կանգուն բարձրութեամբ և հինգ կանգուն երկարութեամբ, քարով և հողով բռուած, և հողերու մէջ վարդի թփեր տնկուած. ջուրն ելած ժամանակ այդ գերեզմանը կը շրջապատէ լճակաձեւ, և շիրիմը կը դառնայ կղզի մը անոր մէջ։ Այս գերեզմանը իբրեւ սուրբ կը պաշտեն Հայերը Քառասուն Մանկունք անունով, և Քիւրտերը՝ Հալիլ Բաբա։ Մէկ շեխ՝ Մուբատ անուն, կը նստի Խրրթ գեղը, և կը համարի թէ այդ գերեզմանի մէջ թաղուածին սերունդն է ինքն. կ'ուզէ հաստատել իւր տունը ու տոհմն այդ Հալիլ բաբայի օճախով ու անունով. և ասոր համար երկու տարի կայ միայն որ

տաճկական դերեզմանաքարի պէս երկու քար անկել տուեր է դերեզմանին երկու ծայրը։ — Է՛հ, միթէ կարելի՞ է դերեզմաններն ալ կրօնափոխ ընել։

Իսկ Հայերու պատմութիւնը՝ աւանդութեամբ այս է։ Թէ՝ «Տէրտէր մը իւր լոյս հաւատքն ուրացեր է, և քառասուն հարամի անօրէն ընկերներով շատ տարի աւազակութիւն է ըրեր։ Տարուան մը մէջ, աւուր մէկը, մեծ Զատկին, այդ ուրացողն իւր ընկերներով կու գայ Էրիս գեղը. գեղի երէցին պատարագ մատուցած ժամանակ կ՚ուզէ պաշարել եկեղեցին, տաճարը թալանել, և աղջիկները ու հարսները գերի տանել։ Աւազակաց գլխաւորը՝ ուրացող քահանայն՝ հրաման կ՚ընէ իւր ընկերներուն, որ քիչ մը հեռուն կայնին, ու ինքը տաճարի լուսամտոյց որպէս թէ լրտեսելու համար ներս կը նայի, այն պահուն է որ ժամարարը կը կարդայ՝ «Առէք կերէք... 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց», և ժողովուրդը մէկ ձայնով կը պոռան՝ «Մեղաւոր եմ քո առջեւ Ա՛ստուած, խոստովանիմ և հաւատամ», ու կ՚ինան քիթերնի վրայ երկրպագութիւն ընելու։ Այս ձայներէն ու արարողութենէն զգած-

ուելով ուրացողը, ու յիշելով առաջուայ իւր ունեցած Քրիստոսի կարգն ու հրեշտակի կրօնը, Աստուած կը բանայ անոր սիրտը, զեղջի կու գայ, արցունք թափելով կը մտնէ ժամն. մեղայ կ'ըսէ, կը խոստովանի, սրբութիւն կ'առնէ, դուրս կ'ելլէ, իւր դարձն ու արածը ընկերներուն կը պատմէ, ու չթողուր որ ինքնամը տան գեղացւոյն ու եկեղեցւոյն։ Կը հեծնեն կ'երթան. ընկերտանք որչափ կ'աշխատին՝ չեն կարող ուրանալ տալ. կը հասնին Խըրթայ մօտ, ու այն տեղը քառասունն մէկ եղած՝ կը նահատակեն զայն. լոյս կը ծագի վրան. գեղերու Հայեր երէցները կու գան կը թաղեն. ու Աստուած անոր գերեզմանի ու թափած արիւնի տեղը այս ջուրը կը պարգեւէ այդ գեղերուն»։ Գուցէ անոր անուան ուղիղն լինի Քառասուն ակն, և ոչ թէ Քառասուն մանկունք. և այդ նահատակի անունը՝ իւր ուրացութեանը գուցէ Հալէլ փոխած լինի, և այդ անունով ալ՝ Հալէլ Բաբա ըսուած։

ԻԱ.

Խնուսայ մէջ Հարամիկ գեղին մօտ դարափի մը վրայ կ'երեւան պրակ մը

ծառեր, զոր Կայէնի ծառեր կ'անուանեն բնակիչքը, և Խնուսայ դաշտի հարաւը մէկ բարձր և մեծ լեռ կայ, զոր Ղամէքայ բերդ կ'անուանեն. իսկ Քիւրդն ու տաճիկը Խոռոռ ղալայ։ Այս լեռը մեծ բազկով մը կը կցուի Բինգէօլէն։ Ժողովրդոց պատմածներէն սա կը հետեւի, թէ՝ «Բինկէօլն է եղեր Ադամայ դրախտը, որմէ կը բղխին գետերը Երասխն ու Եփրատը, և, Խնուսայ դաշտն է այն երկիրը, զոր վարեր ու ցաներ է Ադամ. Ղամէքայ բերդն է Աբէլի խաշնարածութեան վայրը. և, երկրագործ Կայէնը՝ Կայէնի ծառերու տակն է բնակեր։ Ադամայ որդիք բնակեր են այս սարի և դաշտի վրայ։ Կայէնի շինած քաղաքը այս սարի ստորոտն է եղեր, ուր է այժմ Քաղքիկ գեղը։ Քաղքիկայ մօտն է այն կլորաձև բայց ամենապարարտ և վայելչադիր փոքրիկ հովիտը, Աբէլ գնոն — յաւէրժադալար — անունով, ուր սպաննուած է եղեր Աբէլը։ Որսորդ Ղամէքը իւր բերդէն այս սարէն շրջելու ելած ատենը հանդիպեր է Կայէնին ու սպաններ»։ Բլրակ մըն ալ ցոյց կու տան, զոր Կայէնի գերեզման կ'անուանեն։

ԻԲ.

Աղջամկիք գիւղը մօտ է Գաղքինու, որ Ղամէքայ բերդի ստորոտն է շինուած. այս գեղէն դէպ՝ի լեռը բարձրանալով մէկ քառորդ ժամու ճանապարհ, հեղեղատի մը փոս կայ բացուած։ Այս հեղեղատին բերանը՝ ասկէց իբր քսան տարի յառաջ, գեղի հովիւներ և եղնարածները գտան մէկ տարօրինակ մեծութեամբ գլխու մը ոսկոր. որոյ գանգը, ծնօտները և կզակը ամբողջութեամբ միացեալ էին, ինչպէս մորթով ողջ գլուխ մը կենդանի եղած ժամանակ. գեղացիները իրենց քննութեամբ հիանալով ադոր անհեթեթ մեծութեան և ձեւոյն, վրճռեր են իրենց մէջ, թէ՝ սա Դեւի մը կամ Աղնաւուրի մը գլուխ է։ Միջոցէ մը զկնի գեղացիները կ՝երթան այն փուլէն կաղմին հոդհանելու՝ իրենց համար թոնիր և պուտուկ շինելու համար, քիչ մը կը փորեն և կը տեսնեն շարք մը մեծամեծ ոսկերաց, գեղի կտրիճները կը ժողվին, յարդի սակառները կ՝առնուն կուգան, և քանի մը հատ ալ չուան, կը ժողվեն ոսկորները կը բերեն գեղը. ամեն մէկը իւր բերածն իւր տունը կը տանի

կը պահէ։ Այն միջոցին Մշոյ Ս. Կարապետի վանքէն՝ իւղ, մատաղ, պաղի և այլ հոգեւոր նուէրներ հաւաքելու համար եկող նուիրակ վարդապետը կը հանդիպի այն գեղը. գեղացիք կը պատմեն և կը ցուցընեն հայր սուրբին այդ գիւտը և իրենց ունեցած կարծիքն. ոսկորներէն մէկ կտորը կ՚ընծայեն հայր սուրբին, ու հայր սուրբն առանց իրմէն դիտողութիւն մը աւելցընելու, «Գուցէ ձեր ասածն ուղիղ է» կ՚ասէ, և այդ ոսկորը իւր հաւաքած պտղիներուն հետ սուրբ Կարապետի վանքը կը խրկէ, որոյ մէջտեղէն բեւեռ մը անցընելով վանքի բակին մեծ դրան ճակատին կը մնան. և ամեն տեսնողք հետաքրքրաբար կը հարցընէին, միաբաններն ալ իրենց գիտցածը կը պատմէին։ Եղան օրեր, որ վար առնելով դրան ճակատէն այդ ոսկորը, իբրեւ աննշան և անպէտ բան ձգեցին ասդին անդին. և մէկ տարի ալ տեսայ որ վանքի մէջ ուխտաւորաց բազմութեան օրերը Մշեցի մրդավաճառները իբրեւ կշեռքի քար գործ կ՚ածէին երկու նուկոյ կշիռ, այսինքն մէկ օքայ, հազիւ կորզեցինք ձեռքերնէն, և մեր օրով յարգանօք պահել տուինք թանգարան

նի մէջ. մեկնածս ժամանակն ալ իբրեւ Առաջորդարանի թանգարանի մէկ նիւթ գրուեցաւ ցուցակին մէջ։ Այս կտոր ոսկորը, վանքեցիք կ'ըսէին որ, ծունկի խուփն է, բայց աւելի նման է մէջքի ողնաշարի ոսկորներէն մէկին։ 1877 յունուար ամսուն Աղջամէլիք գեղը հանդիպեցայ, բաւական հետաքրքիր եղայ գեղացիներէն, որոց պատմութիւնն է այս։ Թէ՝ «Այդ մեծ գլուխը և շատ մը ոսկորները գեղը բերելէն ետք, ձայն տարածուեցաւ։ Թէ՝ Էրզրումէն գրկեցին ուղեցին մէկ քանի կտոր ոսկոր ու բերնի ակրաներէն։ Թէ՝ ամեն մէկ ակրան մեզ պէս մարդու ձեռաց բոյթ մատէն մեծ էին։ Թէ՝ ամէն մէկ ակրան վեց ճիւղ ունէր։ Թէ անոր մէկ ոտքի սրունքի ոսկորը Երեսփոխանի տանը մէկ գոմշու մըսրակապ չինեցին։ Թէ՝ մէկալ սրունքի ոսկորն ալ տիրացու Մխէենց դրան կշտանոց ըրին։ Թէ՝ միջոց մը անցնելէն ետքը, Էրզրումայ փաշայէն զավազներ, խնուսայ միւտիւր և երկու ալ Ինգլիզ եկան, գեղացիները տարին այդ գօռը փորելտուին, երկայնութիւնը յարեւելս էր թաղուած, ոսկերտանք՝ ամենքն ալ հանին։ Ու մէկ հաստ ու երկար Ինգլիզ կար, չափ ու

կշեռք ունէր ձեռք, կը չափէր ու կը գրէր թղթին վրայ։ Թէ՝ այդ փուլի բերան ուրիշ շատ տեղեր էլ փորեցին, բան չգըտան. մինակ իրենց ձեռք ինկած ոսկորները, քիչ մըն ալ գեղացիներու հանածէն, ու գլուխը, առին տարին։ Եւ թէ՝ մեր ձեռք մնացած ոսկորներէն, որ մանր կտորներ էին, հորերու մէջ թաղեր ենք», եւայլն։

Սասուկ և Թանձր ձիւն կար գեղը. և ես չտասպաւ պիտի անցնէի. գեղացիները միայն իրենց հողային յափշտակութեանց՝ Բլկցի Քիւրտ Շահոյի հարստահարութեանց վրայ կը խօսէին, և անոնց դարմանը կը հարցընէին։ Չկրցայ ժամանակ ունենալ աւելի մանրամասն տեղեկութիւններ առնելու և տեսնալու, միայն խնդրեցի և մէկ կտոր այն ոսկորներէն տուին ինձ, զոր ըսին թէ՝ կողի ոսկորին կտորն է, ՀՀՀՀՀՀ։

Ուզեցի իմանալ թէ արդեօք չորքոտանւոյ ձեւ ունէր թէ մարդու, ակռաներէն և ձեռքի ու ոտքի ոսկորներու դիրքէն մակաբերելով, — չկրցան գոհ ընել հետաքրքրութիւնս։ Եւ թէ ո՞վև ի՞նչ անուն էր այդ Եւրոպացւոյ, չկրցան պատմել վերոգրեալէն աւելի։

Հայաստանի կողմերը այդպիսի դիտնական Եւրոպացիները ի՛նչ ազգէ կը լինին թո՛ղ լինին, առհասարակ Ֆրանսիոց ու ինգլիզ կը կոչուին։

Ո՞ր դարերէն մնացեալ կմախք է այս։ Հսկայ մարդու մը լինի թէ վիթխարի կենդանւոյ մը, ատոնց սերունդը չենք տեսնուիր այժմ։

Ո՜վ հողեր, արդեօք ձեր խաւերու և անդունդներու տակ ի՞նչ յաւիտենական դիտութիւններ ու ծանօթութիւններ կը պահէք մարդոց, կենդանեաց և ամեն կարգի արարածոց վրայ, որոց հետքը մնուշատես կը նշմարուի տակաւին երկրի ժողովրդոց բերնէ բերան հասած վէպերուն և աւանդութեանց մէջ։

Կը յիշեմ հոս նաեւ, որ իբր 14 տարի յառաջ Վանայ Վարագայ սարի ստորոտները Կարմրուորայ վանքի առջեւը գտնուեցաւ մէկ անհեթեթ մեծութեամբ գլուխ մը՝ վանահայր Ծեր Բարդուղիմէոս Վ.ի ձեռքով, այն տեղը, ուր այգի փորեց ու տնկեց, և այդ գլուխը նոր չինած ջաղացքին մօտը անյայտ թաղեց։ Եթէ քրքրուէին հոն և շատ մը տեղեր յայտնի երեւցած դերբուկները, ինչե՞ր պիտի դուրս գային դիտութեան 'ի սէջտ։

ԻԳ.

ԲԻՆԳԷՕԼ՝ այն բարձր և աննման լեռն է, որ մեծ և փոքր Հայաստանի կեդրոնը կամ սրտի վրան բուսած է, և որ ամեն հիներէն և նորերէն կը համարուի Ադամայ Եդեմ դրախտը։ Ինքն անկցորդ է Տօրոսի լեռներու գօտւոյն, և Ծաղկեայ լերանց շղթային։ Ասոր գագաթն ելլողը կը վայելէ անապական օդ, շատ ջինջ կ՚երեւայ իրեն երկնից եթերը, և քիչ մը 'ի խոնարհ առնելով իւր աչքերը, շուրջանակի կը տեսնէ Հայաստանի ամեն կողմերը, կ՚ողջունէ Մասիսները և Արագած հանդերձ համայն հիւսիսականօք և արեւելեան կողմամբ. Արմաւրի և Դենայ աւերակաց փոշիները կը նշմարէ իբրեւ արեւուն շողին շամանդաղը, որք կու գան հոտաւէտելու այս լերան անթիւ ծաղկանց կոկոններն ու թերթերը։

Այս տեղ Անիին դմբէթներուն ու բերդերու բեկորներուն վրայ վայող բուերու արձագանգն ու սոյլը կը բերէ գարնան սիւքը, և կը խառնէ Բինգէօլի բիւլբիւլներուն և հովուաց սրինգներու ձայնները անուշցընելու. Վասպուրականի ծովը, Տիգրանակերտն իւր Միջագետով, Ծովք,

Բալա հովիտն, Երիզա՝ Դերջանով, Կարինը կրկին Բասենով՝ Բինգէօլէն կ'երեւին սրատեսաց. և ասոնք Բինգէօլէն ջուր կ'ընդունին։

Արդէն Վարդօ, Խնուս, Շուշար, Գոյնուդ, Քղի, Ճասպաղջուր, Կարնոյ հովիտը, ասոնք բոլոր Բինգէօլի ածուներն են. և բնակիչքը անկէց իրենց հացն ու ջուրը կ'ընդունին։

Ցեսե՞ր ես Հայոց հին քերականներուն մէջ հալուոր Ցակոբ նահապետի պատկերը, որ ընկողմնած կը քնանայ, և իւր գորտէն մէկ ծառ կը բարձրանայ բազմոստեայ. և ատերուն վրայի պտուղներն են Իսրայէլի նահապետք և թագաւորք։ Տո՛ւր Հայաստանին ալ մի այդպիսի այրական պատկեր, որ ընկողմնած լինի իւր պառնէկին վրայ, անոր գանգն արա՛ Մասիսը, և աղեղնաձեւ դաշտն Արարատայ՝ անոր յօնքեր։ Պինչերը կամ ունգունք՝ ծով Կապուտան և ծով Գեղամայ, իսկ աչերը դառն ու աղի լիճեր Ուրմեայ և Աղթամարայ։ Իւր մէկ թեւը տարածէ հիւսիսէն Կասպից ծովի ափերով, և ձեռքի մատները ցից պահելով կը ձեւանայ Կովկասը. Հարաւէն Վասպուրականի սահմանագլխով պարզէ իւր միւս թեւը

մինչ 'ի Ծոցն Պարսից, և թաթիկն բաց արած լինի՝ Միջագետք և դաշտն Թէերայ։ Իւր ոտները ձիգ երկարցուցած հասնի մինչ 'ի Կապադովկիա և Կիլիկիա, և այն ժամանակ Բինդէօլը այդ պառկածին ճիշդ պորտն եղած կը լինի։ Միւս լեռները դիւրին է յարմարցընել կողերուն, սրտի տախտակին, թոքին, պօլօճիկնեբաց, ողնաշարին։ Գետերն արա՛ արեան երակ, և անտառ ու մացառ՝ անոր մորթի մաղերը, և այլն։ Բայց 'ի քուն և ընկողմնած լինի նա, ոչ արթուն և ոչ ոտքի վրայ, ոչ աշխատի, ոչ ուտէ, ոչ իւր տեղէն ու դիրքէն երերայ։ Շնչէ միայն, և թոքերը տրոփեն, սիրտը բաբախէ, բազկերակը զարնէ, պորտը բաց ու խուփ անէ։ Բինդէօլը դժնդակ տարտարոս մ'է ձմեռուան եղանակին, և դրախտ բացեալ 'ի գարնան և ամրան։ Բինդէօլը վեհ և ահաւոր չէ, այլ սիրուն. թագաւորի չի նմանիր, այլ թագուհւոյ. քնքուշ է և փափուկ. կոյս մ'է պճնազարդ և փափկասուն. շնորհաց լեռն է քան թէ քաջաց և դիւցազանց. ասոր համար իւր վրայ եղած վէպերը ոչ Աղնաւուրի, ոչ Դեւի, ոչ յաղթողի և ոչ զինուորի ու թագաւորի

են. այլ սիրոյ, զուարճութեան, առողջութեան, դեղոյ և դարդու, անուշութեան, պարարտութեան, գուսանութեան։ Որովհետեւ ասոր բիւրաղբերաց և հազար ականց բոլորը բիւր տեսակ բուսոց և ծաղկանց փուռած են։ Ջրարբի մարդեր, ամենադալար բանջարներ և խոտեր իրենց արմատներով, ուտելու, բուժելու, դոյն դոյն ներկելու կը գործածեն. իւր վայրի կենդանիները՝ առիւծ և վագր չեն, այլ եղնիկ և այծեամն։

Հոն նախրի կովերը, մատակ ձիերը, խաչանց մաքիները հօտով կ'արածան. հորթ, քուռակ և դառներ կը ծնանին։ Հաւերը իրենց ձուերը ծաղկանց բոյլերու մէջ ածելով թուխս կը նստին, և ձագերով կը թռչտին։

Հոս զբօսասէրները կու գան ուրախանալու, հիւանդները օդ և ջուրը ծծելով կեանքը նորոգելու, կոյսեր և հարսները ձեռագործի թելերը ներկելու համար ծաղիկ և արմատ ժողովելու, ժըրաջան տանտիկինները բանջար ժողվելու, բժիշկները՝ դեղ ու դարմանի համար ամեն բոյսէն ծիլ մը կամ ծաղիկ մը կամ թուփ մը առնելու. իսկ մե-

ղուներու տղոցն ու բզոցը հիանալի ներդաշնակ մը կու տան մարդկանց և թռչնոց երգերուն, անասնոց բառաչին, գորտերու կառաչին՝, գլգլացող առուակին ու սուլացող սիւքի ձայնին։ Անթիւ անհամար մեղուներ։ Բայց մի և նոյն ժամանակ օձերն ալ կը սողոսկին այդ ծաղկանց կողակի քովերէն, իրենք ալ կ'առնեն միեւնոյն ծաղիկներէն հիւթը, և կը վայելեն սուրբ օդը։ Հոս մեղուներով մեղր կը շինուի, և օձերով թոյն։

Ցաճկերէն լեզուով գովասանք դէոդէն խաղ մը կայ Բինգէօլի վրայ, զոր շատ գաւառներու բնակիչներ գիտեն և սըրտագին ու մխիթարեն եղանակաւ մը կ'երգեն, որոյ սկիզբն է «Աղա Բահոր ոլաղէ», և նագարաթն է «Աէոր կէոեր Բինգէօլէ»։ Աքանչելի նկարագիր և դիմառնական ոճ մը ունի այս խաղը, որով լերան բարեվայելչութիւնը կը գովէ երգիչը, և արարածները կը հրաւիրէ հոն Աստուծոյ աքանչելիքը տեսնել վայելել, կեանք առնուլ. և թէ ինչպէս անմահական ջուրեր կը բաշխէ երկրին, եւայլն։

Շատ ցաւ է ինձ, որ ինչպէս շատ տեղերու, նոյնպէս և Բինգէօլի բաղմամասն վէպերը ամբողջ չեմ կրցեր ձեռք բերել։

Մէկը միայն պատմեմ հոս։

Մի Քիւրդ հովիւ Բինգէօլի լեռը գառներ կ'արածայ եղեր. օր մը կը տեսնէ որ մէկ վիրաւորուած, մէկ ջախջախուած, և մէկ ալ քոստած երեք օձեր կու գան ջրերու ակունքներէն մէկին ափը, ծաղիկէ մը մէկ մէկ թերթ կը փրցընեն կ'ուտեն. և մտնելով այն ջուրին մէջ կը լողանան, բաւական միջոց մնալով 'ի ջուր։ Հովիւը՝ որ անթարթ աչք կը նայէր անոնց, յանկարծ կը տեսնայ որ երեքը մէկէն առողջ, առոյգ և աշխոյժ սողալով դուրս կ'ելլեն ջրէն՝ ապաքինած, և արագ արագ կը սահին կ'անցնին հովուի աչքէն անհետ։ Այս հովուի տէրը երեւելի հարուստ մի Քիւրդ է եղեր, երկար ժամանակէ հետէ քոստած ախտացած. կը վազէ հովիւը և իւր տեսածը պատմելով, կը վերցընեն տէրը կը բերեն այն տեղ, բայց անհնարին կը լինի հովուին ճանաչել թէ ո՞րն էր այն ծաղիկն և այն ակն։ Եւ որովհետեւ մէկ չէ, հաղար չէ աղբիւրն ու ծաղիկն այն տեղին, որ փորձի համար ուտէր և խմէր, ու միանգամայն թունաւոր լինելէ ալ կասկած ընելով, խեղճ քոստ Քիւրդը կը նեղանայ հովուին թէ՝

ինչո՞ւ չէ կրցեր նշանել, միտ պահել ծաղիկն ու ակն։ Հովիւը կը պատասխանէ. «Բինգիւլ, հեղար գիւլ. աղ ղէ՞ ղանը՞ էնձան գիւլ». — Բիւր ակն, հաղար ակն, ես ի՞նչ գիտեմ ո՞ր այն ակն —։ Եւ այս է եղեր իր թէ տեղւոյն անուանակոչութեան սկիզբը, ըստ պատմելոյ ոմանց։ Բայց այդ լեռն իւր հին անունն ունի, և իւր հնագոյն վէպերը։ Այս վէպիս մէջն ալ եթէ գերասանները Քիւրդ կը ներկայանան, ինչպէս շատ Քրդերէն ու Ցանկերէն լեզուաւ ասացուածքներ, թէ երգ և թէ գրուցատրութիւն և թէ բառեր ու բառերու յարմարական ստուգաբանու թիւնք կան, ազոնց հեղինակ Հայ եղած են անշուշտ. բայց երբ շատ անգամ Հայերը գաղթեր ու փախչեր են, կամ կրօնափոխ եղեր են, ասոնց տեղը գրաւող Քրդերը, իրենց լսածը իրենց լեզուով ուսեր են պահել ու պատմել. կամ կրօնքն ու լեզուն փոխող Հայերը այս վէպերն ալ իրենց լեզուին հետ փոխած են։ Որչափ խաղեր կան Քրդերէն ու Ցանկերէն լեզուով, բայց ըստ որում անոնց նիւթը Հայոց տեղեր, Հայոց դէպքեր, և անձինք կը ներկայացընեն, անոնց յօրինողներն Հայ եղած են. սակայն օտար լեզ-

ուով յօրինած, ինչպէս որ մինչեւ ցայսօր ալ յօրինողներ կան. նոյն իսկ Քրդերու և Տաճկաց կեանքին վերաբերեալ խաղերէն ալ շատը կը յօրինեն Հայեր։ Ընդհանրապէս քիչ են Քրդերէ ու Տաճիկներէ աշուղները Հայաստանի մէջ. այդ երկիրը և այդ կլիման Հայուն է թողուցեր այդ միակ ձիրքը, որ անկողոպտելի է մնացեր. այդ երկիրը կ'ըսեմ, որ Քիւրդիստան չէ, ինչպէս անգթութեամբ և անգիտութեամբ կ'անուանեն ոմանք, այլ տակաւին մինչեւ այսօր և մինչեւ յաւիտեան Հայաստան է ու Հայաստան պիտի մնայ։

ԻԴ.

Բինգէօլէն վար եղած՝ Արօս և Սարլու գեղերէն անցնելով կը մտնանք այն ձորը, որ Ղղճու ձոր կ'ըսուի, և գետ մը կ'անցնի ձորամիջով. գետնատակի ճանապարհ մը կայ հոն. ելլելով անկէց կը բարձրանայ ուղեւորը լեռան այն գօտիին վրայ, որոյ ստորոտն է Վարդուայ հովիտը։ Տեղագրութիւն չպիտի ընեմ ես. այս ձորերու, ջրերու, գեղերու վայելչութիւնը չպիտի դրեմ։ Վարդօն շրջապատող գեղեցիկ լեռնագօտիէն, որ Բին-

գէօլի մասերն են, կամ նոյն իսկ Բինգէօլը, կը տեսնուի այդ լեռներու քարեայ մասերուն մէջ բազմաթիւ քարայրեր։ Ադոնցմէ որը՝ աւազակաց վայր է. որը՝ վայրի կենդանեաց և աղուեսուց որջ են և թռչնոց բոյն. որը՝ գեղի ոչխարաց իրրեւ գոմ կը ծառայեցընեն, գոմ՝ քանի մը հազար ոչխարաց բաւական. որը՝ ճգնաւորի տեղ կը կարծեն։ Իսկ մէկ քանիները մեղուներուն փեթակ են, որոց մէջ յաւիտենից չինուած կուտուած մեղրերը մերթ ընդ մերթ գեղլով, ծակերէն դուրս ծորած են, և տեղ տեղ ալ այրերուն դռները ժամանակի ծանր ձեռքով անյայտացած և ընդ հողով ծածկուած ըլլալով, զայն կամ հեղեղ մը, կամ վայրի խոզի կնճիթ մը, որ միշտ հող կը փորէ, կամ կռուան դումէշի մը կոտոշները՝ որ գարնան նոր արեւ հանուած ժամանակ կը փնչփնչայ, և ճակատը ու կոտոշները ուժգին դափրելով՝ ծառերու արմատին, քարին կամ հողին կը զարնէ, ուժով կը քրքրէ, այս առիթներով կը գտնուին։ Այդ այրերը ինձ շատ հնադոյն կը թուին, կամ այն ժամանակուան մարդոցմէ մնացած, որոց մէջ տուն չիներու ճաշակն ու ճարտա-

ըութիւնը չէր տարածուած և ընդ-
հանրացած, և միայն հողը փորելով և
այսպէս քարայրներ գտնելով կամ շի-
նելով մէջը բնակած են, կամ անթիւ
ու ամեհի գազաններէն պաշտպանուելու
համար ըրած են, կամ ինչպէս մեր պատ-
մութիւնները ցոյց կու տան՝ բարբարոս
ազգաց արշաւանաց ու ասպատակու-
թեանց օրերու մէջ, մարդիկ իրենց դոյ-
քը և ստացուածքը՝ շատ անգամ ալ
կանայք ու մանկտիք ապաստան դրած
են հոն, ու իրենք դիմեր են 'ի ճակա-
տամարտ։

Այս վերջին ակնարկս շատ տեղեր
յայտնի կը գրեն պատմիչները, ինչպէս
փարպեցին, Վարդանանց պատերազմէն
առաջը, կ'ըսէ, Մնացեալքն փախեան 'ի
ծերպս և 'ի խորշս լերանց Խաղտեաց
յապաստան անմատչելի։ Թաթարաց ար-
շաւանաց ժամանակ՝ նոյնպէս կը յիշուի
մեր պատմիչներէն, և այլ ուրիշ տեղեր
ու ժամանակները։ Քարայրերը միայն
Վարդօ չեն, այլ գրեթէ Հայաստանի
ամեն գաւառներու մէջ լցուն են։ Այ-
սեր, որոնք ո՛վ գիտէ ո՛ր դարու յիշա-
տակները և կեանքի ու դէպքերու պատ-
մութեան ի՞նչ թանգ ու հետաքրքրական

գանձեր ունին թագուցած իրենց մէջ, որք կը մնան անհետաքննելի։ Այս տեսակ այրերէն շատը բնական եղած կը թուին. շատեր ալ կան, որոց մէջ կռաններու հետքը կը նշմարուի։

ԻԵ.

Տարօնոյ դաշտի բերանը, Աշտիշատայ մօտ՝ կայ մի գեղ, զոր այսօր Բաղէշ կը կոչեն տեղացիք. բայց Տարօնոյ պատմիչ Յովհաննէս եպիսկոպոսը Վէշապ անուն կու տայ այն տեղին, և քաղաք կը կոչէ. ինչպէս նաեւ Գայլ Վահանի ժամանակ Օն քաղաք կը պատմէ Տարօնոյ դաշտի արեւելեան հարաւի կողմը, ուր շամբեր կան, Մեղրադետի ական քով։ Օն քաղաքի հետքերը, աւերակները, ինչպէս նաեւ անունն ալ՝ կան ցայսօր. և քանի մը տուն ալ բնակիչ ունի մէջը իբրեւ գեղացի, Մուշեղշէն անունով գեղին մօտ։ Օն և վիշապը երբեմն Հայկազն Երուանդեան Տիգրանի ժամանակ Հայկական դրօշակի նշանն էր, Աժդահակը սպաննելուն յիշատակ։ Բայց ինչպէս առիթ ունեցանք Դաղօնաց օձերու թագաւորութիւնը յիշելու, հոս միտքս կու գայ թէ՝ միւնոյն կերպով վէպեր կան նաեւ Հայաստանի

ուրիշ գաւառաց մէջ ալ. և երբ զօրաւոր ու հուժկու մարդու նմանութիւն տալ ուզեն, օձու և վիշապի կը նմանցընեն։ Օձը հմայութեանց արհեստին մէջ ալ գործածուած է միշտ։ Մինչեւ ցայսօր ալ օձու շապիկ կը դնեն իրենց ծոցերը կամ գլխարկին մէջ, որպէս զի օձերը չխայթեն զիրենք։ Կայ և մի սովորութիւն ալ, որ օձու, կարիճի և այլ այսպիսեաց ձեւը մանր ուլնիկներով կը շարեն և կը կարեն երախայից գտակին կամ հագած հագուստին վրայ։ Ի հարկէ օձն ու կարիճը իբրեւ զարդ չեն գործածեր, այլ ուրիշ խորհուրդ մը ունին։ Վիշապը թերեւս իւր ահաւորութեամբ՝ 'ի հնումն պաշտուած ալ 'ինի 'ի Հայոց։ Արդէն սովորաբար մարդիկ Աստուծոյ տեղ կը դնէին մէկ մը զայն՝ որ հաճոյք և բարիք կը սփռէր, մէկ մ'ալ զայն՝ որմէ երկիւղ և պատուհաս կը կրէին. վերջինէն են օձն և վիշապ։ Օձերու և վիշապներու վրայ ընդհանրապէս Հայ ժողովրդեան վէպերուն մէջ կարծիք կայ թէ՝ անմահ են անոնք, եթէ չսպաննուին մարդերէ. և այս կարծեաց համաձայնելու համար կը խօսին թէ՝ օձը իւր շապիկը փոխելով կը նորոգուի. Ու թէ՝ աղբիւր և ծաղիկ

մը կայ, զոր կը ճանչնան օձերը, որ օձե-
րուն անմահութիւն կու տայ։ Վանայ
պատաւաներուն մէկ վէպը կայ թէ՝ Վի-
շապը երբ հազար տարեկան լինի, շատ
սարսափելի կը մեծնայ. հրեշտակները
երկինքէն կ'իջնեն, շղթայով կը կապեն,
ու կը քաշեն վեր, այնքան կը բարձրա-
ցընեն մինչեւ արեւուն մօտ հանելով,
ուր կիզիչ հուրը կը վառէ ու մոխիր կը
դարձընէ զայն։ Կը յաւելուն, թէ մեծ
շառաչիւնի ձայներ կը լսուին երկինքը
քաշած ժամանակ։ Թէ՝ երբեմն այնքան
կը դալարի որ պոչը կը փրթի վար կ'ին-
նայ։ Եւ որովհետեւ ինչպէս օձին ջրա-
յինն ու ցամաքայինը կայ, նոյնպէս ալ
վիշապին. ուստի կ'ըսեն թէ, տեսնուած
է երբեմն Վանայ ծովուն մէջէն, եր-
բեմն ալ ամայի լեռներէն վիշապներուն
երկինք քաշուիլը։ Գուցէ թաթառ հողմի
նկարագիրն է սա, որ ծովէն ջուր և
ցամաքէն փոշի, ծառ և քար կը բարձ-
րացընէ յամպս և 'ի վայր կը թափէ։

Կ'ըսեն նաեւ, թէ՝ այդ վիշապը վարսեր
և թեւեր ունի։ Թէ՝ երբեմն սաստիկ ջուր
կը փչէ երկրի վրայ։ Թէ՝ վառուելէն ետք
մոխիրը վար կը թափի կը տեսնուի։ Թէ՝
երբեմն ալ երկնքի բարձրութենէն կը

թողուն հրեշտակները, որ իրենց վիշապը տարի մը վրայ, և ամենամանր փշրուի. թէ՝ եթէ երկինք չքաշեն, երկիրը պիտի կուլ տայ։ Թէ՝ Վանայ ծովու մէջ կայ Վիշապի բոյնը, այն տեղը ահագին Վիշապ մը կայ, որ բոլոր ծովու յատակը բռներ է, ու հրեշտակները միշտ կը զարնեն կը փիրաւորեն անոր պոչը, որ չմեծնայ և ծովն ու ցամաքը կլլէ, և այլն։ Կարծես Յորայ պատմած Լեւիաթանի նմանութիւնը կու տան այս Վիշապին։ Ընդհանրապէս քարայրերու համար կը փիսպեն թէ Վիշապի բոյն է, և թէ հազարաւոր օձեր կը լինին այն տեղերը։

ԻԶ.

Զիզեռն կամ Ցիծեռն աւան մի է յիշատակուած Տարօնոյ պատմութեան մէջ. մինչեւ ցայսօր ալ Զէզեռ կ'անուանեն այն աւերակին, որ Ս. Կարապետի վանքի ատօրոտը Մշոյ դաշտի ծայրը Զիարաթ գեղին և Խարաբէդ գեղին մէջտեղը կ'իրենայ։ Զիարաթու բնակիչները կը պատմեն թէ գիշերները սանդի քար մը կ'երեւայ Ցիծեռնի աւերակին մէջ, և շատերս տեսեր ենք երբ ամառ գիշերները այն տեղերը լուսնակի լուսուն խոտ կը

քաղեմք, բայց ցերեկները չտեսնուիր. քանի մը անգամ գնացեր եմք սայլ բերելու, որ բառնանք այդ սանդը տանինք գեղը, անտես եղեր է. և իբր թէ՝ աւանդութիւն կայ եղեր, թէ՝ այդ տեղը դանձ կայ թաղուած, բայց անոր Ը՞ԼԸ՞ԸՆ դիտնալու է, որ հանուի։ Այս կարծիքը ամեն գաւառի բնակիչներն ունին. ուր որ բլրակ մը, կամ աւերածակոյտ մը տեսնաս, անոր վրայ կ'սկսին պատմութիւն ընել թէ դանձ կայ, բայց Ը՞ԼԸ՞ԸՆ դիտնալու է, ամ ձգելու է, որ գտնուի։ Դամն ու թրլլսրմը մէկ կողի թողլով, որ խաբէութեան խօսք և հնարք մի է, բայց, դանձ կայ ըսելէն, այս ընդհանուր կարծիքէն, կարելի է հետեւցընել, թէ՝ նախնիք իրենց ոսկին ու արծաթը, դրամն ու ակունք, զարդեր և թանգնիւթերը նշանով տեղ մը կամ իրենց տանց հիմերու տակը, կամ դերեզմանները կը խորէին, ինչպէս պատմագրութեանց մէջ ալ ըսածիս վկայութիւնը կը տեսնուի շատ տեղ. զորօրինակ, Վասակայ համար կ'ըսէ Սուրբ Եղիշէն. Երբ Յազկերտի բանտը ձգուած էր և անոր ամեն զարդն ու հարստութիւնը կողոպտեցին, է՛ստիպէին որ եթէ նախնեաց

գերեզմանները թաղուած գանձ մնացեր է, հանել բերել տայ։ Ընդհանրապէս ալ այս կարծիքն էր Պարսից, երբ Երիզու Անի ամրոցէն, Թիլէն և Թորդանէն Արշակունի թագաւորաց գերեզմանները կը կրկտէին, ու ոսկորները կը հանէին. ցայսօր ալ նշանաւոր չիրիմ մը և դամբան մը ուր որ գիտեն Հայերը, կը կարծեն թէ գանձ կայ անոր մէջ կամ անոր կից։ Այս սովորութեան առիթ տուած է կա՛մ բարբարոսաց ու յափշտակողաց երկիւղը կա՛մ ագահութիւնը։ Ես գիտեմ որ 1872 ին Վանայ պարսպէն դուրս հին գերեզմանոցի մը մէջէն տղաքները գետնափոր խաղալով պուտուկ մը լեցուն արծաթէ դրամ գտան. Մշոյ Փողրկով գեղի առջեւ մեծ առուի մը շուրթն դարափուլմը կար, ուր հորթարածները բղիկով մը ոսկի գտած էին. և Կնձայ լեռներուն ամրոցներու աւերակներէն հին ոսկիներ գտած էին Քրդերը, որոյմէ քանի մը հատ գնած էր Ջիարաթ գեղի ոսկերիչ Ռվէն։

1869 թուին Գլակայ վանքի միաբան իննսունամեայ Մեսրոպ վարդապետը վախճանեցաւ, որ հողէ բղիկ մը լցուն արծաթ մէճիտիյէ և ռուսի արծաթ մա-

ձէթները անչէն սեղեկի մը մէջ ընդ հողով թաղած էր։ Կայ մարդ՝ որ իւր տանը պատին մէջ կը դնէ իւր գանձը և քարով աղիւսով կը շարէ։ Կայ՝ որ սեղեկի կամ բակի յատակի աղիւսին կամ սալի մը ներքեւ կը փորէ կը խորէ։ Եայլն։

ԻԷ։

Եթէ Տարօնոյ շուրջը գտնուած Կինճայ և Ճապաղջուրայ լեռներուն ու ձորերուն մէջ եղած զանազան անուն և վէպ ունեցող գեղերը, տեղերը, ջրերը ու քարայրերը մեր տեսութեան ու գրբութեան ենթարկենք, ասոնք ամենն ալ երկարապատում պրոյցներու նիւթ ունին։ Որք արժանի են յատուկ մանրամասն նկարագրութեան և վիպագրութեան։ Թէ՝ ինչպէս Եփրատը երբ Մշոյ դաշտը կը մտնէ, Կնճան սարերու մէջ զարնուելով քարերուն՝ նեղ կիրճով մը աղմուելով գո՛ւռ գո՛ւռ ձայն մը կ՝արձակէ։ և այդ տեղը կը կոչուի Գ.ռռ գռռռայ, ուր Աստղիկի լոգարանն է եղեր։ Եւ քանգի գիշերները լուացուելու սովորութիւն ունէր Աստղիկը, Դաղօնաց սարին վրայ մեծ կրակ կը վառէին տարփաւոր կտրիճները, որոյ լուսով կը դի-

տէրն Աստուծոյ չքնաղ գեղեցկութիւնը՝ հնարած է Աստուծոյ որ միշտ պատէ այն սքանչելի միջավայրը, այսինքն Աշխարհ դարձեալ ծագաց 'ի ծագս, թէ աստուածային ձեռնէ, մինչ 'ի ծունկս սարերուն. որոմ անհնարին կը լինի որ և իցէ կողմի լեռներին տեսանուիլ. և զուցէ այս շարունակ և թանձր միջոցին այդ երկիրը կոչուած լինի նաեւ Սուշ։ Արդէն բնակիչք այս երկրոյս հապնելոցը կ'երգեն

«Աշխարհ սարեր միշտ է,
Իւր հոգին ու ջուրն անոյշ է»։

ԻԸ.

Եփրատի հետ ներս երթալով, կիրճի կատարածներով և ջրափի մայրուղիներու և ձորակներու միջով կը հասնիս նեղ ու գլուխի երկնքի մը տակ 'ի լեռնամէջ. հոն կ'երեւի բերդ մը կլորաձեւ, մէկ կողմէն ցամաքին կից իբրեւ հրուանդան, և երեք կողմով Եփրատի ընացած ջրերով շրջապատուած. ջրէն պատուած երեք բաժինն ալ լերկ և սահուն ապառաժ են, իսկ գագաթը տափարակ, ինչպէս գլուխէն դանակով կտրած խնձոր մը. Եփրատին ջուրը ճիշդ օղակ կամ օղանանման ձեւով կը փաթթուի այդ բերդին, ու կ'անցնի կ'երթայ

նոր երկայն ուղին. այս բերդն է Անա-
գին և անմոռաչելի Ոշական, միշտ նշանաւոր
Տրպատին յաւաչ, Տրպատին ժամանակ,
և Մասիսոնեանց օրերուն. որ իւր հետն
սնի գարուոր պատմութեանց յիշատակները։

Գուռգուռին մէկ քոչն է Սղանաար,
որոյ գագաթը ուղիղ տափարակ է ճիշդ
ոեղանաձեւ. իսկ Գուռգուռին միւս ամն
է Սեւ սարն կամ Սեմն, այն է Տօրոսը,
որ Մշոյ սարալ կ'ըսուի. զանազան գլուխ-
ներու բաժնուած, բայց իրրեւ մէկ տան
մէջ մէկ գերդաստանի անդամք՝ իրարու
մօտ ծունկ ծնկի, ղէմ ղէմի պուպուած,
ձորերով, վտակներով, գեղերով լի։
Անթոմք լեռան այս լերանց մեծ եղբայրն
է ամենէն բարձր։ Մարութան կամ Մա-
բաթու լեռան՝ սոնց մէջ սուրբ և բա-
րեպաշտն է, որ Մարութա ճգնաւորին և
եպիսկոպոսին անունով յորջորջուած կը
ծուի. այն՝ որ սուրբ Շմաւոն եպիսկո-
պոսի և Արեւելեան վկայից նշխարները
'ի Գարսից բերաւ և բիւրաւոր մատուռնք-
ներ ժողովեց ու Մարտիրոսաց քաղաք
Նփրկերաը շինեց. որ հետի չէ այս լեռ-
նէն։ Սասունք կամ Սասուն՝ լեռան՝ որ
եղբարց մէջ ամենէն զօրեղն է և ան-

պարտելին՝ երկաթէ կոզերոնը ու քարուտ գլխոնը. և, որ առանձնական եղած է Անորուց Սենեքերիմ արքայի որդւոց Ադրամելիքին և Սանասարին, Քրիստոսէն հազարաւոր տարի յառաջ։

Ծովասար լեառն՝ անունց դեղեցիկ քոյրն է, որ Առաքելոց վանքին մօտ է, և պրոտիկ ծով մը ունենալով իւր գագաթը այս անունով կոչուած է. այս ծովակին շուրջ բուսած պարկեշտ մանիշակները երկնագոյն մարդեր կը ցուցընեն. և անթիւ են տեսակ ու գոյն զանազան ծաղկանց, որ կ'զմայլեցընեն տարածները իրենց տեսքով ու գոյնով։ Իսկ խաւարծին անունն ու յոյժ պատուական է այս տարին։

Խոյթը, թէպէտ անունց մէկ կտորն է, բայց խորթ է. դար ու վտաս և քարուտ գիրք մը ունի, կարծր և ծուռ ու մուռ փայտերով ապաստարան. որոյ բնակիչներն ալ նոյնպէս կոշտ, սուտ և ամենի մարդիկ են մինչեւ ցայսօր։ Խոյթէն կ'իջնաս Լաղնոյ ձոր, ուր Բարձրն է։ Եւ Ադնուաձոր, որ Գիւղելոերէ կը կոչուի։ Կ'երթաս կարմիրան, վանայ ծովափը, և Սորմ գեղն անցնելով մի երկար և ձիւռ կոշտ ձեւ ունեցող կապոյտ գունով լեռ մը կը

տեսնես, այն է կապուտակը։ Անկէց Ռշտունիք, Արտօս լեռը, Ոստան, Հայոց ձոր, Վան կամ Տոսպ գաւառը։

ԻԹ.

Ընթերցողին յայտնի է թէ ո՞րչափ շտապով կը թռչի գրիչս, առանց ուշադրութիւն ընելու վերոյիշեալս և չյիշեալս լերանց, դարեւանդաց, բլրոց և ամենայն վայրաց նկարագիրն ու վէպերն ներկայացընելու։ Ես նպատակ ունիմ յառաջ վազելու։ Եւ որովհետեւ այս իմ գրական գործս իբրեւ յուշարար և ծրագիր կ'ուզեմ ներկայացընել, բաւականէն աւելին չեմ ուզեր երկարել։ Որքան ձեռընհաս եղեր ու հաւաքեր եմ, և որքան եւս պատեհութիւն ունենամ հաւաքելու, զանոնք ալ զատ գործ կ'ընեմ, կամ այլոց քան զիս հմտագունից և աշխատասիրաց կ'առաջարկեմ։

Ես չյիշեցի այն կողմերը գտնուած հանքային ջրերը, որոց մէջ նշանաւորն է 'ի Վարդ. Լ-ալ-ալ-ի ջերմուկները։

Ես չյիշեցի Ճապաղջուրի մէջ եղած ընէիք և ոսկի հանքեր, և այն երկրի ստորագրութիւնը, և աւանդական խօսքերը։

Եւ չյիշեցի Կինճ լերանց և անոր բերդերուն ու ձորերուն անունները, անոնց բնակչաց նախկին և արդի անկախ բայց վայրենական ապրուստը. ուր Գրդերու բազմաթիւ Ամիրաները կը բնակին։

Եւ չյիշեցի Սասնոյ և Խոյթայ հին ու ներկայիս բնակիչները. և թէ անոնց ծոցերու մէջ ի՞նչ գեղեր, ի՞նչ կտրիճներ կը գտնուին Հայոց և Գրդաց, որոց կանայքն անդամ զինեալ են. և իրենց զէնքն ու վառօդն իրենք կը շինեն։ Թէ՝ ինչ սքանչելի բան կը լինէր այս ամենուն կենցաղավարութեանը նկարագրին հետ, և իրենց զդեստուց ձեւն ու կեանքի գրաւմունքը ստորագրուէր, կամ անոնց պատկերները լուսանկարով հանուէր։ Թէ՝ Մշոյ լերանց շղթային վրայ քանի՛ քանի՛ բերդեր կային, անոնցմէ քանիսը Մուշեղի անունով են. և մնացեալները որո՞ց անուն կը կրեն։ Թէ ո՞րն է Ոսպան բլուրն։ Թէ քանի՞ գեղեր կան այդ լերանց ստորոտները և դաշտի մէջը՝ հնագոյն, որոց անունները կ՚ստուգտրանուին. և ամեն մէկ անունը՝ մէկ մէկ պատմութեան մատեան են անցելոյն։

Եւ չյիշեցի Ակունեանց ցեղի տիրապետութիւնը Տարօնոյ երկրին, թէ՝ ո՛րքան հին

և քանի՞ եղած են Մամիկոնեանց հոն գալէն յառաջ. թէ ի՞նչ պրոյցներ կան անոնց վրայ. և, թէ ի՞նչպէս դեռ կայ գեղ մի Հայոց Սալքան կամ Սալիուն անուանով։

Եւ չմիջեցի այդ երկիրներու մէջ և սարերու վրայ բնակող Քրդերու թիւն ու ցեղերը. և թէ ի՞նչ են այդ ցեղերու անուններն. և ի՞նչ գիտնիք անոնց ծագման ու կեանքին վրայ. զարմանակ, Հասանէ՛ , որ Մըմէկանի ալ կ՚ըսուին, «Մամիկոնեան տուներն ենք մենք» կ՚ըսեն։ Զարմանէ՛ , որ ձեզ Հայերին կը խօսին, նոյնպէս «Հայ եմք եղեր, կ՚ըսեն, ու մեր աղաւաւելեան հաւատքը զինքը չձգեցինք, հաւատքը փոխեցինք»։ Թէ ուստի՞ են և ո՞ր քան Զաղա Քրդերն, և ի՞նչ անունց կեանքը։

Եւ չմիջեցի այն ամեն ջնջեր բաւած ու երնջմանները, զորս Քրդերը կը պատուանեն, և չատ տեղ Հայն ալ Քրդին հետ ուխտի կ՚երթայ հոն։ Բայց ո՞վ են այդ ոնջմանները, որք աւ հաստատակ ծառերու պրանչներով չրջապատուած կը լինին, և դարերու վրայ բարձրադիր։ Ասոնք կա՛մ Հայոցմէ պատուուած ճգնաւորի մը կամ նահատակի մը չիրիմ են, կա՛մ կռուի մէջ մէջ ին-

կած քաջիմը. թշնամեաց գնդէն, կամ հայրենեաց ու կրօնի պաշտպաններէն, ինչպէս է այն ջիջոջ՝ Գլակայ վանքի և Կըվարսայ մէջ տեղ, ուր ըստ պատմութեան Զենորայ՝ կա՛մ Արձան Գրմատիտն է, որ արձանացաւ Արծրունի նախարարին զարկէն. կա՛մ Գեթռեհոնն է, որ թաւալեցաւ Տրդատի բազուկէն։ Ցեսած եմ հին Նախիջեւանու գերեզմանատան մէջ մի ցած կամարով ծածկուած շատ հին գերեզման, զոր Հայք և Պարսիկք Նոյի գերեզման կ՚անուանեն։ Նոյն օրինակ մի գերեզման եւս Մարանդ քաղաքի մէջ կայ, ուր բնակիչք բոլորովին Պարսիկ են. բայց ճրագլուսով կը պատուեն այն շիրիմը, և կը պատմեն թէ, Նոյայ կնոջ գերեզմանն է, ինչպէս որ մեր հնագէտքն ալ Մարանդ անունը կ՚ըստուգաբանեն ՄԱՅՐ ԱՆԴ։

Եւ չյիշեցի այնքան աւեր և չէն եկեղեցիները, վանքերը, մատուռները, և անոնց վերարերեալ պատմական հրաշքները, և աւանդական խօսքերը։

Ե

Զոր օրինակ։

Մշոյ Սուրբ Կարապետի վանքը՝ կայ մի

կաղ Դեւ, որ վառուած կրակներու մոխիրը կը շալակէ գետնի տակով կը տանի երկու աւուր ճանապարհ դէպ 'ի Տիգրանակերտ Փրէքոնման գեղին մօտ կը թափէ, որմէ մեծ բլուր մը ձեւացեր է։ Ահա Աշուղներու այս մասին շինած երգը։

«Լուսաւորիչը ժողվեց դիւան
լըցեց ղընդան.
«Կաղ Դեւն եկաւ ասաց, եաման.
«Ձիս մի' դներ ղընդան.
«Ես կ'եղնիմ Սուրբ Կարապետու փոշեհան,
«Տանիմ թափեմ Փրէքթման,
«Մինչ օր Քրիստոս գայ դատաստան»։

Դիւաց ահագին բանակ մ'ալ սուրբ Կոնոնոսի վանքը կայ կարասներու մէջ լցած ու գետնի տակը թաղած, բերանները դմուած մինչ օրն դատաստանին։ Իսկ Հոպուոց վանքը, որ Վասպուրականի մէջն է, հոն ալ Ղոռբրոն խոնոռ անունով Դեւ մը կայ, որ նոյնպէս թոնիրի մոխիրները կը թափէ, և շատ անգամ ալ փափագողաց կ'երեւի եղեր. եւայլն։

Վանայ Արտամետու մօտ Կոնկու վանքին պատմութիւնը կ'ըսէ թէ՝ Կուունկի մը կորած ոտքը վարդապետն ողջացուցեր

է, և կռունկը Հայաստանեան տօնին ուղկոյզ մի հատած խաղող բերեր է վարդապետին, որ պատարագ պիտի ընէր ու բաժակցու չունէր։ Եւ, թէ՝ օր մը վանքի մշակաց դաշտի մէջ ցորեն հնձելուն՝ հարիսայ եփել ուսեր է վանահայրը. օձ մը մէջն ինկեր, առանց զիտնալու պիտի ուտեն եղեր, կռունկը զինքն դարձեր հարիսային մէջ օձը հանելու, ինքն ալ մէջը մնացեր մեռեր է, ու հարիսան թափելով օձէն թունաւորուելէ ազատուեր են։

Գուցէ ուրիշ ասուր Գէորգի վանքը, որ Մոկաց բարձր, ամայի, և ձիւնոտ լերան մը վրայ շինուած է, ուր անցորդները բքարդել կը մնան շարաթներով, և կը խնամուին, Արեան լերան Գոմինիկեանց վանքին պէս։ Հոս ապէրը կայ, որ գուշակողն պաշտօն կը վարէ. երբ նա խօսի, ուղեւորները կը վստահին ճամբայ ելլելու. երբ օդը վոտանդաւոր թուի, քանի՛ օր բոլորովին անխօս կը մնայ. և այլն։

Եւ չմոռնամ Կարճկանից, որ Կորճեայը կամ Կորդուաց լերինքն են, ու Մոկաց և Շատախու լերանց պետ պետ քարերայ վրայ եղած հին գրոյցները։ Ի Կաճէաց աղքիւրը, որոյ ջուրը խմողները խելա-

թափ կ'ելլան եղեր, և այդ կամէտայ գեղացւոց վրայ չինուած հաղար առասպելներ։ Կապուտիոզայ վրայ խօսուածները։ Արտամետու ցամքոր ըսուած առհապին ապառաժը, որ Շամիրամ իւր ծառերուն կասեր, և վանայ բերդին պարսպի պէս նեռեր է մինչեւ հոն։

ԼԱ։

Վարագայ լեռը, որոյ գագաթին վրայ ելլողը կը տեսնայ եղեր թէ ի՛նչպէս արեւը վերջնալոյսին կը մտնէ ծովը կը լողանայ, մաքրուելու և հանգչելու՝ ըրած ուղեւորութենէն։ Թէ՝ այն ժամուն յարեւմուտս երեւցած շառագոյն, մոխրագոյն և ձիւնագոյն ծալ ծալ ամպերը արեւուն անկողնոյ քօղը և վարագոյրներն են։ Թէ՝ անոր անկողինը ծովուն տակը ձգուած է փրփուրի վրայ։ Թէ՝ արեւը թագաւորն է, ու լուսինը թագուհին։ Թէ՝ աչխարհ արարած քնացած ժամանակը՝ լուսին կ'ելնէ շրջելու որ չտեսնան զինքը։ ու բարիքներ կը սփռէ ապրողներուն, և ամօթխածութեան համար երբեմն ամպէ քօղ կը ձգէ երեսին։ Թէ՝ աստղերը՝ լուսնոյ կոյս ընկեր և նաժիշտներն են։ Հարօրաձեւ աստղերը՝ նշան

կու տան, որ ժամանակին վարողն ու ցանողը՝ բազում արդիւնք կ'առնու։ Ցարդ ողը նշան է՝ որ ժամանակով ուրիշ արարածոց աստուած իւր մշակները ղրկեր մեր երկրի աստուածոյ կալն յարդերը գողցեր, ու մեր աստուածոյ հրեշտակները նետ աղեղով զարկեր սպաններ են գողերը, յարդը թափեր երկնից երեսն ու մնացեր։ Կրեռք աստղերը՝ նշան են որ Աստուած ամեն ուչխատաւորին իւր վարձքը կը կշռէ կու տայ։ Ցոլացող աստղները նշան են որ այնքան մարդ մեռան. վասն զի ամեն ծնած ու ողջ մարդոց մէկ մէկ աստղ կայ երկինքը, և մեռած վայրկենին կը տուզանի աստղը։

Եւ որովհետեւ Հայաստանի մէջ կանանց սեռն՝ միայն երախայից և պառաւանց արտօնութիւն կայ երեսաց երեւնալու, և բարձր ձայնիւ խօսելու. իսկ հասած աղջկունք, նոր հարսներ և մանկամարդները թէ շորով կը փաթթուին կը ծածկուին, և թէ մունջ ու նշանացի կը խօսին մարդոց հետ. այսպէս է մեր լուսինն ալ, թէեւ թագուհի լինի, մութ ժամերուն այցելութիւն կու տայ տիեզերքաց, և մարդոց աշխատասիրութիւնը

նշանացի կը քաջալերէ։

Վարագայ սարէն կ՚երեւայ արշալոյսէն առաջ յարեւելս արեւուն ծագումն. ահագին լերան մը տակէն կ՚ելլեն նախ ১২ ղուլաշներ, սեւ սեւ արարներ. և այդ լերան վրայ լուսեղէն ճալթներով ճառագայթի պէս կը զարնեն. լեռը կը ցնծայ. ամեն սարերը իրենց գլուխը կը խոնարհեն. արեւը իւր երեսը լուացած ժամանակ ջուրի ցօղերով կը սրսկուին սարերը և դաշտերը. հաւքերը ամենքը վեր կը թռնին այս ջրի սրսկումէն, կ՚արթնան կը հրմլան. յանկարծ արեւուն տակի գլուխն ու հրեղէն բրշանն կ՚երեւայ։ Թէ՝ հրեշտակները կը հանդերձեն արեւուն անկողինը, և կը հանեն ու կը հագուեցընեն անոր հրեղէն հալաւը։ Թէ՝ արեւուս անձն՝ ջաղցի ջրտան ճախրին կամ գունդին ձեւն ունի, որ գլորուելով կը դառնայ ու կ՚ընթանայ, և այդ գունդի փտաերէն լուսոյ ճառագայթներ կը ցոլանան, ինչպէս ջուրի ցնցուղը ջաղցի գունտէն։ Թէ՝ սատանաները բիւր բիւրոց կը ժողովին երրեմն և կ՚ուզեն հակառակիլ արեւուն, որպէս զի անոր լոյս երեսը չտեսնան մարդիկ. բայց հրեշտակները հրեղէն սրով կը պատերազմին,

կը գարնան, կը վանեն գանոնք սեւ ամպերու միջէն. և այս կռիւի ձայնն է ամպերէն եկած որոտումն. փայլակը՝ Գաբրիէլ հրեշտակի սուրն է. կայծակը՝ հրեղէն նետն. ու ծիրանը՝ աղեղն։

Վարագայ լեռը՝ որ լի է դանազան ծաղիկներով, պտղատու ագռաւներով, էրէներով, և ոչխարաց հօտերով. իւր մէկ կողմն վրան ունի Քնշնէ գեղը, և անոր շուրջը Սուլեան նայլանին. արքայական հովանոց. ուրեմն գրախտանման։ Հոն է Ռուկիրակ գեղը։ Վարագայ լերան գլուխն է Հոխիսմեանց խաչին պահուած ու յոյսնուած կարմիր ապառաժը, Գոլգոթան։ Այն ուրեմն պարզ կ'երեւի Մասիսը, և Հայաստանի շատ տեղերը։ Ճանապարհն վրայ է վերին Վարագը կիսատիւռ. և այս փլածի շուրջը առուակներ, վտակներ, մարգեր, դալարիք՝ հոգէն շատ. Գրիգորոսի աղբիւրը, Կաթն աղբիւր, Խոշ աղբիւր, անմահացուցիչ ջրեր։ Մէկ կողմը ձորամէջ և գաւ 'ի վայր հու գայ յեօթնապտիկի տաճարն Վարագայ. միւս կողմը սուրբ Գրիգորի աղօթատեղին և վանքը, ներսէն ձորամէջ աղբիւրներով զարդարուած։ Զատնապատայ [illegible]

և այս տեղերը Ս. Գրիգորն ու Վարդանը, պատն ու ճարին, հաւքն ու ճեռը, կոմն ու հարթիկ, ուխտաւորն ու տարփաւորը, զուռնան և նազարան, սերն ու մածուն, եղն ու կարագ, խորոված ու գինին, պարն ու կռիւը, ժամն ու պատարագը ամենը տեղի կ'ունենան գարնան կիրակաց օրերուն մէջ. բարեպաշտներուն և վայելչասիրաց միանգամայն ցանկալի և գոհացուցիչ։

Այս լեռը՝ բոլոր Ղանեցւոց ինչպէս դրօսանաց, նոյնպէս և բանաստեղծաւորեան երգասացութեանց առարկան և նիւթն է։ Ունի նա իւր հին պատմութիւնը քաղաքական և արդարեան։ Ունի հրապուրիչ և ազդեցիկ բնութիւն վայելչական, որոյ քարերն անգամ ձայն և բարբառ ունին։ Սերովբէից, մուսայից, քաջաց և վարդեանաց վայր ճանչցուած է նա։ Շուշանիկի Շուշանց գեղը և անոր դերեզմանը, զոր Շուշան խաթունի գերեզման կ'անուանեն ցայսօր. Ապարանչան աղբիւրը, այդ արքայադուստր Շուշանիկին օժիտը. Ղնձէ քաղաքը՝ Վարդայ դաշտին մէջ. և յամենայն կողմանց չէնքով, աւերակով, նշանաւոր անուններով պատմական այս լեռան։

ամեն կողմէն իրեն կը նայուի, ու ինքը կենսատու օդ և առատ ջուր կը բաշխէ երկրին։

Գայլ գետը որ Վարագայ սարի տակէն կը բղխի, և անյիշատակ ժամանակներէ հետէ իմաստունները հնարեր են խրամով մը գետին տակէն անցընել անոր ջուրը, որ Զորովանք, Զրուանդանց, և Սղոց գեղերու առջեւէն իր ընթացքը կ'առնու և կ'երթայ Վանայ բերդի ներքեւէն մինչեւ Ծովուն միջակէտը ու այն տեղ դուրս կու տայ իր ջուրը։ Թէ՝ այնքան ահագին և անհուն է այս գետը, որ նիմ է բացուի իր ծածկոյթը՝ պիտի ջրասուզէ այդ բոլոր երկիրը։ Թէ յառաջ այդ ջրով ծածկուած է եղեր բոլոր Վանայ հովիտը Ծովի բերանէն մինչեւ Վարագայ սարը։ Թէ՝ ինչպէս մինչեւ ցայժմ տեղ տեղ գետնի վրայ ականջ կը դնեն և այդ գետի ընթացքի շաչաչիւնը կը լսեն։ Թէ՝ ինչպէս երբեմն տեղ տեղ ծածկոյթը ծակուեր է և մարդ կամ անասուն անկէց ջուր խրմած՝ երբեմն ալ լուացուած ժամանակ, ջուրը դիրենք քաշեր կրեր կամ խեղդեր արդէն ասոնց համար է որ Գայլ գետ կ'ըսեն։

Թէ՝ ինչպէս Վանայ բերդի արեւմուտեան ծայրը ապառաժի մը տակէն մեծ ակ մը կը բղխի այդ ջրէն, և անունը Խոռխոռ է. այս ջրի մէկ մասն է միւս ակ մը, որ կը բղխի մօտ Խոռխոռին Ո-ԼՕ-ՋՈՒ ըսուած հին մկրտիթի մը քով, որ ըստ Թովմայի Արծրունւոյ, Գագիկի շինած չքնաղակերտ Ս. Սիօնն է. և այս ջուրը կ'երթայ խաչախորդ արանը, ուր կանայք ուխտի կ'երթան լուացուելով բաղդ բացուելու և տղայ ծնանելու համար։ Այս տեղ գայլութիւնը կը փոխէ այդ ջուրը։

ԼԲ.

Վանայ մէջ մէկ թաղ կայ բնակչաց, բերդի պարսպէն դուրս, որ մինչեւ ցայսօր ՀԱՅԿԱՎԱՆԴ կը կոչուի. ստուգաբանէ՝ այս անունը և կը գտնես, որ՝ Հայկը իջեւանած է այն տեղ. գուցէ Վան թագաւորէն և Շամիրամէն յաւաջ Վան քաղաքը՝ Հայկավանքէն կոչուեր է ՎԱՆ։

Հայոց ձոր, ուր Հայկին ու Բէլայ պատերազմն եղաւ, մինչեւ ցայսօր Հայոց ձոր կը կոչուի. այն տեղն է Ցըրշոզ գեղը, ուր Հայկի լայնալիճ նետով բացուած հակայ Բէլի դրահապատ կողի պատուհանէն արեւուն շողը կը տեսնուէր. այն

տեղ է Հայկ (1) և Աստուածաշէն անուանով գեղերը։ Աստուածաշինու առջեւն կայ մի հնաշէն բերդաձեւ մեծ բլուր, հաւանականաբար Հայկի դաստակերտ ամրոցն է, որոյ վրայ գեղին ուլերը կ'արածան այսօր. և քանի մը տարի յառաջ ուլարած մանկտին մի քանի հատ երկաթէ նետի գլուխներ գտած էին, որոնց գեղացիները իրենց խոշի և գերանդի շինել տուած էին։ Ի՞նչ անգին գիւտ. ի՞նչ խորհրդաւոր գործիք։

Ո՞ւր տարաւ և ո՞ւր բերաւ գիս այս նկարագիրը, զոր միայն իբր ծրագիր կը գրեմ։ Դառնամ պիտի, դադրիմ պիտի. քանզի անհաման են այսպիսի վայրերը, և անսպառ՝ անոնց վրայ խօսուածներն ու երեւցածները։

Աշխարհ մը՝ որուն գիւղարանականը Քրիստոնէականի փոխուած, մեհեանը՝ տուրը տաճարի, զոհը՝ մատաղի, կուռքերը՝ խաչքարի, և ամեն ինչ որ գիւղա-

---

(1) Բնակիչք Խէ կ'անուանեն այս գեղը. և Խ--- յոր կ'անուանեն զՀայոց ձորն, որ կրնայ ըսուիլ նաեւ Հաւոց ձոր։ Յայտնի է որ Վանցիք Հ տառը Խ կը հնչեն։ Իսկ Աստուածաշէն՝ գուցէ լինի Հայկաշէն. թէեւ պատմիչները զՀայկաշէն Մանազկերտի մօտերը ցոյց կու տան։

նուէր էր՝ Քրիստոսանուէր եղած և սըրաղնագործուած, բայց աւանդապահներն անհետ ալ չեն թողած իսպառ հնոց գրոյցները և ծէսերուն ու արարողութեանց պատմութիւնները, առասպելները։ Ասոր իւրաքանչիւր գաւառը զատ զատ անձանց գործ է ստորագրել, և զատ զատ մատեան կազմել։ Միայն թէ չեմ կարող զանց առնել նաեւ Թոխ մասուկներու և Յովան խոշէրու վրայ ալ բացատրութիւն գրել համառօտ մը, որոնցմով լիքն է Հայոց աշխարհը։

ԼԳ.

Հայաստանի մէջ իմ տեսած տեղերը, հազիւ գրեթէ կը գտնուի գեղ մը, որ թուխմանուկ չունենայ. թէպէտ քաղաքներու մէջ ալ կը գտնուին։ Ամենափոքրիկ մատուռ մը, կամ առանց կաւաշաղախի շարուած քարերով շէնք մը, որոյ մէջ տղայ մ'անգամ չպարունակիր, նաշքար մը, ուղղ կամ կոտրած, կամ գեղեզմանաձեւ շէնք մը, և աղոնց մէջ ճրագ ու խնկանոց, ուր կ'երթան բարեպաշտ անայք և ցաւագար կամ ախտաւոր անձինք ձէթ և մոմ վառելու, խունկ ծխելու, ծունկ դնելով, կուրծք ծե-

ծելով, ըլլով և պաղատելով իրենց ուխտը կը կատարեն։ Թուխ մանուկն այս է։ Թէ փողոցներու մէջ լինի այն, թէ տուներու մէջ, և թէ այնպիսի տան մը և այգիի մը կամ արտի մը մէջ, զորս Հայոցմէ առած լինին Տաճիկները, այսու ամենայնիւ Հայերը աղաս են իրենց Սուրբին ուխտի երթալու, Սուրբին հրաշքները հռչակելու, որում վկայ կը կոչեն զնոյն իսկ Տաճիկները. և այս աւանդապահութեամբ և Տաճկաց վկայութեամբ՝ Թուխ մանուկներէն շատերը չինուած են եկեղեցի, ժողովրդանոց, նոյն անունը պահելով Թուխ մանուկ։ Իսկ թէ ի՞նչ սկիզբն ունի այդ աւանդապահութիւնը։ — Ինձ կը թուի թէ՝ կամ իրաք Ս. եկեղեցեաց տեղ են եղեր այդ տեղերը, զորս բարբարոսութիւնը քարուքանդ է ըրեր, անհետացընելու նպատակաւ Հայոց աշխարհէն քրիստոնէութիւնը. բայց սրտի տաճարները մնալով կենդանի և անմահ՝ նշանակած են այն տեղերը, և որդւոց յորդի ցոյց տուած ու պաշտած՝ շէնքին տեղը, և անոր հողն ու քարը նուիրական են պահած։ Եւ կամ, հալածանաց դարերու և տարիներու մէջ, սուրբ հաւատքի համար նահատակուողներու արիւնը թափուած

կամանոնց թաղուած տեղերն եղած են, զորս նոյնպէս պաշտելի պահած են։ Եւ եթէ թոխմանոկ կոչուելուն և անուան ուշադրութիւն տանք, թերեւս լինին դոքա մանուկներ, խլուած իրենց մայրերու ձեռքէն, կամ կալած անոնց ստինքին, և գրկին մէջ մորթուած քրիստոնէութեան անուան և սիրոյն համար, թուխ դոյն ստացած բոսորային արեան մէջ թաթախուելով. որոց յիշատակի համար յատուկ պատմութիւն մը չկայ, բաց 'ի այն սրբազան երդէն Շարականոցին, որ է «Կամաւոր պատարագք, մանկունք տիւք «և կուսարեալք իմաստութեամբ, որք փո«խանակ կախին արրիք զգինին զմայլե«ցուցիչ. քարեխօսեցէք առ տէր վասն «մանկանց եկեղեցւոյ»։

ԼԴ.

Ցոսմանթոշ այն խաչաքարերն են, որ քաղաքին դուրս ու ըստ մեծի մասին վանքերուն մօտ, գեղերուն մօտ, արտի, անդաստանի բոլորը գտնուած բլուրներուն վրայ տնկուած են։ Այդ խաչքարերը՝ կա՛մ առհասարակ գեղացիք միանալով, կա՛մ իշխան մը միայն իւր քսակով, ծախս կ'ընեն, կը տնկեն, օծել կու տան մեծ

հանդիսիւ այդ քարին վրայ քանդակուած խաչը, և կը տնկեն 'ի պահպանութիւն իւրեանց գեղին։ Մեծ հացկերոյթ կը կազմեն, եզներ կը մորթեն, հարիսայ կամ մատաղ կ'եփեն, բոլոր հասարակութեան անխտիր կը կերցընեն։ Այս բարեպաշտ սովորութիւնը մինչեւ այսօր եւս պահուած կայ Հայոց մէջ։ Թէ ինչո՞ւ համար ըսուած է Յաստանիաշ. վասն զի երբ տարաժամ ձիւն կամ կարկուտ տեղայ, բերքերուն վնասէ. երբ մարախն ու թրթուրը բոյսն ու կանանչը դօսացընեն. երբ երաշտութիւն լինի. երբ ցաւ ու մահ պատահին մարդոց և անասնոց. երբ երկրաշարժ լինի. և ինչ վնաս որ պատահի երկրին, այն որ մարդոց ըրածը չէ, Աստուծոյ ցասումն կը համարին. և այդ ցասման դէմն առնելու համար Քրիստոսի խաչին պատկերը կը բարձրացընեն այսպէս երկնից առջեւ, որ պատուհասիչ հրեշտակը պատկառի խաչէն, և Աստուած հաշտուի։ Ու բաշխելով հաց և մատաղ հասարակութեան, իրենց սրտի ներողութիւնը միմեանց և դթածութիւնը 'ի գործ կը դնեն, որպէս զի և Աստուած ներէ իրենց յանցանաց,

ետ առնու իւր ցասումն երկնաւոր Հայրն գթած։

Լ.Ե.

Թէպէտ ճիգ կ'ընեմ չտապել հասնիլ վերջաբանիս կամ բուն դրքիս նպատակին, բայց նիւթերու առատութիւնը հարկ կը դնեն երկարել խօսքը։ Հիմայ նորէն միտքս եկաւ, քանի որ մեր մատենագրութիւնն է ժողովրդական կեանքի ծանօթութիւններ յիշել, որոնք լոյս կարող են տալ մեր ազգային պատմութեան և լեզուին կամ գրականութեան, ուշադրութեան առնելու է ուրեմն անոնց մէջ եղած տնական, դեղջկական, քաղաքական և կրօնական արարողութիւնները, առածները, երդումները, անէծքները, օրհնենքները, երգերը, պարերը, տղայոց խաղերը, որոնք առ հասարակ կեանքի և լեզուի պատմութիւնը կը կազմեն։ Օրինակ. — Փեսային՝ թագաւոր կ'ըսեն. անոր գլուխը փեսուրէ ջղոց կը զարնեն. պսակի ժամանակ մէկը թուր կը բռնէ, իբրեւ մաղխազ կամ դինակիր թագաւորին. մէկը՝ թագաւորին հալաւ կը հագցնէ. մէկը՝ բոլոր հարսանեաց սեղանին կերուխումը կը տնօրինէ, խաղն ու հանդէսը կը կարգադրէ։ Փեսայն ժա-

մէն երած ժամանակ ձի կը նստեցընեն, և ոյն տեղը իւր ափերով դրամ կը սփռէ, աղքատներ և մանկտին հրճուելով կը հաւաքեն, «Աստուած շատ արեւ տայ մեր թագաւորին ու թագուհւոյն» բոռալով։ Ի յիշատակ՝ Ցեղ ոսկի տեղալոյն Ի վեսայութեան Արտաշիսի և Սաթինկան։ . . .։

Զուռնայի և նաղարայի ձայնով և պարողաց առաջնորդութեամբ կ՚ընթանայ փեսայն. և երբ տան առջեւը կը հասնի, շեմին վրայ մէկ խոյ կը մատաղեն, և թագուհւոյն թեւէն բռնած ներս կը մտնեն. այս վայրկենիս տէրտէրն ու տիրացուն «Արեգականն արդարութեան ծագման արուսեակդ» շարականը կ՚երգեն, զուռնան կը փչէ, պարողք կը պարեն, թագաւորի մայրն ալ քաղցր փոխինդ ու եղով բաղարջ, և զանազան միրգեր կը հանէ եկաւորաց առջեւ՝ վառած մոմերով։ Ուրիշ մէկը՝ «Թագաւորի մէր դուրս ելիր, քեզ ի՛նչ ու ի՛նչ եմ բերեր» խորհրդաւոր խաղը կ՚երգէ, որուն մէջ հարսի տնական պաշտօնները կը թուեն։ Թագաւորի մայրը խանդաղատեալ արտասուալից կը համբուրէ իւր թագաւորեցեալ որ-

դին և հարս թագուհին, որ դլխին մինչ ոտքը քօղարկեալ ծածկուած է։ Եւ այլ շատ արարողութիւններ կան, զորս չգրեցի մանրամասն։

ԼԶ.

Տղայոց և երիտասարդաց խաղերու մէջ այնպիսի տեսակներ կան, որք պարզաբար մարմնամարզութիւն են. և քանիներն ալ մարտադիր պատերազմիկ կրթութիւն։ Խիստ ճարտար հանելուկներ յօրինած ունին. և բազդի խաղերը, որոցմէ է՛ն նշանաւորն է վիճակ խաղը։ Վիճակը կոյս աղջիկները կը պատրաստեն Համբարձման առնին, եօթն աղբիւրէ ջուր լեցնելով մէկ ամանի մէջ, և վարդով, ուէհանով և ամեն բացուած անուշահոտ ծաղիկներով կը զարդարեն զայն. իւրաքանչիւր կոյս մէկ խորհրդաւոր նշան կը դնէ վիճակ. գիշերները աստղունք կը դնեն զայն, և ամենայն զգուշութեամբ կը հսկեն. վասն զի երիտասարդները հետամուտ են գողնալու։ Սքանչելի է այն տաղը, զոր վիճակի բացման ժամուն կը նուագեն օրիորդները. իրենցով մի տաղ, յորում իւրաքանչիւր ոք կոյս իւր ապագայն, իւր կեանքը, իւր սէրը կ՚ամ-

փոփէ 'ի մի երիտասարդ, որ լինի աղ-
նիւ ձիրքերով, ազնիւ մարմնով, արի,
վեհանձն, յաջողակ, բարեպաշտ, իմաս-
տուն, զոր կը խնդրէ բաղդէն տալ իրեն
համար ամուսին կամ փեսայ. և ահա
երջանիկ է նա։ Իւրաքանչիւր աղջկան
ըզձացած հանգամանքները, որոցմով հա-
մակիր պիտի լինի փեսայն օրիորդին, և
այն հանգամանքները՝ որոցմով երջանիկ
պիտի լինին երկոքին, այդ տաղերգի մէջ
կը թուեն։ Մեծ հանդէս է վիճակի բա-
ցումն, և որքան օրիորդաց, այնքան եւս
երիտասարդաց ցանկալի ու հետաքրքրա-
կան է այն օրը և այն հանդէսը։

Լէ.

Խօսիմ մէկ քանի աւանդութեանց վրայ
եւս։

Վարդավառի տօնին, այն ինչ եկեղե-
ցին՝ Քրիստոսի պայծառակերպութեան
աստուածային տօնը կը տօնէ, նոյն օրը,
բոլոր ժողովուրդն Հայոց, արէ և կա-
նայք, ծերք և մանկտիք ջրախաղութիւն
կը կատարեն. թէ՛ տուներու մէջ, և թէ՛
փողոցները, կամ դաշտերու մէջ գետե-
րու ափին կամ աղբիւրներու ակին ու
առուակին մօտ խմբուած զիրար կը դը-

նեն 'ի ջուր · կամ գոնէ կուժերով իրարու վրայ ջուր կը թափեն ։ Հայոց նաւասարդն է վարդավառը ։ Թողլով վահեւունեանց տօնի հանդէսն 'ի Ցարօն , զոր կը դիւցաբանէ հնագէտն և բանագէտն Մ· Թաղիադեանց իւր Սօ և Սենդէլի մէջը ։ Նաւասարդը Հայոց առաջին ամիսն է · այսինքն երբ մարդկութեան երկրորդ սկիզբն և հայրն Նոյ՝ նաւով հասաւ 'ի Մասիս , փրկուելով ջրհեղեղէն՝ Աստուծոյ Նախախնամութեամբ , և երբ իջաւ Նախիջեւան , զոհեց Աստուծոյ , այն օրէն առաջին ամիսն սկսաւ նորոգեալ աշխարհին , անուանուելով Նաւասարդ ։ Եւ Նոյ՝ որպէս զի ջրհեղեղին յիշատակը անմոռաց պահեն մարդիկ , պատուիրեց իւր որդւոց՝ ջրով ջրոտել զիրար ։ Ինչպէս նաեւ կայ վանայ մէջ մէկ արարողութիւն մը եւս , որ նոյն վարդավառի օրը բնակիչք թաղ թաղ բանակ կը կազմեն և իրարու դէմ պարսետով և փայտէ նետով ու աղեղով կռիւի կ՝ելլեն իբրեւ խաղ ։ Այս եւս կարելի է Հայկավանից բնակչաց հին աւանդութիւն համարել , իբրեւ՝ յիշատակ պատերազմին Հայկայ ընդ Բէլայ ։

Վարդավառի տօնին Աղաւնի թռցու�
նելու աւանդական յիշատակն ալ յայտնի է, որ միայն Հայոց սեպհական արարողութիւն է 'ի յիշատակ Նոյի արձակած աղաւնւոյն. զոր կը շարունակեն Հայաստանի շատ գաւառները, և 'ի Պոլիս Իսաքիւղարի Ս. Կարապետ եկեղեցւոյ տօնախմբութեան օրը, Վարդավառին, աղաւնի կը թռուցանեն, և այդ տօնը ուրիշ ազգերէն անուանուած է գիւ-ջերջին փոդէյէ, Տօն աղաւնեաց. Նոյայ որդւոց, Նախիջեւանու բնակչաց Հայոց գաղթականութեան հետ, այս ջրհեղեղեան և աղաւնի թռուցիկ տօնն ալ գաղթական եկած է մինչեւ 'ի Վոսիոր,

ԼԸ.

Բանասիրաց հետաքրքրութիւնը գոհացընելու փափագով կը փութամ ծանուցանել, թէ Վանեցի Տ. Սարգիսեան Գեր. Երեմիա եպիսկոպոս, Արժ. Ղեւոնդ վարդապետ Փիրղալիմեան և Արժ. Գրիգորիս վարդապետ Աղուանեանն քանի մը տարիէ հետէ նախանձելի աշխատութիւն մը ստանձնած են, որոնք իրենց հանդիպած տեղերու հնութեանց ստորագրութիւնը, վանքերու և եկեղեցեաց, կամ տուներու

և աւերակաց մէջերը գտնուած խաչքարերուն, հին ձեռագիր մատեաններու յիշատակագրութիւնները օրինակած ունին, և ասոնց հետ մէկտեղ ժողովրդեան մէջ խօսուած հէքեաթները, անէծքները, առասպելները և գաւառական շատ մը բառեր հաւաքած ունին 'ի գիր. անշուշտ օր մը 'ի լոյս հանելու համար։ Սոյնպէս և Տրապիզոնցի գիանական Զօրոս պատուելին Թովմաեանց, որ Տրապիզոնի և Տարօնոյ ստորագրութիւնները աշխատասիրած է յանձնարարութեամբ Ս. Հայրիկին, հանդերձ կարեւոր լուսաբանութեամբ հին աւանդութեանց և անուանակոչութեանց զանազան վայրաց, որք կը գտնուին այդ երկու աշխարհին մէջ, և հանդերձ նկարագրութեամբ Տարօնոյ բնակչաց սովորութեանց և լեզուին։ — Դեռ տպագրուած չեն այս գործքերը —։

ԼԹ.

Ես ինքս ալ վաղուց սկսած էի ճաշակս և գրիչս սիրել տալու այդպիսի առարկայից, և ԱբԺ-ի Վ-ոպ-ական մէջ 'ի Վարագ տպագրել տուի Վ-ոյ պ-ոանց ողբն։, և այլն։ Ի Մուշ ալ Տրօնոյ ԱբԺ-ին մէջ Մշեցւոց լեզուով գրը-

ուածքները և քանի մը երգեր տպագրեցի. բայց որովհետեւ միշտ Աբծ-ոյ թռիչը խափանեցին, և Աբծ-ինը խոցոտեցին, երկուքի շալունակութիւնն ալ վատութեանց և մատնութեանց զոհ ընելով։ —Սակայն որպէս զի չխոտորիմ գրութեանս ընթացքէն, ուրիշ բան մը չեմ ըսեր այս մասին։ —Իսկ ես երբեմն 'ի Վան, երբեմն 'ի Մուշ, երբեմն 'ի Պոլիս, երբեմն 'ի Կարին, յաճախ և ընդ փոյթ կը տեղափոխուէի վրաս եղած հարկէն, և իմ նուիրական բաղձանքիս՝ գրասիրութեանս հակառակ, միշտ դատապարտեալ էի այնպիսի պաշտօնական ծառայութեանց, որ էր մշակութիւն, տնտեսութիւն, և . . . անձանց վարչութիւն . . . վասն որոյ հաւաքածներէս և աշխատասիրածներէս բաւական բան կորուսած եմ, և ամեն բանէն աւելի ժամանակս։ Այսու ամենայնիւ տակաւին 'ի ձեռին ունիմ հրատարակելու արժանի բաներ, թէ հին թէ նոր, զորս կը խոստանամ հետզհետէ 'ի լոյս ածել։

Խ.

Մինչեւ ցասա ինչ որ գրեցի, անոնց և ոչ ստուերագիրն ունէի, այլ որքան

միտքս առաջնորդեց, յիշեցի և գրեցի։ Այժմ իբրեւ բուն նիւթ այս գրքոյկիս պիտի կցորդեմ Դ-ՒՆ Ս-ՈՆՆՅԻ կամ Մհերի դ-ոնս վէպը, զոր երեք տարի հետամուտ եղայ ձեռք բերելու, և ոչ ոք գտայ որ ամբողջապէս գիտենար. մինչեւ 1873 յունիս ամսոյն՝ Մշոյ դաշտի Առնիստ գեղի երեսփոխան Պ. Կրպօն ներկայացաւ ինձ Արժ. Օհան վարդապետի միջոցաւ։ Սա կը պատմէր թէ իւր վարպետը շատ ընդարձակն գիտէր այս պատմութեան, և թէ մէջ ընդ մէջ շատ տեղեր ոտանաւոր խաղեր կային, որ ձայնով կ'երգէր։ Թէ՝ այդ վարպետը երկու Վռշիկ աշակերտ ունէր, որոնք շատ կատարեալ սորված էին, և թէ ինքն՝ բաւական ժամանակ պատմած չլինելով, շատ կարները մոռացած էր։ Այսու ամենայնիւ երեք օր զինքը պահեցի, խնդրեցի, պատուեցի, պարգեւատրեցի, և նա ինքզինքը կազդուրելով պատրաստելով, պատմեց բերանացի. զոր իրեն բարբառով 'ի գիր անցուցի։ Պատմիչի լեզուին մէջ Բաղիշեցւոց բառեր կան գործածուած. պատճառն այն է որ Պատմիչի գեղը թէպէտ Մշոյ կը պատկանի, բայց Բաղիշոյ մօտակայ է. ընդհանրա-

պէս Խոյթայ և Զուխուրայ գեղերու Հայոց լեզուն այս տիպն ունի։

Պատմածին նիւթը Արծրունեաց նախարարութիւն և Սասնոյ դաւառի շինութիւն ու սկզբնաւորութիւնն է։ Աստուածաշունչէն, և մեր ազգի պատմութենէն յայտնի է որ Ասորւոց Մինեքերիմ արքայն իւր Աղրամելէք և Սանասար որդիքը կուռքին զոհ պիտի մատուցանէր, ասոնք ալ իրենց հայրը զոհեցին, և փախստեայ եկան 'ի Հայս՝ մեր Սկայորդւոյ ժամանակը։ Սանասարը բնակեցաւ 'ի Սասուն, և Աղրամելէք՝ Վանայ ծովու կողմերը, կապուտկոզայ մօտերը։ Ասոնց պատմութիւնը թէ Խորենացին, թէ Թովմաս Արծրունին և թէ այլ պատմիչներ ընդարձակ կը գրեն։ Հարկ չկայ մեզ կրկնել թէ ո՞րքան յաջողութիւն և մեծութիւն գտան Հայաստանի կառավարիչներէն, և ի՞նչ ծառայութիւն և քաջութիւն ըրած ունին իրենք և իրենց սերունդ։

Կը տեսնուին այս ասացուածքին մէջ այնպիսի կտորներ, որ պատմագրութեանց կը համաձայնի. բայց և կտորներ ալ կան որ բոլորովին ժամանակագրութեան, տեղագրութեան, և ամեն հանդամանաց

հակառակ են։ Դէպքեր՝ որ յառաջ քան զՔրիստոսն են, քրիստոնէաբար կը զբրուցուին, և Սանասարի ու Ադրամէլէքի ժամանակը Մշոյ Ս. Կարապետի վանքն ու Հայերը խաչապաշտ կը ներկայացուին։ Ասոր մէջ յիշած Մըսրը՝ գուցէ Մուսլ կամ Մուսուլ լինի, որ հաւանականութիւն կը վերցընէ, և Սասնոյ տիրապետութեան սահմանէն շատ հեռու չէ։ Բաղդադն Բաղդադ է, Խլաթն՝ Խլաթ, Կապուտկողն՝ Կապուտկող. նոյնպէս և միւս ամբողջ յատուկ անունով տեղերը ուղիղ են։ Իսկ Կաղզուանը Կարսայ մերձ է, և յայտնի է որ Վրաց իշխանութեան տակ գտնուեր է այն գաւառը։ Խանտուտ խանում, և Շերբգան խոռասական, Հըմլայ լօռայ վէհլիվանները — ըմբշամարտները — որ այս խօսքերուն մէջ կ'երեւնան, գուցէ վիպասանից ծանօթ լինին, և աւելի Վրաստանի բնակչաց,

Ադրամէլէքի, —կամ, պատմողի բառոյն ըսեմք—, Ադրամէլէքի որդւոց անուններէն երեքը բոլորովին բանաստեղծական անուն կը թուին. Ճնդղ-ֆոտրիկ, Ցոնվէֆին և Խորֆոռանն։ Գուսանը՝ երգիչ կը նշանակէ. իսկ առաջին երկու անունները չեն բացատրուիր։ Զէնով Օհան և Դաւիթ

Հայոց ծանուցեալ և հասարակացեալ անուններ են, բայց քրիստոնէութեան դարուն մէջ։ Արդէն Դաւիթի կեանքը և գործերը միջին դարուն կը վերաբերին, բայց անմիջական զաւակ լինել Աբրամէլքին, այդ յաւիտենական առասպել է։ Ամբողջ այս գրոյցքը նկարագիր է քաջութեան, ընտանութեան, բարեպաշտութեան, և պարզ ու անխորամանկ յարաբերութեան Դաւիթին՝ իւր սիրուհւոյն հետ, իւր ախոյեանին հետ։ Այս գրուածքը իւր բոլոր անկանոնութեամբ հանդերձ՝ հիանալի ոճեր ունի ասացուածքի։ Դիւցազնի բազկի ուժը անհամեմատ ցոյց տալու համար՝ երբ Դաւիթին խլել կուտայ Ջորջիզի ձեռքէն դուրզը, նետել կու տայ այնպէ՛ս ուժգին, որ տակաւին մինչեւ ցայսօր կ՚երթա՛յ նետելու թափէն, Դաւթի ուժոյ անսահմանութիւնը և տիեզերաց անհունութիւնը ցուցընելով։ Այս գրուածքի մէջ կը տեսնէ հեռաքրքիրն՝ դեղջկական կեանքի հանգամանքները. Աբամէլքի մահուան համար Սասունցւոց սուգը. Քեռի Թորոսի ուխտը. «Հացն ու գինի, տէրն կենդանի» երդումն. հպատակեցընելու համար թուրի տակէն անցընելու սովորութիւնը,

Դաւթի և իւր հորթարած ընկերին մտերմութիւնը։ Յանդուգն խանդմին աշուղը-կելը՝ Դաւիթը իրեն վրայ սիրեցընելու։ Դաւիթի անվեհերութիւն և վեհանձնութիւնը, երբ Մարամէլէքի հետ կը զարնուին։ Յանդուգնի քաջութիւնը, և փէհլիվաններուն ճիւաղական նկարագրի ահագնութիւնը։ Զէնով Օհանի ձայնի ոյժն և ահաւորութիւնը. և Մհերի վրդովութիւնը, որ իսպառ անհամեմատ մարդկանց կը կացուցանէ, և երկրագունդն ալ զայն կրելու անբաւական։

Այս գործիս հրատարակութիւնը հասկացողին համար արժէք կ'ունենայ. բայց կարծեմ արհամարհողներ աւելի պիտի լինին և այպանողներ, ոչ միայն այս գրքոյկը, ընդ որ և իմ անձը։ Ասոնք չհասկըցողներն են։ Բայց մեր փոյթը չէ։ Քաջալերուած կը համարիմ զիս, եթէ համրանքով քսան հոգի եւեթ լինին հաւանող այս գործոյն, և կը շարունակեմ, խրախոյս տալով այլոց որ՝ հետեւին, աշխատասիրեն ձեռք բերել, 'ի լոյս ածել այսպիսի գրուածքները։

Մի քանի խօսք ալ Մհերի դրան վրայ։

Վանայ բերդէն դէպ յարեւելս նայելով՝ այգեստանեայց հիւսիսակողմը փոքրիկ լեռնագօտի մը կայ, որոյ արեւելեան գլուխը կ՚ըսուի Զըմբիզըմի մաղարայ. արեւմտեան ծայրը՝ Աբրիի. և մէջտեղը Մըհերի դռան։ Լեռան այս երեսն են անուանածներս, որ կը նային Այգեստանեայց վրայ։ Զըմբիզըմի մաղարան քարայր մի է ընդարձակ. որուն մէջ կ՚երթան մարդիկ շրջելու. ուր ձայն արձակած ժամանակ զըմբի զըմբի արձագանք կու տայ։ Այն քարայրին դէպ 'ի արեւմուտքը, ամենամութ անկիւնը, քարէ փորուած բացդուռ մը, և անկից ներս ճանապարհ մը կը ցուցընեն, յորմէ սաստիկ քամի կը փչէ։ Կը պատմեն թէ այդ լեռնափոր ուղին կը տանի մինչեւ Վանայ բերդի մէջ. դուցէ հաւանական կամ տոյգ լինի։ Արդէն Զըմբի զըմբի մաղարայի լեռնագագաթը բերդաձեւ է, և այս քանի տարիէ հետէ այն տեղերէն փորելով շէնքի համար քար կը հանեն. հողակոյտներու տակ երեւցան կոփածոյ քարերով շէնքեր, հողէ կարասներ և կուժեր, որոց մէկ քանիին մէջ ցորենի չոր հատիկներ լցուած էին. ոսկեզօծ պղնձէ շինուած արհեստական

աթոռի կտորներ, և մէկ խոյ, ու խոյի վրայ հեծած մարդ՝ նոյն պղնձէն թափիծու՝ արձանի կերպով։ Այս վերջին կտորը՝ Եղեսեան Գեր։ Արբազանը այն ժամանակ Վան գտնուելով իւր հետն առած Պօլիս բերած է։ Տակաւին քար հանել կը շարունակեն, և շէնքեր կը բացուին, ու կը պատմեն որ երկաթէ նետեր ալ կը գտնուին։

Մհերի դռոը ամենալերջ քար է, զոր տաշեր և կոկեր են մեծ դրան ձեւով, և վրան բեւեռագիրեր գրած են, խիստ յստակ։

Բևեռագիրերը՝ նկատողութեան արժանի են, որ Հայաստանի ամեն նահանգներէն աւելի յաճախ՝ Վասպուրականի մէջ և անոր մօտակաները կը գտնուին։ Ես բաւական հետաքրքիր եղած եմ Մշոյ, Մանազկերտու, Բասենու և Կարնոյ կողմերը տեսնելու, գրեթէ երբէք չեն գտնուիր։ այն ինչ Վանայ բերդին, Մհերի դրան, և այլ շատ մը այսպէս կոթողաձեւ լեռներու վրայ տաշած ու գրածէն զատ, շատ մը դեղերու և վանքերու մէջ կտոր կտոր քարեր կը գտնուին, որոց վրայ նոյնպէս բեւեռագրեր կան։ Վանայ քաղաքամիջի Սուրբ Առաքեալք եկեղեցւոյ

տաճարի ներքին սպատին շարուած քարերու վրայ բոլորովին առողջ բեւեռագրեր կան. Վարագայ տաճարի շէնքին մէջ գործածուած քարերուն վրայ, Կարմրուրայ վանքը, և այլ տեղեր։ Շատ տեղեր ալ հին դերբուկներ փորելով կլոր կամ քառակուսի երկար քարեր կ՝ելնեն բեւեռագրերով։ Լէզք գեղի եկեղեցւոյ Ս. Սեղանի վէմ քարը կլորաձեւ և մէջտեղը ծակ, ու շրջապատը ամբողջ բեւեռագրեր են։ Ճիշդ ասոր նման քար մ՝ալ Վարագ կայ։

Մհերէ դրան վերէն սեւ ջուր մը կաթ կաթ կը ծորի։ Եւ կ՝ըսեն. «Մհերն և իւր ձին Աստուծոյ հրամանով փակուեր են այն տեղը։ Այն սեւ ջուրը Մհերի ձիու շեռն է։ Այդ դռնով ներսը ճոխէն ֆոլոկ կը դառնայ, այսինքն աշխարհի մարդկանց կամ երկրագնդին ճախրը, անիւը։ Մհերը շարունակ անոր վրայ կը նայի. երբ այդ ճախրը դադարի, այն օր Մհեր կ՝ազատի, դուրս կ՝ելլէ, ու աշխարհը կ՝աւրէ»։ Եւ թէ՝ «Ամեն տարի Համբարձման գիշերը երկինք գետին իրար կը համբուրեն. և այդ րոպէին Մհերի դուռը կը բացուի. ո՛վ որ արթուն մնացեր և այդ վայրկեանը տեսեր, ինչ որ սիրտն ուզեր,

այնպէս եղեր է։ Եւ որովհետեւ Մահերի դուռը բաց է այն բոպէին, ո՛վ որ ներս մտնէ, որքան ոսկի ուզէ կ՚առնէ դուրս կ՚ելլէ, վասն զի հոն աշխարհի ոսկին կուտուած է։ Թէ՝ քանի մը մարդիկ փորձեր են, և ագահ լինելով շատ վերցընելու համար յուշացեր, դուռը գոցուեր, ներսը մնացեր են»։

Ուրեմն այս կերպով Մահը կը լինի աշխարհի բաղդը դարձընող ու ոսկի բաշխող չաստուած մը։ Գուցէ Մահերն ինքն Մեհր Ոեժն լինի, և իւր դուռը ուղղակի հարաւոյ հանդէպ կամ արեւու լինելով՝ պաշտելու պատշաճ։ Բայց ներկայ վէպը այլապէս կը պատմէ։

ՄԱՍ Բ.

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹ

ԿԱՄ

ՄՀԵՐԻ ԴՈՒՌ

Ա.

Բաղդրդոյ Խալիֆէն շատ զօր ու զօրընդեղ կ'եղնի. ազգաբար կ'ենէ՝ կ'իդայ վըր մըր սուրբ Կարապետու. շատ զմըր ազգ կը նուազցու, ու շատ հէսիր կը բռնէ տանէ։

Աղջիկ մի ուրնէ շատ խորոտիկ կ'եղնի. Բաղդրդու Խալիֆէն զըդ աղջիկ կ'առնէ կը ֆէջնէ վըր ուրան։ Մէկ ժուկ մ'ու ժամանակ մէջ կ'ընցնի, երկու տղայ ուրնէ կ'եղնի. մէկի անուն կը դնեն Աբամէլիք, ու մէկին՝ Սանասար։

Պապ կռապաշտ է, ու մամ խաչապաշտ. (չունքի զմամ մըր ազգէն տարու)։

Ըդ Խալիֆէն հեղմ՝ լէ ազգաբար էրեց ու եկաւ վըր մըր ազգէն. մըր ազգ,

(մեռնիմ ուր սուրբ հրաշքին, սուրբ Կարապետ,) ըդ անդամ զինք շատ նեղ լծեց. ու ըդ նեղութենի մէջ՝ խալիֆէն կանչեց զուր կուռք, ու ասեց.

— Եա ճոչ կուռք, դու զիս ազատ էնես էդա ապդից, ու յերբոր ես սալամն իդամ, զիմ երկու տղէն լէ քըզի մատաղ ա՛էնեմ—։

Ուրանց մամ քնաւ, տեսաւ էրած։ Տեսաւ որ, ուրան երկու ճրագ կ՚էր, կ՚իդէր առջեւ ընցնելուն որ ընցնէր, ու կը դառնէր հեղմ՚ լէ լուս կ՚իտէր։

Ելաւ առաւրուն, յերբոր ախլաւ, զուր էրզի եղելութենն խոս էրեց ուր տղէկներուն, ու ասեց.

— Էս գիշեր, սրբ Կարապետ ընձի երած էկաւ ասեց որ, ձըր պապ ընկեր է նեղութենի մէջ, ու զձըզի մատաղ է կանչե ուր կռքերուն. յերբոր էկաւ, զձըզի կը մատղէ։ Դուք ձըր ճարէն գատէք—։

Երկու աղբէր կանչեցին զուրանց Աստուած. ելան վերցին զուրանց ղաապէն, ու լցեցին յաֆոբէ մի ֆարայ ու ընկան ճամբահ։ Ընկա՛ն, ու շատ պըտըտուան. զարկեցին էկան ղըբէպ երկիր։ Էկան գացին նեղ ձոր մի։ Տեսան որ՝ գետ մի կ՚իդէր կ՚ընցնէր. առու մի ընդիէն կ՚իդէր

կը զարկէր մէջ ըդ գետին. կը կտրէր զըդ գետ ու կը շերտէր չուր 'ի մէջտեղ. ու հրպամ՝ լէ կը խառնուէր մէջ ըդ գետին ու կ'երթէր։

Սանասարն Աբամէլիքին ասեց. — Թը՝ որն որ զըդայ ջրի ակ դանէ, ու զուր տուն լէ սուկէ վըր իդա ջրին, ընդրայ ՝վէլոթ լէ որ եղնի՝ հրմլայ զօրեղ կ'եղնի —։

Էլան, առան զառուն, ու գացին երկու աղբէր։ Գացին ու գտան զաղբուր։ Ըդ աղբրի ջուր՝ լո՞ւ մի ջուր է. կ'իդայ կը կտրէ Ըմամ զուր տըկու առուն, ու հեղմ՝ լէ կը դառնայ, հեղմ՝ լէ կը խառնուի առուն։

Կը նստին վըր ըդ ական, ու զուրանց բերդի հիմ կը թապլեն։

Սանասար կ'երթէր Ղէլէր, ու Աբամէլիք կը դատէր վըր բերդին։ Շէնիք ըդ վէրքեր չկէր։

Մէկ տաս՝ քսան օր բանան վըր ըդ +՝շէին։ Աբամէլիք էկաւ ընմէկ օր, տեսաւ որ՝ Սանասար թաշկեր է՛ր ու քուն ընցեր էր վրէն. արընդոտ Ղէլէրներ հըմալ անեփել թալեր էր 'ի գետին ու քներ էր։ Շա՛տ կսկծաց ըդուր ՝՝՝ՐՐին, ու ասեց.

— Աղբէր, էլի էրթանք. յար 'ի յե՞ր

պիտի մնանք մենք հուդայ, ու անկի միս ուտենք։ Աստուած՝ որ իտէր մըզի, մըր պասպու փոշկն ու սարքն կ'իտէր —։

Երկու աղբէր հէծան, ու խբոդ էրեցին Արզրումայ նստողին ու էկան։ Էկան գացին ըդ մարդուն երկու աղբէր Ռոմանայ էրեցին, ու կայնան էռաջ։ — Ահագին ու քու փէֆվ ղբոբէդբոդ (զարբը դէսդ) մարդ էն ըդ երկու աղբէր։

Արզռում նստող Ամիրէն շատ հըշ էրեց ըդունց մօտէն. հարցուց զուրանց ինչ ու ջին, ու ասեց։

— Դուք ի՞նչ մարդ էք։

Սանասարն ասեց

— Մենք Բաղդադու Խալիֆի տղէկներն ենք։

Ըդ Ամիրէն ասեց.

— Հա՛յ, հա՛յ, հա՛յ. . . . . .
(ու թոթուեց զուր փողպատ ըդունց մօտէն)։ Մենք ըդունց մեռելներուց կը փախնինք, ըդունց կենդընուն սոդ կ'իգանք։

Մենք ձըզի տէր չընք կըռնայ եղնի. յո՛ւր վե կ'երթաք, դացէք —։

Սանասարն ասեց Արամէլիքին.

— Աղբէր, մենք ըդ պասպու մօտէն կը փախնինք. ղըդ որ անուն մըր վրէն

հորի՞ ենք դրի։ ըստիր յո՛ւր որ գա-
ցինք, որն որ հարցուց, տ՝ասինք՝ Մըղի
բան չկայ, նը պապ, նը մամ, նը տուն,
նը վ-ՆԱ։ Բըլէ՛ խըլի կմըզի տիրեն —։

Հոնկուց դարձան ետեւանց, զարկին
գացին մօտ Ղարսայ նստող Ամիրէն։ Էն
լէ զըդ պատճառ տուեց ըդ տղէկներուն։
Ու ընոնք ըդ տեղէն դարձան։ Խըզ-
բեցին իդա հեղ Կապուտկողի թագա-
ւորին, ու գացին։

Կապուտկողի թագաւոր զըդ մարդիկ
տեսաւ շատ հըզ էրեց ըդունց մօտէն։
Աբամէլիք Ռամանոյ եղաւ ու կայնաւ ը-
դուր առջեւ, շատ դուր էկաւ ըդ թա-
գաւորին։

Հարցում էրեց ըդունց մօտէն թէ,

— Օղը-Լ, դուք յուստա՞յ էք։ ի՞նչ ու-
նիք։ ի՞նչ չունիք։

— Թո՛ւյ բանմ՝ լէ չունինք, ասեցին։
նը մամ, նը պապ, Ռա-Ռաբ-ոյ չունինք —։

Սանասարն եղաւ ՀԸԲ-ՂԼԷ, ու Աբա-
մէլիքն եղաւ ՂԱՅՎ-ՂԼԷ։ Մէկ ժամանակ
ըդունք հըմլայ կեցան։

Օրերուց մէկ՝ Սանասար Աբամէլիքին
ասեց։

—Ըդ խըզոր ոմանք կերանք ու մըր խըզբէն
հըմալ մնաց։ Լուսուն, ասեց, ոչ դուն

ղայլ եվէ, ոչ ես ՀԷՔ-ՈՒ կպում իտամ, առաստուն չերթանք ուրան երեւան —։

Կապուտկոզու ըդ թագաւոր քնուց իմցաւ։ Նը էն կայ, նը էն։ Ըդ հաղ կանչեց զըդ մարդիկ, առեց էկաւ թագաւորն, ու ասեց,

— Օղ-Ը, ՈՒԸՐ ես էռաջ ասեցի ձըզի թէ, ձըզի ի՞նչ կայ, մա՛մ, պա՛պ. ու դուք պատմութեն էրիք թէ՝ Մըզի բան չկայ։ Դուք զձըր մոդէն ինչի՞ վրայ էք էրե —։

Ասեցին.

— Թագաւորն ապրած կենայ. մենք՝ ողորմելայ է, մամ ու պապ չունինք, մա՝ քենէ պահենք, Աստըծուց ի՞նչ պահենք. Ամոթ մէկ խոբի մի տըւեր ենք մէ քիչ, ու թորկեր ենք էկե։ Իդա օրինակ աղբուր մի։ Ու ՆՈՂԼ էրեցին ուրան—։

Թագաւորի սիրտ կլուչաց վըր ըդունց, ասեց.

— Օղ-Ը, ՀԷՆԷ հըմայ է, առաստուն ձըզի քանի մի տուն կ'իտամ, ու գացէք զձըր բերդ չինէք —։

Ըդ թագաւորն էլաւ տուեց ըդունց քառասուն տուն։ — Հէ՛յ գըդէ տուն.. ամէկուն մէկ է՛չ ու մէկ ճախրակ —։ Առաւտուն էլան բարձան զուրանց տներ,

ու երկու աղբէր խբոտ էրեցին ուրանց խբոբին ու գացին։ Գացին էլան վըր ուրանց աղբրին ու վըր ուրանց հիման։

Սանասարն ասեց Աբամէլիքին.

— Ավել գիդա բե՞րդ չինենք, թէ չէ գիդա ֆոխէր ֆոխոբէ ավահէ — ։

Աբամէլիք ասեց.

— Առաջ չինենք գէդոնց ավահէ, ու նոր չինենք գմբը բերդ. ըդ ֆոխոբէ չըն կռնայ արեւուն առջեւ կենայ — ։

Ու բաշլայնին գավահէ։

Աբամէլիք ընդար զօրեղ էր, որ օր տասն տան տեղ կը փորէր, ու տասն տուն կը չինէր. ըն մէկէլ լէ գիւղտեր կը բերէր, ու բանուածքը երկուսով կը չինէն. չորս աւուր մէջ լման գքառասուն ավահէ չինեցին երկու աղբէր։

Սրոյ կրկին բաշլան գբերդ չինեցին, ու ռամամ էրեցին։ Ընքան զօրեղ էն՝ որ քարէ սան քարէ սուն գարկեցին, ձաք թալեցին, ռամամեցին գբերդ։

Աբամէլիք էլաւ էկաւ մօտ ուր Կապուտկոզի թագաւոր, ասեց.

— Մենք քո ավլոգն ենք, ու չիներ ենք ու թամամե գմբը բերդ. էկեր ենք քու մօտ ու խնդիրք կ'էնենք քեզանէ, որ իդաս ու մըր բերդին անուն դնես — ։

Ըդ կաստուտկողու թագաւոր շատ սիրեց ու ընդունեց զԱբամէլիք, ու ասեց.

— Գա՛յ որ զիս չըք մուցերի . . . —։

Ու էլաւ զուր աղջիկ տուեց Աբամէլիքին, ՀԸՐՈՂ էրեց։ Զաղջիկ որ պատկեցին վրէն, էլան թագաւորն, աղջիկն ու տղէն. ու քեռի Թորոս լէ ուրանց հետ գնաց։ Հեծան ու գացին։

Ընկաւ ուրանց առջեւ Աբամէլիք, ու գացին էլան վըր բերդին։ Հոնկուց թագաւոր տուեց ձիու գլուխ, որ պըտի դառնէր, ասեց.

— Դուք ՀԸՐ բերդին անուն դրեր էք, ու խոսքէ զիս կը կանչէք ու կը փորձաք—։

Աբամէլիքն ասեց.

— Թագաւորն ապրած կենայ. խոխոՐ էրա որ մենք ըդ բերդին անուն չենք դրե. զէն կինանք որ բերդ մի չիներ ենք կանգնցե —։

— Էլ ՝ոս, ՀԸՆԷ որ անուն չըք դրերի, քարէ սան սուն էք զարկե, ըդրա անուն տ՝եղնի ՍԱՆՍՈՒՆ, Սասուն —։

Մէկ ժամանակ մանցին հոդի, քեռի Թորոս լէ կարգեցին, ու էն լէ մնաց հոնի. ու թագաւոր դարձաւ ուրան տեղը։

Աբամէլիք շատ զօրընդեղ մարդ էր. Սեւ սարի բոլոր՝ ու չուր՝ ի ծմակայ

քիթ՝ Մշու վերեւով սատան քաշած է-
ղած են չուրի Սեղանոցրու գոտէնը վի-
ճապաղջրու դուրան ու զըդ էլլոռն լէ ղավ-
ռնէց։ Զորս դարդոհ լէ թողեց. ու միչա
հանապատ կը զարկէր զուր դարդոհ, ու
կը հեծնէր զուր ձին, ու ինչ խոսք ջին-
ու ջանավոր եղնէր, կը բռնէր։

Օրերուց օրմ՝ լէ զարկեց գնաց չուրի
Մըսրը, ու Մըսրը լէ ղավռնէց. գնաց
գիշեր ըդ Մսրայ կեցոզի կնկան խոչ
սատկաւ. ու եղաւ իրնէ ավլոսի մի։ Ու-
Մսրայ թագաւոր լէ խնցաւ որ ըդ տղէն
Արամիլիքնէն է, ղբնէ ընդրայ անուն
Արամիլիք էր, գտղի անուն լէ դրեցին
Մսրամիլիք։ Ու Արամիլիք լէ սպանեց
գՄսրայ թագաւոր. առաւ զընդրա կը-
նիկ, ու նստաւ Մըսրը. եղաւ թագա-
ւոր։

Ըդի թող մնայ ըդ տեղ նստուկ։

Բ.

Սանասար նստուկ էր Սասուն. ուր
սատու կոքեր չըն թողի որ ըդի «ընդէր»,
ու եղաւ խոսք էրեց ուր սասուն ու մա-
մուն ու գնաց Բաղդատ։ Ուր սատ նըս-
տուկ էր փանջրէն, տեսաւ որ ուր տղէն
Սանասար կ'իդէր. ու ճանչցաւ, ու ասեց՝

— Էյ, մեռնիմ քըզի մեծ կուռք, ի՛մալ դքո մատաղ քաշիր բերիր. յար յե՛ր է մանցե՝ ղմրկէլ էլ կը քաշես բերես —։

Մամ, ըն+է խաչապաշտ էր, նստաւ ուր տղէկներն ապուշ արտունք թափեց։

Պապ առեց թուր ու սուր ու դնաց. կանչեց ու ասեց.

— Արի երթանք, որդի, երկրպագութեն արա մեծ կըռքին, որ զքըզի մատղեմ —։

Ասեց տղէն.

— Աբօ՛. քո ճոչ կուռք չատ զօրաւոր կուռք է. դիշեր էլ չըր թողնե, որ մենք ընտեղ «ըմբըվեն+. յար յե՞ր է մանցե՝ դուր մէկէլ մատաղէ կը քաշէ ու կը բերէ —։

Առաւ զտղէն, ու մտան կռքատուն։

Տղէն պապուն ասեց.

— Աբօ. չէ՞ դու գինաս որ մենք գացինք՝ մենք պատիկ էինք. մենք դքո կռքի զօրութեն չընք գինե. դէ՛ դու կգի քո կըռքին երկրպագութեն տուր, իշեմ ի՛մալ կ՝իտաս, ուսնեմ —։

Պապն ասեց. — Հըմայ, լաօ. — ու կգաւ երկրպագութեն տուեց։

Տղէն ասեց.

— Աբօ. քո կուռք ի՞նչ զօրաւոր կուռք էր. որ դու յեբոր կՁար, իմ աչքեր մթնեց, չտեսայ ի՛մալ էրեցիր։ (Զի՞ւ չհասաւ որ առջի դէմն զարկէր, մալ՞ոն կոճկներ չարձկվաւ)։ Ասեց. Աբօ, Աբօ, իդա հաղէ երկրպագութեն էրէ, տեսնենք ի՛մալ կէնես, որ ես լէ էնեմ —։

Ու հեղմ՝ լէ յեբոր կճաւ պապ, տղէն ասեց. «Եա հացն ու գինի, տէրն կենդանի». ու կուրդ մի իջաւ, ու զուր պապ Թալիֆէն եօթն գոռ գետին վե իջուց։ Առեց զկուրդն ու ինկաւ մէջ կրոքերուն, զմէն լէ ջարդեց, ու առաւ զարծրթներ լցեց ուր մալ՞ոն գէշ, ու բերեց տուեց ուր մամուն, ու ասեց.

— Մամօ, իդոնք էրէ քըզի ղենոն —։

Մամէ կզաւ վըր քիթ ու բերնին, երկրպագութեն էրեց, ու ասեց.

— Գոհանամ քենէ երկնի ու երկրի ստեղծող, գա՛յ որ զմըզի ազատ էրեցիր էն ղալըմ ձեռնէն —։

Բերեց զԱնասար փոսակեց, ու պատու տեղ դրեց վըր Ռոխոնն։ Ընի ընտեղ մնաց։ Դառնանք Աբամէլիքի վրէն։

Գ.

Աբամէլիք, որ նստուկ էր Մըսըր,

գ�մօտից եկող տղէն գՄարամէլիք թողեց ուր տեղ. ու ինքն էկաւ 'ի Սառուն։ Մէկ ժուկ մ՝ ու ժամանակ ըդ մէջ ընցաւ. քընիմ տղայ ըդ ուրա մօտից եղան. մէկի անուն դրեց՝ ՃՆՃՂԱՓՈՒՐԻԿ, ճոչ տղի անուն դրեց՝ ՅՈՒԱՆՎԷԳԻ, մէկին՝ ԶԷՆՈՎ ՈՎՄԱՆ, մէկի անուն լէ՝ ԽՈՐ ԴՈՒՍԱՆ, ու յընտու պատկի անուն լէ՝ ԴԱՒԻԹ։

Էդ տղէկներու մէջ ՃՆՃղափոքրիկն ու Յուանվէգին իսկի բանի պէտք չիդէն։ Ըմա Զէնով Ովման հընալ ձէնով էր որ, եօթն դ ըմչու կաչի կը թուէր արեւ չորցընէր, ու կը փոթթէր դինք, ու կը բուէր, որ չեընէր պատուէր։

Դաւիթ քընց գըմէնդէ հընարով էր, ուր գործութեան՝ էլ լեղուով ֆուրֆ չեղնի։

Իդա անդամ մէկ ժուկ ու ժամանակ մնաց, հալորաւ Ամարամէլիք. որ մի օրերուց ինք ու յինք նստաւ ու դուշուրդ եղաւ, ասեց.

— Զորս կողմ եկաւ ընձի դուշման, եռեւ իմ անցման էլ ո՞ր իմ ճիերուն տիրութեան տ՝էնէ. թէ որ էնէ՝ պտի Մարամէլիքն էնէ. էլ ինչու մարդ չկանայ դիմանայ իմ դուշմնէրուց — ։

Էլաւ խօսք էրեց Մարամէլիքին ու գը-

նաց։ Ցեր ժամանակն էր։ Ասեց.

—Սրամէլիք, ողջո՛ւ, դու լէ իմ ավլոտն ես. թէ ես չուտ մեռայ, իմ ճժեր ամանդ քըզի. թէ դու չուտ մեռար, քու ճժեր ամանդ ընձի. ես կը պահեմ —։ Դառաւ ու էկաւ, մնաց ուր բերդ։ Մահու օրն էկաւ, մեռաւ։

Սրամէլիքն էկաւ գըդրա ճժերն առաւ ու գնաց. ըսնէ դուր գաղտու ընտ. էին չըր մնացի։ Եօթն տարի Սասուն սուգ ունաց Արամէլիքի մեռնելուց ետու։

Օրերուց մէկ նստան ու գրեցին գինեխում քեռի Թորոսն ու գեղացիք։ Գեղացիքն ասեցին.

— Քեռի Թորոս, մըր տղէկներ հալորան, ու մըր աղջըկտիք պատուան. թը դու կենաս թը մըր եօթ տարի սուգ պահելով մըր Արամէլիք կը առնոց, եօթ լէ աւլի կը պահենք —։

Քեռի Թորոս ելն տուեց դուր գրիցներուն. ու ասեց.

— Կարդէք գձըր տըղէկներ ու աղջըկտիք. սուգ պահելով բան չեղնի —։

Գրեցին ղուրանց գինուխում ու էֆ էրեցին։ Քեռի Թորոսն առեց գկթիսէն 'ի ձեռք. կայնաւ. ու միտք արեց. նը կը խամ, նը կը դնէ։ Թորոսի տղէն 'ի մոտ

զանէն ձէն տուեց պապուն, ու ասեց.

— Արօ, ըղունք Սասնոյ ծուերն են. մկայ մէկ թամ խօսք քե կ'ասեն. եա խոմ, եա ղիր դեսին քէյֆ —։

Պապ վերուց տղին ասեց.

— Հէյ չան որդի։ Եա նստիմ հոդայ կերուխսում էնեմ, Մարամէլիքն իդայ տանի ղմբը ճժեր. ղԱբամէլիքի տղէկնեբը ղբրթբրիէ, եա նստիմ հոդայ կեր ու խուում էնեմ. ամօթ չէ՞ մբղի. «Հաց ղինի ու տէր կենդանի», քըն զբդ կբթխէն էլել խմած չեղնիմ. ելնեմ երթամ իմ ճժերուն երեւան —։

Քեռի Թորոս Սասնու զարկեց ու դբնաց 'ի Մբսբր. ջնբղիշ եղան ինք ու Մարամէլիք. ու նստան. ասեց.

— Հայդե, եա ու դու Աստծու դատաստուն։ Ղորդ է, դու ու Աբամէլիք իրար հետ սանապլղիշ եղեր էք, մա ղերին ղին եղնի, տիրուն կը հասնի —։

Էլան ու գացին ղբէ-ն. ճժեր հասաւ քեռի Թորոսին։

Մարամէլիքի աչք չաւ կը վախենայ ըղ ճժերուց. քեռի Թորոսին ասեց.

— Բե ւ' արի զբդ ճժեր ընցու իմ թրի տակն, ու առ ու դնա —։

Էկաւ ու ընբէնի էրեց տղէկներուն քեռի Թորոսն։

Յոանվէզին ասեց՝ Երթանք ընցնինք ուր թրի տակն ու Երթանք ։ Մըկէլ երկուսլէ հմալ ասեցին ։ Ը՞ռ՝ Դաւիթն ասեց ։

— Կըսալանէ թող ըսոր սպանէ, ոչ Էլէ ասեն ճիժ մ՝ սպանեց ։ Ես ընդրայ թրի տըկով չըմ ընցնայ ։ Հըմալ կ՝էնէ որ վալ ես մեծնամ սուր չքաշե՞մ ուր վրէն — ։

Ուր ահուն քեռի Թորոս գըդոնք ը՞ֆ էրեց որ տանի ընցու թրի տըկով ։ Դաւիթ գընկուաւ ու կայնաւ, ու չերթայ թրի տըկով ։ քեռի Թորոս բռնեց գԴաւիթի պաուկն ու հլոտեց որ ընցնայ թրի տըկով ։ Դաւիթ չգնաց թրի տըկով, կըշտով ընցաւ, ուր ճոչ բոթ քիսաւ 'ի Ջարդու քար՝ կրակ էլաւ մօտէն ։ Յեթոր Մարամէլնք տեսաւ, շատ վախեցաւ, ու ասեց ։

— Իդա պզտիկ է էսքան է, որ մեծցաւ ի՞նչ տ՝եղնի ։ Թէ որ ընձի ը՞ռալ մի եղնի՝ ըդրա մօտէն է — ։

Քեռի Թորոս առաւ գնժեր ու էկաւ 'ի Սասուն ։ Յոանվէզին գրեց բերդի մէջ ուր պապու տեղ ։ ու Դաւիթ՝ որ ըմնու պատիկն էր, գրեց հորթերու առէջ ։

Դ.

Դաւիթն էր, որ կօպալ մի կը զարկէր հորթերուն, քառասուն հորթիկէ հետ կը զլորուէր։

Օրերուց օրմ՝ լէ քշեց զհորթեր հանեց սարի գլուխ. տեսաւ որ հորթրածի մէկ լէ ուրիշ հորթերուն կը փընջրէր. ու ընդ լէն էկաւ։ Դաւիթն ասեց.

— Օ՛ մարդ. դու ընձի կը փընջրէ՞ս. դու կայնի որ ես իդամ կօպալ մի զարկեմ որ դու սասանես —։

Ըդի ասեց Դաւիթին.

— Գլխուդ արեւուդ մեռնիմ. ես լէ քո պապու գեղի հորթրածն եմ. ու իդա՝ ուրիկայ հորթերն են —։

Դաւիթն ասեց.

— Էլ ֆա՝, ես հորթերու վրէն չըմ գինայ. գիմ հորթեր լէ դու պահէ. յերոր երթլու վրէն կ՚եղնի. տուր իմ առէջ, տանիմ —։

Ու ըդ օր առեց զհորթեր վրէն հետ ու էկաւ 'ի գեղ։ Խնդացաւ քեռի Թորոս ու ասեց.

— Ըդի, հըմկայ Ֆասալը գեղ. ամէն օր վրէն հետ արի գնա —։

Դաւիթն ասեց.

— Թեև, իմ հընար չէր էդ. ընձի աղբէր մի բռներ եմ. ըմն օր տի պահէ գիմ հորթեր. ըսդ իր աղէկ տը տիրասըտեմ — ։

Օրերուց մէկ ուր ընկեր անդ ըցաւ. Դաւիթ շատ վիրաւորաւ։ Էդ տղէն լէ, մ'ասի, ըդոնց դեղ ցասման ժամ է, պատարագ է, տղէն էդ ասով անդցեր է. էկաւ։ Դաւիթ ըդրան ասեց.

— Ըսօր դու իմ ձեռնէն լ'մալ պտի ազատուիս — ։

Տղէն ասեց.

— Դաւիթ, գլխուդ արեւուդ մեռնիմ. ես քո ահուն հեղմ' լէ չկայնայ, ու դրն ցասման ճաշէց գդալմ' լէ չկերայ, քշեցի գհորթերն ու էկայ. ընուր ասով քիշմ' անդցեր եմ — ։

Դաւիթն ասեց.

— Դու նատի հոգայ, ես երթամ քե ճաշ առնեմ իդամ — ։

Դրեց գկօպալ վըր թեւին ու դնաց. պարկեց ինկաւ 'ի ուրմիկ, տեսաւ որ գհէրիսէք դըմէն հանած են դրած 'ի կալ. երէցներ էկած են կ'օրհնեն։ Գնաց գկօպաչնի էձգեց 'ի շորս կանթէն պղինձ մի՝ հրմալ լէցուկ, ու դրեց վըր թեւին։ Ցարմցան ըդ երէցներ ա ըդ մարդեր

որ հոդ էն։ Մարդու մէկ կանչեց թէ՝

— Ըղի Թէբ զպղինձ տարա՛ւ հէ՛։

Երէց կանչեց։

— Քո Աստծու սէ՛ր, ձէն մ՚էնե։ ըղի Սասնու ծուերուցն է։ կը դառնայ զմըզի ջարդ ու բուրդ կ՚ենէ։ զուր զլուխն ուտի, թըղ տանի —։

Դաւիթ լէ առեց զպղինձ լքցուկ ճաչով, էկաւ մօտ ուր ընկեր։ Նստեր է ընկեր ու կ՚իլա՛յ։

— Հէ, հէ, ասեց։ գինամ ղու յօրի՞ կ՚իլաս, զճաչ բերեր եմ, զաղ ու զեզ շըմ բերերի։ էն ապով կ՚իլաս։ Կե հըմկայ զճաչ։ իրկուն գնա զեզ ու զաղ կե վրէն —։

Ասեց տղէն։

— Դաւիթ, գլխուդ արեւուդ մեռնիմ։ Զեզ ու զաղն ես ի՞նչ էնեմ։ Դեռ էլան քառասուն հարամի (խարամանի) ղեւ, զարկեցին զմըր հորթեր տարան, ու դացին —։

Դաւիթն ասեց։

— Դու հոդա կեցի։ իդա տեղու հորթերուն իշէ։ ես կ՚երթամ զմըկըլոսնք կը գարձնում —։

Ու ընկաւ հորթերու ետեւն ու գնաց, առեց զրոէջք, գնայ էրի մի դուռ, ու

կայնաւ։ Դաւիթ հոդի մէկ ձէնով բո-
ռաց. սարսալի թաւիւաւ վրը ըդ դեւե-
բուն. (Իմալ որ Քրիստոսի ձէն ընկաւ
դժոխք ու սատանէք խլուգլան)։ Էդ
հրամիններու մեծ յեբոր լսեց, ասեց.

Գիդի, ըդի Դաւիթ՝ Աբամէլիքի
տղէն է. ելէք խլմն էրեք որ չսպանէ
ղմըգի —։

Մէկ մէկ դուրս էլան, ու Դաւիթ
մէկ մէկ կօպալ պարկեց, ու քառասունի
գլուխ լէ դնաց, ու ջանդակ մնաց. ըդ-
քառասունի ականջլէ կտրեց ու տարաւ
էրի մօտ քարու մի տակ պահեց։ Դա-
ւիթ զկօպալ ողմըցուց 'ի դուռ, ու մնաւ
էրի մէջ, տեսաւ որ գօլօն միոսկի է, մէկ՝
արծաթ. աշխարքի մալ ու գալվոն. քանի
որ ուր պապ մեռեր է, ըդունք աւերու-
թեն էրած են, ու լցած էդ էր։ Դուռ
մի բացեց, որ ձիու քուռակ մի կապուկ
էր յինք։ Ինք ու յինք դռ-շռ-ռիչ եղաւ,
ու ասեց. — Քեռի, իդա մալ ըմէն քը-
գի, ու իդա ջանավոր ընձի. կ'իտաս՝ տուր,
չըս իտաս՝ գքըգի լէ կը հասում իդունց—։

Հեղմ' լէ ինք ուր գլխուն կ'տաէ.

— Լաս, մալ լէ քըգի, ջանավոր լէ ըը-
գի. ես ինչ կ'էնեմ —։ Դարձաւ ի-
չեց որ քառասուն կանթէն պղինձ մի

գրուկ էր ոչխարի վրէն, քառասուն հորթիկ լէ մէջ։ Զկօսալ կը մտու կանթներ ու կը վերցու. ջուր կը դարտէ ու հորթերու ոտքեր լէ կը լլայ մէջ. կը չալէ ու կ'երթայ։ Ան ու էկաւ մօտ ուր ընկեր. առեց զընկեր ու զմնացած հորթեր ու դարձաւ էկաւ Ի՛ռըմիկ. կանչեց զհորթերու տէրվտանք ու բերեց, ասեց.

—Թէ որ իմ աղբօր ճանկ մի հոֆ կըտրէք, վա՛յ վաւլէր ձըր ջանէն։ Զրդա պղինձ լէ ծախէք. թող եղնի ձըր հորթերու տեղ—։

Ինք լէ ջակեց զուր հորթեր, ու կէսօրին էկաւ տուն քեռի Թորոսին ասեց.

—Քէլէ, սա քսանըմ ջորի, ու երթանք ճալ բերենք, որ դու լէ ուտես ու քո եօթը պորտ լէ. յար յե՛ր ես տ'եղնիմ հորթրած։

Ու սուան գէորէք ու գացին։ Գացին մօտեցան էրին. քեռի Թորոս տեսաւ որ դեւեր բիծած են էրի դուռ, ուռա՛ծ են. եղած ամէկ քընց Գող ըլուր։ Քեռի Թորոս վախենալուն պըրծուց զուր ջորին մըկէլ ջորեցներուց, ու փախաւ։

Դաւիթն ասեց.

—Ցնաւե՛ր, ես ըդունց ոաղերուց չըմ փախի, դու ըդունց մեռլներուց հօրի՞

կը փախիս։ ասեց, թէ չըս աւաղայ, դարձի քո եռեւ, պայի տակ իշէ, գըմբ-նու ակընջները լըլեր եմ հոդի —։

Գեռի Թորոս տեսաւ, ու դարձաւ առ գՀորեստան ու մոռաւ յէր, ինչ կէր չկէր ժողվեցին, գրեուները բռնեցին։

Ասեց։

— Գեռի Թորոս, իդա մալ ըմէն քըզի, ու իդա Ջանավար ընձի։ Կ'իտան՝ տուր։ Չըս իտա՝ գքըզի լէ կը հասուտ իդունց —։

Ասեց։

— Լաւ, մալ լէ քըզի, ու Ջանավար լէ քըզի։ Եա ի՛նչ կ'էնիմ —։ Թոխրէր ասեց քեռու բերնէց, ու էլաւ հեծաւ գքուռակ, իտա կ'իտայ, մէկ կ'երթայ գինու, մէկ կ'երթայ գիտայ։ (Քուռակ չէ։ Գէնէ ֆան Ֆարէֆ ըմալ քուռակի գօրութեան)։

Հըմլա մալով Ֆամալով էկան 'ի Սասուն։ Դաւիթ գտաւ աղէկ բաղէ մի, ու ընկաւ արտեր ղէնէր կ'էնէր։ Էլ հորթեր թորկեց։

Օրերուց մէկ եկաւ ագքըսի մ' արտի հանդըստաւ, որ եօթ Ղէֆ։ Ֆուլֆուն ունի, ու եօթ կորի կորեկ, գՀորան աւրեց։ Մնաց երեք։ Մէկ էկաւ Ջուաֆ բերեց ագքատ հալուորուն, ասեց։

— Քու տուն աւրի։ Էլի գնա արտուդ

երեւան. դիշեր կ'իգայ զէն երէք կորին լէ կ'աւրէ — ։

Հալէորն էր, առաւաւուն ըն գլխուց շուր աղօթք կ'ենէ. ու կ'ելնայ կ'իշէ զարան աւրեր է։ Մէկէլ կը տեսնայ որ Դաւիթ՝ բազէն 'ի ձեռք, հեծուկ զքուռակն, էկան։ Հալէորն ըդ տեղ անիծեց Դաւիթին, ու ասեց.

— Դու Աստծուց ըսկի չը՞ս վախնայ. դու վըր իմ կորեկի՞ն ես կտրիճ. եօթ նըֆ՝ ունիմ, եօթ կորի կորեկ. շորան աւերեր ես, մանցեր է երեք։ Կտրիճ ես, դնա զքո պասպու մոլէն առ, որ Ծծմակայ գլխէն կ'երթայ հար 'ի Սեղանսարու դռտին՝ ըվնէր է Մսրամէլիք, ու կ'ուտէ. դնա զէն առ։ Վըր ընձի՞ ես կտրիճ — ։

Ասեց.

— Հալէոր, մ'անիծի ընձիկ. առ բուռ մի ոսկի. զքո ֆէրէն էրէ — ։ Ու զարկեց զբազէն։

Խոչայ Դաւիթն էր, ասեց.

— Քեռի Թորոս, էլի զիմ պասպու կոռէն ու փէմալ տուր ընձի, որ կ'երթամ կռիւ. զիմ պասպու մոլէ խելի կ'ուտեն, զուք ընձի չը՞ք ասե — ։

Էլաւ քեռի Թորոս դնաց մօտ Ցռանվէզին, ուզեց զուր պասպու կոռէն ու փէմալ։

Յուանվէգին չտուաց։ Հեղ՛ լէ դարձուց, ու ասեց.

— Կ՚իտաս՝ տուր, չըս իտաս՝ կ՚իգամ կը մարմնեմ, գլուխդ կ՚երթայ, Ջանդոնդ կը մնայ —։

Յուանվէգին վախուն տուաց ուր պապու կորդ ու էմալ, ու քեռի Թորոս բերեց տուաց Դաւիթին։

Ը. գիշեր Դաւիթ քնաւ, տեսաւ երած. առաւ քառասուն երինջ ու դնաց մըր սըբ բանձրիկ Մարաթուկայ. մատղեց գերընջներն ու լողցաւ մըջ արուներին. չատ լաց ու աղաչաց Աստծու երեսն ու վե. ինչաւ Աստծուց ուրան սուրբ նշան մի ու սանդր մի. (ու հմկայ լէ ըն սուրբ նշան՝ հանդէ 'ի գաւառ՝ Զօրկայ տուն.) համբուրեց զսուրբ նշան, դրեց աջ ծոցքի ներսի. ու սանդր լէ դրեց ձախ ծոցք։

Ե.

Ը. Մարամելիք լսեց որ Աբամելիքի տղէն հասեր է, ու էլ կ՚իգայ ուր վրէն կոխ, ուրան ներսիցլէ Խալիշէն էլաւ տուաւ զուր ապզար, էկաւ որ տի գէր 'ի Մարաթուկ, Դաւիթի վրէն. տեսաւ որ կընկտիք կայնած են ճամբու վրէն, ասեց ըղունց.

— Զըկի պար ասէք, խաղցէք, չուր՝ի ես իդամ— : Ասեցին .

— Մենք գի՛նչ ասենք ու խաղանք . չէ՛ չը՛նք գինայ թէ գի՛նչ ասենք — :

Խուլբաշէն ուրանց ասեց .

«Կարճ կընկտիք էրկանք աղան ,
«Երկէն կընկտիք գուզուեր բասնան .
«Մեր Խուլբաշէն գացեր Սասուն՝ի բան ,
«Մուշալ եղներ բերէ լըծան .
«Զկարմիր կովեր բերէ կըթան ,
«Դարուն ջուլ կը չինենք եղ՝ ու չորթան» :

Մէկմէ կ՝ինչէ որ կնկանք ուրանց գըդի կ՝ասեն ու կը խաղան : Ըդոնք լէ կ՝ասենն զասգար կ՝ինգան ու կը լցուին Մարաթուկայ բակ :

Ըդ Մարաթուկայ երիցու աղջիկան լէ աչք կայ Դաւիթի հետ . երիցու աղջիկ էկաւ խաբար բերեց Դաւիթին , ու ասեց .

— Դաւիթ , խաբրձան գլխուդ ու տրեւուդ . էլի տես ինչ խաբար ասգար է եկեր բանի մէջ , անթի ասգար են — : Երիցու աղջիկն ասեց , գնաց ետեւանց , ու դռան գրկափակ քաշեց :

Դաւիթ թըռաւ էլաւ , ու ասեց՝ «Էյ հաց գինի , տէր կենդանի» . ու բռնեց զասգրի մարդ երու հըմն զդլխներ , մարմ-

նեց, ջանդոկ դնաց պատնից դուրս, ու գլուխ մնաց բակի մէջ։ Բռնեց գնդէ-ջէ-լէ, քաշեց զակուէք ու շարեց 'ի ճակատ. ու ղմշրաշ լէ էրեց քընց չան խառուան, կախեց վզէց, ու ասեց.

— Դէ՛ դնա ջոջէ տուր Մորամէլիքին. ուրան մարդ կայ՝ թըղ դոմէ, չուրի ես իզամ— ։

Խզլէ-ջէն հեղմ՝ լէ էկաւ մէջ ըդ կընկ-ատոնց. հեղմ՝ լէ կ'ասէն ու կը խաղէն։ Ինկան մէկն ասեց.

— «Խզլէ-ջէ ջոն, Խզլէ-ջէ.
«Իդա դիկն գացիր քընց գէլ դապան,
«Ընդիկն էկար քընց չուն վապան.
«Մաշրաշ է վիզդ քընց չան խառուան,
«Բերանդ է լաց քընց պատուհան.
«Բերնէդ կ'երթայ քընց ղբկի ոլկի թան,
«Ճանճեր վըրկն կտպած գ արուան» — ։

Խզլէ-ջէն ասեց.

— «Տօ չընացած, դէլ անզգամ,
«Ես գիցայ թէ Սասուն դաշտ ու դուրան էր.
«Ըզ գիցայ թէ քար ու քար ու կապան էր.
«Ընն ճրժեր որ նոր են էլած դիւանուկան էն։
«Ուրանց նեռ կայ քընց ճիթ խըցի գերան,

«Որ կը զարկէն, բերան կը բացուէր քընց պատուհան.

«Ընն մանկտիք որ հետս էր, ժողվան լցուան 'ի խարտոնան։

«Գաղրուն որ ջուրն էլաւ, կը ժողվէ բերէ ճոճ ու բլոր արմաղան,

«Ընն ժամանակ ձլզի ջուլ չինէք եղ ու չորթան» —։

Իրա անգամ Դաւիթ էլաւ ելաւ դնաց Մսրամէմքի վրէն. էկաւ որ՝ ահագին ասդար ժողվեր են, ու նստեր Սղանաբերու գօտին։ Դաւիթ ասեց.

— Ուխտ եղնի, չուրի ես կանանչ կարմիր ջորջ տակ եօթն օր բերընձ փլչուռեմ, կռիւ չէնեմ —։

Էս անգամ ըդ տեղէն Դաւիթ զարկեց դնաց արեւպտոց դիկն ֆընչ էկաւ, էկաւ ու ջորջ դէմ կայնաւ։ Ցերոր ըդ ասդար տեսաւ ղըդ ձիաւոր, զանդայ բռնեց ու վախեցաւ։ Մէլիք հարցուց.

— Դու ինչ մարդ ես —։

Ասեց Դաւիթ.

— Ես արեւպտոց թագաւորի տղէն եմ. էկեր եմ ձլզի յօդ —։

Մէլիք ջորջ զարկեց. եօթն օր հընտիրաց հաց կերան. վեր ութնին էլաւ զուր

ձին հեծաւ, երկու ոչխարն դնաց էկաւ, ասեց։

— Լաւ՝, որ ես էկեր եմ քո վրէն կըռիւ։ յար յե՞ր դու ուտես զիմ պապու հաց — ։

Կռիւ կցեցին։ Դաւիթ կանչեց «հանցն ու գինին, տէր կենդանին»։

Աղա՝, քեռի Թորոս լսեր է զըդունց կռիւ, քաշեր է մէկ բարդի ծառ, դրեր է վըր բիջին, ու էկաւ։ Ինք կայներ է ձուրու գլխուն, ու ըդունք ձուրու մէջ կռիւ կ՝էնեն։ Որն որ կը փախնի վեր կ՝ելնէ։ Դաւիթ կը բօռայ, — քեռի Թորոս, դու ձորէ, ես ձորթ-իեմ — ։

Ասգար կայնան ու պոռա էրեցին իմ՝ «Լաղը՞ է որ մինակ դուք երկուս կ՝ըռուէք, որն որ զօր կ՝եղնի, թող կըռիւ էնոր եղնի»։

Ին կ՝ասէ՝ դու նատի ես զարկեմ։ էն կ՝ասէ՝ դու։ Շոռոռ կապեցին որ պատիկ ապրէր Դաւիթ նատի։

Դաւիթ քաշեց գեաղեան 'ի գլուխ։ բռնեց զսուրը Նշան խալիքնի տակ, ու նատաւ։ Մարամէլիք երեք անգամ ճամբայ մեկնաւ, ու իշտապով էկաւ կուրդ մի զարկեց ու ասեց։ — «Հող ես, հող դառնաս» — ։

Դաւիթն ասեց.

— «Հաւատամ խոստովանիմ բանձրիկ Մարթուկ սուրբ Նշան, ես հրամալ եմ՝ քրնոյ կանանչ կարմիր ջուրն տակ բրընձ էնլա՝ կ'ուտեմ» —։

Իրեք անգամ ըդ աւա գնաց էկաւ զարկեց ու ասեց. — «Հոդ ես, հոդ դառնաս» —։

Դաւիթ լէ իրեք անգամ՝ — «Հաւատամ խոստովանիմ» ասեց։

Իդա անգամ դօր էկաւ նստելուն Մարամէլիքին։ Մարամէլիք հընդուաւ, կայնաւ, չըր նստի։ Ասդար մեղրեցին գինք։ Էկաւ առաւ գնալիսն վըր գլխուն ու նստաւ։ Իդա անգամ Մարամէլիքի մամ մեղրեց ու ասեց.

— Դաւիթ, ջուրն գլխուդ արեւուդ. չէ՞ էդ լէ քո տղուէրն է. մի՛ զարկի, խեղճ է —։

Ասեց Դաւիթ.

— Հէ՛յ անդգամ, չուրի հրամայ որ էդ կը զարկէր, հորի՞ չըր ասի՝ քու տղուէրն է։ Բաք, ըդ աւա թըղ եղնի։ Մէկ դըրբ՝ թըղ եղնի Աստծու խոնար. մէկ է՝ քու խոնար. ըսա գիտ եսի դըրբ կը զարկեմ, ես կը մեռնի, ես կը մնայ —։

Գնաց էկաւ կուրդ մի զարկեց. եօթ

գաղ 'ի գեռին տարաւ զՄարամէմիք։ Ու գնաց ջուրնց զՄըսրը, ու նստաւ թագաւորի ներքո։

Ըդի հոդ մնաց։

Զ.

Գաղզուանու Ամիրին տղջիկ մի կայ, անուն Խանդուդ խանում. ըդի լսեց Դաւիթի զօրեղութեն. հոխ տուեց աշողի մ' ու ասեց.

— Գնա դիմ գուշասանք էրա Դաւիթին. ինչէմ իդայ հոդա, գիրար առնենք —։

Աշողն էր էլաւ գնաց 'ի Սասուն, գինէր խըմ Դաւիթն 'ի Սասուն էր։ Էկաւ ու էլաւ Յուանվէդու բերդ, գինէր թը Դաւիթն է ընտեղ նստուկ։ Ներտաւ դոմ էրեց Յուանվէդուն։ Յուանվէդին ասեց.

— Գիդի՛, ելէք գըդի ծեծէք էրէք դուրս. էդի էկեր է գիմ աղբէր խարէ տանի —։

Ծեծեցին ու տարան ձոր մի գըդ աշողվըր ճամբուն թալեցին։ Իրիկուան հոտըղներ զուրանց եղներ հեծած են կ'իդան դեղ. մէկի եղ խրտաւ, հոտաղ պատաւ վրաւէն. ոլըրդան դատան դաշող։

Աշող լաց ու աղաչաց ըդ հոտըղնե-

բուց · ու հարցուց · — Ըդ ո՞րն է նստուկ մէջ էդա բերդին — ։

Հօտբղներ ասեցին թէ՝ — Ըդի Ցուանվէդին է · Դաւիթ հանդ է Մըսր — ։

Էլաւ աշող ոսկի մի տուեց հօտբղներուն · հօտբղներ գոմեցին զուր ջոմբոռի կտորտանք տուեցին ուրան , ճամբէն ցըցուցին · ու աշող դէմ էրեց 'ի Մըսր · գնաց պէտանըմ հիմանն էրեց Դաւիթին · Դաւիթ շատ քէղէշ — բաշխիշ — տուեց ըդ աշողին · ու ասեց ·

— Դու գնա , ես կ'իդամ — ։

Աշողն էկաւ խանդուդ խանըմին ասեց։

Դաւիթ լէ Մըսրայ էլաւ շիտակ էկաւ 'ի Սասուն։ Սասնու էկաւ հասաւ 'ի Ծըծմակայ քիթ , տեսաւ որ գուբեան մի վըր ճամբուն էր , արձկեց պտաւար , էրեց դէն · ըբռնեց պղընջիլ , հեծաւ ձիին , իտա դիէն կը քաշէր գգուբեան կը հանէր Սարու գլո՛խ , ու ընդիէն քաշէր բերէր ցած , ու ըդ հըմալ Սեւ սարու գլուխնը վե գլխվրաւ էկաւ վըր Մառնիկ գեղի հնին։ Էկաւ տեսաւ որ գըմէշ մի պրծեր է էկե ճամբու վրէն ու թըրքեր է ։ Ըդուր թրիք կը տեանայ , կ'ասէ ·

— Ընձի թ'որ պաուլմ՝ եղնի՝ ըդուր թրքողիցն է · չեղնի՝ ըդուր թրքողիցն է —։

Տեսաւ գրմէշ մի տրմի մէջէն էլաւ։ Դաւիթ՝ որ հրմիայ բան ըսկի չըր տեսնե, քաշեց գիուրգն ու կայնաւ որ գրմիուն զարիւէր։ Մէկ հօտաղ ընդիւէն էկաւ. ու գրմիուն կը էջիրէր։ Դաւիթ գիցաւ խրմ ուրան կը էջիրէ, ասեց.

— Լաւ, ես քեզ ինչ եմ էրե, որ ընձի կը էջիրես — ։

Հօտաղն ասեց.

— Հրդ քրզի ոՐն է, ապրէր. դու Սասնու ծՈՒռն ես. դու պոռնիա չրս տեսեր ես. ես իմ գրմիուն կ՝ասեմ — ։

Ասեց.

— Լաւ, հօրի՛ կը ուրգես, ամՈՒթ բան է. ես հրմիայ բան չրմ տեսնե. ընդուր ինէ չատ կաՐ ձրր երկիր — ։

Հօտաղն ասեց. — Ամի քրզի նշանց տամ — ։

Գացին Ամրուտայ դաշտ, որ ընտնգ դութան մի գոմրշներով լծեր են ու կը քշեն։ Էկաւ տեսաւ որ գոմրշտան շուքուց գուրանց լեզուն թալեր են դուրս ու դութան կը քաշեն. Դաւթի խեղճ էկաւ ըդունց վրէն. արձկեց գգոմշտանք ու տարաւ գՐՒ. ու մանճկալն առ անիծեց ըդուր։

Ասեց Դաւիթ՝

— Մանկալ, մ՝անիծե դիս. զըդ դուռթանի ղըՆԷլ տուր իմ ձեռք — ։ Բռնեց ղՆԷլ ու քաշեց. մանկալ կայնաւ վրէն՝ ինն փաթ ղըվըրցուց դդուռթան ։

Հօտաղն ասեց Դաւիթին.

— Ըղի քո հընար չէ, իչի ձիու վրաւէն, քաշէ տեսնենք, քո հընա՞ր է թէ չէ քո ձիուն — ։

Ինչաւ, տասն փաթ լէ առանց ձիու քաշեց ։

Ըս անդամ մանկալն ասեց.

— Դաւիթ, ղ-ըՆ՞ քըվի. կէս օր է, նստի հաց կե ու նոր գնա — ։

Դաւիթն ասեց.

— Ըէ, ես կ՝էրթամ. թըղ հաց ձըր ճժեր ուտեն. ես ուտեմ՝ ուրանց բան չմնայ — ։ Անէր նստաւ ։

Ու յերբոր հաց դրեցին, ինչ ղԸԷԸ հաց կէր ժողվեց ու մէկ հաղ սրբեց ղքասէք ու դրեց բերան ։

Հօղաղն ասեց.

— Ընամ՝ն, ելէք վասէք, էղի մարդ կ՝ուտէ հպա — ։

Դաւիթն ասեց.

— Լաօ, հըլէ՞ դուռթան քաշող հաց կ՝ուտէ. ի՞նչ կ՝էնէ — ։

Ու էլաւ ըդ տեղէն խըռ էրեց խանդուդ խանըն ու գնաց ։

Է·

Գնաց խանդուդ խոնջմ ի խոնջ դուռ· (ընտեղն է որ ըմէն ուզընկներ կ'իդան կ'իջնեն)· էդ լէ գնաց որ մարդու մէկ ընֆուշ մի ձեռք՝ կայներ է դուռ։ Դաւիթ հարցուց ըդուր·

— Ցօ՛ռըդա՛, քո անուն ի՞նչ սոսի եղնի—։

Ասեց·

— Իմ անուն Գօրգիզ է։

Դաւիթն ասեց·

— Գօրգիզ, ես Դաւիթն եմ· յերոր ես խանդուդ խոնջն առայ, պքըզի կ'էնեմ ընձի քաւոր—։

Իդա անդամ ասեց·

— Քաւո՛ր Գօրգիզ, ո՞ր կայ ներս—։

Ասեց·

— Շըրըդան խորասական, Հըմլայ Լ•ուայ փոհլեվանները ուզընկներն են էկե—։

Ասեց·

— Ցիմ ձին քաշէ կասէ դու—։ Քաշեց կապեց։

Հարցուց·

— Իդա ի՞նչ ընֆուշ է դրած են քո ձեռք· ասեց, հըմ իշեմ—։ Ու ձեռքէն առեց դընֆուշ ու թաղեց· ու դը հըլայ կ'երթայ· · ·։

Ու ասեց.

— Քաւոր Գօրգիզ, ներս էրթանք, էնենք կեր ու խում— :

Դաւիթ նստաւ, թաշկուկ ու անօթի է. մէկ մէկ կթխայ գինի կը վերուն ըն մարդեր ու կ'իտան Դաւիթին. Դաւիթ լէ չկռնայ համբերէ, հըմա կը վերու գգինու տաշտն ու զըմէն լէ կը խմէ. ու կասէ. — Դէ ասէք Անուշ եղաւ — :

Գինին զԴաւիթ վերուց, ու զԴաւիթ տարաւ : Յետոր Դաւիթ հըմլա կ'եղնի, ու գինուց գլուխ կը ցածցու գետնի վըրէն, ըն մարդեր գուրանց թրեր կը քաշեն որ գարկեն. ու յետոր գլուխ մի կը վերու, գմըրեր կը դնեն ուրանց գրգի տակ :

Հեղմ' լէ որ հըմալ եղաւ, քաւոր Գօրգիզ կանչեց.

— Սանհէր Դաւիթ, հոգի ճնաստուն է, վրաստուն չէ — :

Դաւիթ յետոր լսեց, ասեց. — Գիրգի զղուռ բռնէ — :

Հմա ըզ մարդեր էլան ու փախան, ամէկ ջլոթ մի գարկեցին Գօրգիզին ու փախան :

Ու Դաւիթ նոր կանչեց զԳօրգիզ. հարցուց զՅանդուդ խանըմ թէ՝ — Ցո՞ւր տեսնանք — :

Գ•ՐԳԻՆ ասեց ·

— Խաա Բաղչէն ։ Ըսօր ուրբաթ է , քսան Ջաթէա ուր առջեւն է · ու քսան լէ՝ եաեւն է · ըսօր կ՝երթանք տեսնանք— ։

Գացին ոգման Բաղչէ պատին ու կայնան Դաւիթն ու Գ•ՐԳԻՆ ։ Ջաթէ+ մէկ մէկ ընցան · էկաւ Խանդուդ խանըմ ։ Ձեռք թալեց Դաւիթ Խանդուդ խանըմի վիզ՝ ու երեք պաղ առեց խանըմէց ։ Խանըմ չմօսաց ։ Հեղ մ՝ լէ , ու Խանդուդ բռնեց զԴաւիթի վոզպաս , զարկեց 'ի պատ , արուն թալեց քթէն ։ Հէրատաւ Դաւիթ ։

Ու ըդ տեղէն դարձաւ խոսաց ուր սուրբ Ղաանին , ու ձիուն , որ հեծնի ։ Ու ասեց ·

— Քաւոր Գ•ՐԳԻՆ , քաշէ գիմ ձին , որ աւրեմ գիդա քաղաք — ։

Գ•ՐԳԻՆ աղաչանք էրեց թէ , — Կը խնդրեմ քենէ , իդա վախ թըզ մնաց , մութն է , լուսուն · լուսուն էլի , աւրէ ու գնա — ։

Դաւիթ լէ իր հէրսից պատկեր է վեր մնահնքին · էլ քուն լէ չտանի , թէ՝ յե՞ր կ՝եղնի որ լուսնայ , ես եղնեմ աւրեմ գիդա քաղաք ու երթամ ։

Խանդուդ խանըմ լէ Բաղչէ մէջ ուէյրան

կ'էնէ։ Ռոֆոլ Ջոռէն էկաւ ասեց։

— Սեւ «էյրան էկէ քո վրէն։ Դաւիթ հանդէ ըմկայ գքո պապու քաղաք կ'աւրէ ու կ'երթայ — ։

Կապեցին գուրանց Բոզէն ու գարձան։ ու չիտակ էկան խանի դուռ գարկեցին, որ բանան։

Դաւիթն ասեց։

— Ուհա, ուհա, ըդ ի՞նչ ոչ՞ըշ են իդա քաղքցիք։ «ընչ չըն էնե յար առըտուն, կ'ասեն ըմկայ էլի աւրէ ու գընայ — ։

Գորգիսն էլաւ տեսաւ, գարձաւ Դաւիթին ասեց։

— Ըդունք քոչ են, կոռչով չեն — ։ Դուռ բացեցին։

Խանդուդն էկաւ մօտ Դաւիթ։ Խանդուդն ասեց։

— Դաւիթ, դու պատգ մի առար քո ճամբու խոնըր համար։ Մէկ լէ առար քո խոնրի համար։ Մէկ լէ առար Աստծու խոնրու համար։ Ջէւեզի պատգն հօրի՞ առար։ Դու քո պապու կտրիճն էս, ես եմ պապուն։ Աստծ են, Զուգիլին ա՛ն եղդինուց, որ տըղն եղնի քեռխատան։ Խալ, Շըրըգան խորասական, Լօրայ Հըմզայ փանէքներու գլուխն ես բերե ընձի,

որ էլելի պաղ կ՝առնես իմ մտքէն — ։

Իշտ անդամ Դաւիթ կակղցաւ, ու ասեց.

— Զանգի հմալ է, լուսուն ես կ՝երթամ ընտոնց գլուխ կը բերեմ քըզի — . ու ասեց. — Ես հանդէ կ՝երթամ. եղաւ որ ընդոնք եմ վրէն գօս եղան, թէ գիս պանեցին, թը դու դը Աստուած կը սիրես, արի գիտ Ջանդոկ ճանչցի. վըր իմ աչ թեւին մէջ խաչ մի կայ, ճանչցի, վերու, ըն, արի, պահէ — ։

Դաւիթն էր, էլաւ ընկաւ ճամբէն. էհ-լիքաներ տեսան որ ձիաւոր մի ընդ խուց կ՝իգայ. ձիու ոտ երկինք կ՝ելնի։ Ասեցին.

— Ըդ ձիաւոր կռուի համար կ՝իգայ. չգինանք ըդի Սրդոյի (սուրբ Սարգսի) Ջորդերտուցնէ — ։ Կանչեցին հարցուցին.

— Ա՛յ մարդ, դու ինչ մարդ ես, յուստայ կ՝իգաս։ Զընք դինայ դու դնանդուդ խոնշմ կը ճանչնա՞ս. դը՝ դ՝ մատնիկ չը՛ս կառնայ հատու ուրան — ։

Դաւիթն ասեց.

— Ադիկ կը ճանչնամ, ընա ես էկեր եմ որ ձըր գլուխ տանիմ խանդուդին. ես չըմ էկի մատնիկ տանելու — ։

Ըդ Շերբդան խորասանի վերին ունք (յոնք) էնքան էր կախուի, որ էկեր էր

հասե վրը սրտին, ու անգալով կապերը էր ու զարկե եռեւանց վրը պառեկին։

Ըն մըկէլ Լ.օռայ Հըմզայ փահլիվանի ներքեւի մեռութ զգեռին կ'ապէր ու կ'երթէր։

Աւան իրար Դաւիթն ու էդ երկու փահլիվան՝ կոռշ ու էնմալով, օր մի յար իրիկուն։ Դաւիթ կանչեց. — «Եսմ հաւատամ խոստումանիմ բանձրիկ Մարաթ ուկ սուրբ Նշան, Ցիսուս որդի դու օգնական» —, ու զարկեց ղերկուսի գլուխ լե կտրեց, ու ղերկուսի բրշամ լե կապեց յիրար ու խոռոչին աւա թալեց վրը ռոբէին. ու ընդունց լեզուն կախաւած՝ զգեռին գութենի ակօսի աւա կը վարէր։ Բերեց զըդունց գլխներ, էկաւ Ճանիւ կէս, տեսաւ որ մէկ ձիաւոր մէջ երկինք մէջ գեռին խաւռ կ'իգայ ընդիմէն, կանչեց վրը Դաւթին.

— Հօ՛՛՛, գըրգի քո վոխոքին հաշըբ պահէ. Շըրբեդան խորասանան, Լ.օրա Հըմզայ փահլիվանի՞ն ես ռասթ էկե — ։ Պառեկի ռոբոքին առաւ Դաւիթից, կուրգ մի զարկեց։ Դաւիթ կնոմ դարտակեց։ Կուրգն առաւ ձիու զանդուն տարաւ գեռին։

Դաւիթ մէկ լե շիտկաւ վրը ռոմէին, ասեց. — «Եա հացն ու գինի, տէր կենդ-

դանի» — ։ Զկուրդ տարաւ որ զարկէր դլխուն, ըդի դճաւ, ծամեր թափաւ առջեւու. Դաւիթ տեսաւ ու ճանչցաւ որ Յոանդուդ խոնջն էր, ուր խըլբի փոխեր էր էկեր Դաւիթի առէջ։ Դաւիթ ասեց.

— Դէլ անդդամ, դլուխս կ'իդայ որ նոր մի զարկեմ զքըդի իտամ գեռանի տակ. ըդի էլ երկու հեղ եղաւ, որ ջէնոտաս կ'էնեմ դիս —։

Ասան դիրար ու դարձան Յոանդուդի քաղաք, ու էկան ինքան։ Իդա անդամ կանչեցին զՅոանդուդ խոնջի պատ։

Դաւիթն ասեց.

— Քու աղջիկ չը՞ս իտար ընձի —։

Գաղն ասեց. — Չըմ իտար։ Թէ կ'առնես ու իր մնաս հոդա, կ'իտամ. թէ կ'երթաս՝ չըմ իտար։ Հօրի՞, իմ դոնշան շատ են, կ'աւրեն գիմ քաղաք —։

Դաւիթ լէ ասեց. — Կ'առնեմ մնամ հոդա. չըմ տանի երթայ —։

Ընդրաս վրէն՝ բերեցին տուեցին, զուրանց պատակն էրեցին, ու եօթն օր եօթ դիշեր հարսնիք էր։

Ը.

Մէկ ժամանակ յինք ընցաւ. ինն ա-

միա, ինն օր, ինն գիշեր որ ինչ-որ, Աստուած ուրանց տղէ մի տուեց։

Դաւիթն ասեց խանդուդ խանչ-ին.

—Թէ որ ըդ տղէն ընձնէց է՝ ուր վրէն նշան մի, զօրութեն մի տ՝ էզնի — ։ Բերեցին զտըղէն խնդրեցին, ու բերեցին զգուշնի ղանչիլ պընդի տեղ փաթթեցին վըր տըղին. տըղէն էր՝ յեբոր լոց ու ճիչտակաց մէջ ճզօրին, ըդուր վրաւու փաթուկ ղանչիլ կտոր կտոր եղաւ։ Զոնղոբ գնաց Դաւիթին թէ,

— Տղէն լաւ տըղայ է. պղանչիլ կտրտուեց. ըմա ուր մէկ ձեռք պաղոր է, խըփուկ է, ու մարդ չկանայ բանայ ըսր ձեռք — ։

Լիկաւ Դաւիթ նստաւ, ու զմանուկի ձեռք մատեց ու բացեց. տեսաւ որ ղոնչանչ մի արուն ուր ձեռվու մէջն էր. ասեց.

— Հայ, հայ... զաշխարք արեր է կամ մի արուն, դրեր է ուր ձեռվու մէջ։ Թ՝որ ըդի մնաց, ըդուր մատէն զարմանալի բան տ՝ էզնի — ։

Բերեցին զտըղէն լէ կնքեցին, ու զանուն դրեցին՝ ՄՀԷՐ։

Մնաց ժուկ մ՝ ու ժամանակ մի, տըղէն մեծցաւ. Դաւիթ էլաւ զտըղէն թողեց

Ի Գաղղուան մօտ ուր մեծ պապ ու ճոշիկ։ ու առաւ գնանդուդ խանըմն ու խըսոր էրեց 'ի Սասուն։ Խլաթցիք լէ աղդար ժողվեցին ու պատան կապեցին ուր դէմ, ու սէլերով մոտաբէս չինեցին, կռիւ կցեցին։ Խանդուդ խանըմ գմբեղբեղի սուրուզը կը զարկէր՝ գպատան կը քակէր, ու զսէլեր կը թալէր երկու սհաթուան ճամբայ։ Դաւիթ լէ կը ջարդէր զաղդար ու կ'երթէր։ Դարձաւ Դաւիթն ասեց.

—Խլաթցի՛ք, դուք ի՛նչ բէնամոս մարդ էք որ ուրշի դէմ կռիւ կ'էնէք. թողէք գիմ ուրշ ատնիմ Սասուն, ու հըպամ՝ լէ իգամ կռուինք — ։ Ու ըդունք չհաւատցան։ — Ուր հմալ է, ասեցին, դէ երդըվցի քո ծոցի սուրբ Նշան, որ աւատանք — ։

Դաւիթ լէ ձեռք գարկեց վըր սանդրին՝ որ ուր խելքով գսանդը տ'երդուէր, ձեռք առ սուրբ Նշանին։ Ու սուրբ Նըշանի հունար լէ էն էր՝ որ գինք սիտի չերդուընէր։

Ու Դաւիթ առաւ գնանդուդ ու տարաւ 'ի Սասնու բերդ։

Ձեռք մտուց 'ի ծոցք, տեսաւ որ սուրբ Նշան էր ընկի ըն Խաչֆի ծոցք, ու ինք գէն էր երդուըցե։ Ասեց.

— Է՛լ իմ բան քանալ է, երթամ լէ

Բ։Ը, չերթամ լէ։ Ը՛նա ախբէ տ՛երթամ —։

Զարկեց էկաւ 'ի կռիւ, ու խշլաթցիք դըզի նեղ լծեցին։ Զին լօրխաւ 'ի Զբէրբայ շամբ, մէջ տըլին. Վոր հասել ըդ տըլի միջէն խըլաւ էկաւ Յ.օխսրայ ջրի վրէն։

Ը՛ն վախտին որ Աբամելիք աղա էր, Աբամելիք էկեր էր Իշրահիմ աղի տուն, ու գօրով դացեր էր էդ աղի կնկայ մօտ, ու էդ կնկայ անուն լէ՝ Շամշըմ խանըմ էր. ու ըդուր մօտէն եղեր էր աղջիկ մի, որ էն լէ ըդունց ազգէն էր. էդ լէ շատ հունարով էր։ Հա՛ ըդ աղջիկն էր տուեր մէկ նետ ու աղեղ, էկեր էր ըդ տեղու փըլերու մէջ թափըլտուեր էր։ Դաւիթ ըդ Յ.օխսրայ ջրի մէջ կը լողդնէր. ըդ աղջիկ գողտուկ նետ մի զարկեց Դաւիթի պառեկ. Դաւիթ էլաւ կայնաւ ու բօռաց. որ բօռաց՝ ձէն գնաց 'ի Սասուն. Զէնով Ովան, Խորդուսան, քեռի Թորոս, Ճնճղափոքրիկ ու Յուանվէդին ժողվին գիրար։ Զէնով Ովան լէ Սասնու բօռաց. — Դաւի՛թ, մընք էկանք —։ Ու էկան Դաւիթի հաւարին։ Դաւիթ լէ ըդ ջրի մէջ գուր աղբօր ձէն լսեց։ Ը՛դունք լէ էկան էդ ջրի խեչ, հասան Դաւիթին։ Դաւիթն ասեց.

— Զէնով Ովա՛ն, մենք որ բօռացեր

ենք, ըդի ահու հրմկայ չորցեր է. գաշէք զըդի գտէք —։

Գաշեցին գտան որ մէկ ընի աչքեր աղջիկ մի. բռնեց Դաւիթ՝ զոտք դրեց վըր մէկ ոտվուն, ու քաշեց ճըւատեց, թա՛լեց սարու տըկու գեղ. ու զըդ գեղի անուն դրեց ՃԸԻՏԻՍ ՃԱՊԿԻՍ։ Ու էդ գեղ լէ յար հմկա յանդէ Զըղ-ը-ոյ բերան, ու անուն լէ՝ Ճապկիս։

Ու ըդունք առին զԴաւիթ էլան 'ի Սասուն. չորս աւուր լըման՝ Դաւիթ մեռաւ։

Էլան ըդոր աղբրանք ընվը էրեցին, որ դըբմնի իտան Խանդուդին, ու ընդուր սաղութեն ասեցին. խանըմ լէ ասեց. — Հը՛յ հո՛ւ... Դաւիթից ետու ես տ'եղնիմ իդոնց հաՀոյ...—։

Ճնճղավոքրիկն ասեց.

— «Խանդուդ խանըմ, ԲԸ մըշ, ԲԸ մըշ,

«Դաւիթ մըբ, սուրբմնի խուշ» —.

Իդա անդամ Խանդուդն էլաւ բերդի գլխուն. ու յոնդցայ գինք թալեց. ուր գլուխն առաւ վըր քարին. ուր գլուխ ծակեց զքար. ու գլխու տեղ՝ Սասնու կէս չնիկ (չափ) կորեկ կը լեն գինք ու ծեծեն, սանդի տեղ։ Ուր եօթ ճիւղ ծամի տեղ լէ՝ հմկայ կ'երեւայ, ու մկայ լէ ըդ սանդ յանդ է բերդի առէջ։

Թ.

Գ.ման Դաւթի աղբերդանք ու էկան մէր խանդուդ խանէմին. ձեռ տուեցին խանէմի ծիծք որ կախ կէր. ՀԷ+ԼԷ որ ճիծ կէր։ Էլան ժողվեցին գիրար, ասեցին. — Բէլէմ ինչ որ եղեր է, ըն տեղն է —։ Ու դացին հասան 'ի Գաղղէվան. ու տեղու նստողին ասեցին.

— Մէր աղբօր ու հարսին ըդ տեղ ճիծ կայ. ո՞ւր է —։

Ըդոնք լէ ասեցին.

— Բան չկայ —։

Ըդ մարդիկ ասեցին թէ,

— Մէզի նշան կայ. մէր հարսի՝ ծիծ կախ կէր —։

Մէկէլոնք ասեցին «էջ» թէ,

— Աղջիկ մի ուր մսոից եղեր է, ու մեռեր է —։

Ըդոնք լէ ասեցին.

— Մէր մեռելնուն նշան կայ. մէր մէկ տարեկան՝ մէկ չէնքով է. երկու տարեկան՝ մէր երկու չէնքով է, ու հրկայ —։ Էլան դացին դերեզմաններ՝ որ ուրանց չէնքով դերեզման չկէր։ Չէնով Ովան ասեց.

— Բերէք զկաշիք փաթէք յիս, որ ես քօռամ —։

ՁՄՀեր՝ մաղալ է չինած 'ի գեանի տակ. պահապան է դրած վրը ուրան, ու գընի դրած 'ի ներս։

Ձէնով Ոլան փաթեցին կաչով՝ ու բռուաց։ Մհեր զուր ձէն հասկցաւ։ Մհեր էրեց որ պըտի ելնէր. ճոչիկն ասեց. — Ըդի ձըր ջընի ձէն չէ. ճըժերն են ու դահձներն են. ընդոնց ձէնն է —։ Մհեր երեք հաղ որ զձէն հասկցաւ, զարկեց գդաւրէն կոտրեց էլաւ դուրս։ Դարդէն զդարդէն կոտրեց. լանգէն որ զարկեց առջի դարդին, ընի առաւ մըկէլին. մըկէլ մըկէլին. զեօթ լէ ջարդեց էլաւ դուրս։

Տեսաւ որ ուր հոզբրտանք հոդ են, ուր պառղ հոդ չէ։ Հարցուց հոզբրտանց, որ Խլաթցիք զուր պառղ ոպանած են։ Լա՛ց, ու վըր քիթ ու բերնին ընկաւ գուռ։ Որ ընկաւ վըր գեանին, ըդուր հոզբրդանք թափան վրէն՝ իսալ էրեցին չկուցան չիտկեցին։

Մհերի արտասուք զգէտին էրեց հանդակ ու գնաց։ Իրեք օրն որ թըմաւ, Մհեր նոր չիտկաւ։ Հեծաւ զպառղու քուռակ, ու գնաց 'ի Խլաթ, քար ու քանդ էրեց։ Հըմլոյ կ'աւրէ՛. . . ու կ'ելնէ Նըմրութոյ գլուխ, կ'իշկէ որ ծուխ կ'ելնէր. հաղա՛ լէ կը դառնէր։ Տեսաւ

որ պառուկ մ՝ էր մանցի, գէն լէ բըռ-
նեց. զամէկ ոտք կապեց մէկ ծառ, ու
զծառեր թողեց. գէդ լէ հմալ սպանեց.
Խլաթայ ծուխ ու մուխ կարեց։

Ու ըդ տեղէն ելլ տուեց հօղբրդանց,
գացին ուրանց տեղ. ու ինք գնաց Տոս-
պան բլուր։ Ու յարի մկա լէ կ՝ասեն էն
տեղն է, ու օմեա լէ զուր ձին կը տես-
նան, ու ըդուր ձիու չեռ օմեա լէ քա-
ռուց կ՝իգայ։

Ժ.

Համբարձման գիշեր Մհերի էրի դուռ
կը բացուի, ու հրամանք չկայ որ ելնայ.
գետին գինք չվերու. ոտքեր՝ի գետին
կը ճըկի։

Օր մ՝ լէ, Նախրորդ մի, Համբարձման
գիշեր կը տեսնայ որ Մհերի դուռ կը
բացուի, Նախրորդ կը մանէ ներս. Մհեր
ըդուրից կը հարցու թէ,

— Ի՞մալ դուք զաշխար կ՝ուտէք —։

Էն լէ կ՝ասէ. — Խելքով —։

Կը վերու Մհեր ու կ՝ասէ.

— Ձըր խելքն ի՞մալ է. դէ զըդա ձիու
տոպրակ վերու զար գլուխ —։

Նախրորդ իմալ էրեց, չկուցաւ վե-
ռուց. բերեց զձին տոպրկին մօտ, բե-

բան բացեց, զձիու գլուխ մտուց յինք, ու զթել թալեց վըր ձիու վրին. ու ձին բանձրցուց զգլուխ. ու նախարարդ քաշեց տարաւ ուր տեղ կապեց. ու ասեց.

— Մըր խելք հլմլա է. մենք հլմլա կ'ուտենք զաշխատր —։

Ու նախարարդ հարցուց.

—Մնե՛ր, դու յե՞ր ա՛ելնես ըդ տեղէն—։

Էն լէ ասեց.

— Ցերեր ցորեն եղաւ քընց ալուճ, ու գարին եղաւ քընց մասուր մի. հլսպամ՚ լէ հրամանք կայ որ էլնանք իդա տեղէն—։

Իրեք խանձոր ինջաւ յերկնուց.
մէկն ասողին, մէկ լսողին,
մէկ լէ ալամ աշխատրին։

Թողլով առ այժմ որ գրքոյկիս մէջի չհասկացուած բառերը ինքնին իմաստասիրեն ընթերցողք՝ առընթեր գրուած բառերէն և բառին իմաստէն, միայն հետևեալ քանի մը բառասխալները կ'ուղղենք։

ԵՐԵՍ	ՏՈՂ			
4	2	շեղ	ԸՆԹԵՑՈՂ	ջեղ
14	5	Գրգուռէն	„	Գուռգուռէն
40	10	հաց ու ջուր	„	հաց ու զաստ
160	9	մուպալ	„	մուզալ
170	15	լոգի	„	չոգի

ԲՐԴՈՒՃ ՄԸ

ՎԱՆԱՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՆԳԻՐ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԵՆԷՆ

ԱՒԱԳ ՄԿՆԻԿ (1)

Աւագ մկնիկ խաթունի աչմաղ կը քաշէ վեր գլխուն կ'երթայ։

Հոմիւ կու գայ դէմ, կ'ասի.

— Խէր էլնի, Աւագ մկնիկ, էդա ա-լայով դո՞ր կ'երթաս։

— Խէր բարին վէրէդ էլնի, սիտի երթամ իրիկ անեմ։

— Գնա, Աստուած ռաստ բիրի։

Կ'երթայ կ'երթայ, բէրուրիկ կուղ այ դէմ. կ'ասի.

— Խէր էլնի, Աւագ մկնիկ, էդա ա-լայով դո՞ր կ'երթաս։

— Խէր բարին վէրէդ էլնի. կ'երթամ իրիկ անեմ։

— Գնա, Աստուած ռաստ բիրի։

---

(1) Սորա հեռուստրութիւնն է Մրկի Ի-Ի-ն ընուած հ-ա-լը որ Գօլայ պատուանք կը պատմեն Ի դրօսանս մանկանց։

Հմտ. Ս. Հայրապետ՝ Հերակլա
էջ 1-6

Կ'երթայ կ'երթայ, ծով կուգայ դէմ. կ'ասի.

— Խէր էլնի, Աւագ մինիկ, էդա ալայով դո՞ր կ'երթաս։

— Խէր բարին վէրէդ էլնի. կ'երթամ իրիկ անեմ։

— Գնա, Աստուած ռաստ բիրի։

Կ'երթայ կ'երթայ, ահագին սար կուգայ դէմ. կ'ասի.

— Խէր էլնի, Աւագ մինիկ, էդա ալայով դո՞ր կ'երթաս։

— Խէր բարին վէրէդ էլնի. կ'երթամ իրիկ անեմ։

— Գնա, Աստուած ռաստ բիրի։

Կ'երթայ կ'երթայ, մէկ շինարի ծառ կուգայ դէմ. կ'ասի.

— Խէր էլնի, Աւագ մինիկ, էդա ալայով դո՞ր կ'երթաս։

— Խէր բարին վէրէդ էլնի. կ'երթամ իրիկ անեմ։

— Գնա, Աստուած ռաստ բիրի։

Կ'երթայ կ'երթայ, անծեղ կրկչալէն կուգայ դէմ. կ'ասի.

— Խէր էլնի, Աւագ մինիկ, էդա ալայով դո՞ր կ'երթաս։

Խէր բարին վէրէդ էլնի. կ'երթամ իրիկ անեմ։

— Գնա, Աստուած ռաստ բիրի։

Կ'երթայ կ'երթայ, թագաւորու աղջիր կը թռնի կու գայ դէմ. կ'ասի.

— Խէր էլնի, Աւագ մինիկ, էգա ալայով գո՞ր կ'երթաս։

— Խէր բարին վէրէդ էլնի. կ'երթամ իրիկ անեմ։

— Արե ճիկ ա՛ռ։

— Ճիկ ինչո՞վ կը պահես։

— Կըսըցովս։

Մէյմէկու կը խաւնեն. կ'երթան, եօթն օր եօթն գիշեր խարանիս կ'անեն, կը վատակուեն։

Խարանիսից կը պռծնեն. ապէրը կ'երթայ քմէճ անելով դատում ճարել։ Աւագ մինիկն ի՞նկը մտնի թռնէր որ թռնէր վառի՝, թռնէր կոպե, մնացե մէջ թորուան վառւե էլե ճժտիկ վժտիկ։

Ապէրն իրիկուն ինկե տուն, տխե որ Աւագ մինիկն ինկե թռնէրն էլե ճժտիկ վժտիկ։ Գնացե կատար կորե, կրատոխիր տուե վէր գլխուն նստե։

Անծեղն իրե, տեսաւ, ասաց.

— Ապէրիկ, դու հէ՞ր կատարկորիկ, մեխրաչափիկ։

— Ո՛յ. Ապէրիկ կատարկորիկ մեխրաչափիկ, Աւագ մինիկն ինկե թռնէրն էլե ճժտիկ վժտիկ։

Անծեղն ի փեռուրներ կը թափի, կ'երթայ նստի վէր ծառին։

Ծառիկն ասաց.
— Անծղիկ, դու հէ՞ր թեւաթափիկ։
— Ո՛չ. Անծղիկ թեւաթափիկ, Ագլորիկ կատարկտրիկ մոխրաչափիկ, Աւաղ մինիկն ինկե թոնէրն էլե ճժտիկ վժտիկ։

Ծառ կոտրաւ ինկաւ վէր քարին։

Քարն ասաց.
— Ծառիկ, դու հէ՞ր ճղակուտոր։
— Ո՛չ. Ծառիկ ճղակուտոր, Անծղիկ թեւաթափիկ, Ագլորիկ կատարկտրիկ մոխրաչափիկ, Աւաղ մինիկն ինկե թոնէրն էլե ճժտիկ վժտիկ։

Քար գլորվաւ դնաց ինկաւ ծով։

Ծովն ասաց.
— Քարիկ, դու հէ՞ր գլոր մլոր։
— Ո՛չ. Քարիկ գլոր մլոր, Ծառիկ ճղակուտոր, Անծղիկ թեւաթափիկ, Ագլորիկ կատարկտրիկ մոխրաչափիկ, Աւաղ մինիկն ինկե թոնէրն էլե ճժտիկ վժտիկ։

Ծովն էր մէկէցմէկ բրորաւ։

Բէրբուրիկն ասաց.

— Ծովիկ, դու հէ՞ր բրոր մրոր։

— Ո՜չ. Ծովիկ բրոր մրոր, քարիկ գլոր մլոր, ծառիկ ճղակուտոր, Անծղիկ թեւաթափիկ, Աղլորիկ կատարկլորիկ մոխրաչափիկ, Աւաղ մկնիկն ինկե թոնէրն էլե ճժտիկ վժտիկ։

Բէրբուրիկն կթոցն իկարկ ոռին դնաց։

Հովիւն իրե գէմն, ասաց.

— Բէրբուրիկ, դու հէ՞ր կթոց ոռիկ։

— Ո՜չ. Բէրբուրիկ կթոց ոռիկ, Ծովիկ բրոր մրոր, քարիկ գլոր մլոր, ծառիկ ճղակուտոր, Անծղիկ թեւաթափիկ, Աղլորիկ կատարկլորիկ մոխրաչափիկ, Աւաղ մկնիկն ինկե թոնէրն էլե ճժտիկ վժտիկ։

Հովիւ որ լսեց, ոխչարն իթաղ, դնաց։ Մաքին մկկալոյ ինկաւ իտեւ, դառնուց իրե. Եօթ տակ պրտրտաւ ոխչրի բուլոր, պտրտրեց, ասաց.

«Վէր Աւաղ մլկան կողին.
«Վէր Աւաղ մլկան կողին.
«Վէր Աւաղ մլկան կողին։

ՎԵՐՋԱԲԱՆ

Կը հրաւիրեմ ընթերցողի ուշադրութիւնը այս վերջին Բրդուճին վրայ, որոյ նիւթը թէպէտ ըստ ինքեան չնչին, բայց բանահիւսութեան ճարտար ձեւը իւր յեղյեղումով և արուեստաւոր կապերով գեղեցիկ ու վայելուչ ոճ մը տուած է շարադրութեան, միանգամայն և ներդաշնակ։

Որոնք հանդիպած են այն հագներգութեան որ տպագրուած է արդէն երդարանաց մէջ.

«Եկէք տեսէք գի՞նչ կայր ծովուն,
«Որ նաւն ուռմամբ գայր».

դիտած են թէ մեւեւնոյն բաղմայեղանակ ոճն ունի այս Բրդուճն ալ. ինչպէս նաեւ բաւական շատ կայ այդ ոճով վրայ կամ հագներդ վանայ ժողովրդեան բերանը։ Յորոց մէկն է այն խաղը, որոյ սկսուածքն է

«Ո՞րն է կերեր՝ մեր էծ,
«Գէլն է կերեր մեր էծ»։

Կ'արժէ որ ընդհանուր հաւաքում մը չինուի այսպիսի խօսից և հիւսից, իրենց ընական կերպարանքով տպագրել տալով

զանոնք, որոց հարստութիւնը ինչպէս ինձ կը թուի, Վասպուրականի և Սիւնեաց գաւառի Հայոց մէջ առատ կայ։

Իրաւ է, որ Հայաստանի Հայք բառերու հնչմանց այլայլութիւն մը տուած են. զորօրինակ, մայր՝ մէր հնչելով. եղբայր՝ աղբէր, մարգարէ՝ մարգարա, անկաւ՝ ինկաւ, որոց մէջ կը տեսնուի այ՝ է ի. ե՝ ա ի. է՝ ա ի. ա՝ է ի փոխուած. և՝ ուրիշ շատ տառափոխութիւններ ալ ունին. բայց և այդ ալ լեզուի մը յատկութիւնն է։ Ունին բառեր ալ, որ ըստ մեծի մասին կրճատ կ'արտասանեն, բայց արմատները հարազատ կը պահպանեն. ըստ ծիս օրինակները շատ կան Սասունցի Դաւիթին և Բրբոնին մէջ։ Խօսք մը կազմելու համար բառերու ամենէն կարեւորմանն է բայն. դարձունելով ուշադրութիւն գաւառացւոց լեզուին վրայ, կը տեսնենք որ Բաղիշեցին այսպէս կը կազմէ կամ կը խոնարհէ բայն.

«Ես եմ շինէր եմ այս տունը».

«Դու ես կոտրէր ես մեր ծառը».

«Մուրճն էր տրէր էր հացը» և այլն։

Դաւրիզեցին այսպէս.

«Գնացիմ, գնաս, գնամ, գնամ». այսինքն՝ գնացի, գնաս, գնայ, գնայ։

Գ. արաբաղցին այսպէս.

«Գամ էմ, գամ էս, գամ է». այսինքն է, գամ, գաս, գայ. և այլն։

Մշեցիք՝ բայի հայցական խնդիրի ՀՆախդիրը մինչեւ անգամ յատկացուցչի վրան ալ չեն դանց ըներ դնել. — Օրինակ. «Զէս պապս մէ՞լ ֆլիս՞ վարշամէն...» կ'ըսէր Մշեցի մը Մշեցւոյ մը։

Ինչպէս բայերուն, նոյնպէս բառերուն հոլովիներն ալ այլ ինն են ծագումբդեան բերանը. զորօրինակ. եզակի բացառականներ դաւառացին էջ, ՈՒՋ յոգնականացուցիչ մասնիկներով կը կազմէ։ Օրինակ. աբնից, 'ի տանէ։ Ա.ստրծուց, յՍ.ստուծոյ։ Մարդուց, 'ի մարդոյ և այլն։ Մէկալ հոլովներն ևս այլափոխութիւն ունին։

Իսկ անցեալ դերբայի ձեւն ու նշանակութիւն տուող բառերը, կրաւորականն ու չէզոքը, գրեթէ մեծաւ մասամբ ՈՒ լծորդով կամ մասնիկով գործ կ'ածեն։ Օրինակ. պատկուկ. պատկած։ Յանուկ. ցանուած։ Հասուկ. հասունցած։ Բիծուկ. բիծաց. — սատկած — և։

Ունին գեղեցիկ ոճ գեղջման, աւելագրութեան, բակառութեան, կրկնութեան, և փոխարերութեան, համաձայն մեր գրական լեզուին։

Գաւառական լեզուի ոճերուն և բառերուն վրայ ընդարձակ դաղափար առնուլ ուզողը պէտք է ընթեռնու Մ. յաղ Նովելի երդարանի ակիզբն, նոյն երգոց հրատարակիչ գիտնական Գ. Գ. Հասիէրդեանցի հնարելից գրածները, որ թիֆլիսցւոց Հայերէն լեզուին վրայ քերականութիւն մ'ալ յօրինած է. գործ՝ արդարեւ հանճարեղ և խնամոտէր անձին. բայց ափսո՛ս, որ այնքան ընդհանրացած չէ Ղարաբաղի Հայ բանաստեղծաց մէջ։

Ի՞նչ փափագս եղած է որ բանաստէղծ ուշադրութիւն դարձուցեն Հայաստանի մէջ բնակած Հայոց ժողովրդական լեզուաց, և այն լեզուներով հրատարակեն վէպեր, արտախօսութիւններ և այլն. և այսպէսով սիրելի և ծանօթ կացուցանեն զանոնք գրագիտաց, որպէս զի նոցա ձեռքով հետզհետէ՝ ի կանոնաւոր գործածութիւն վերածին այն լեզուները. և ժամանակին մաշող ժանիքէն վերծանին ազգային գաղաւոր բանից և աւանդից մնացուածները, որոց արժէքը՝ կորսուելէն յետոյ կ'զգանք, զանոնք աւաղելու համար միայն։

8 x 2